ԱՓՍՈՒՄ, Միջ. *Որով ցաւ են յայտնում մի եղելութեան մասին*
ԱՓՍՈՍԱԼ, նբ. *Յաւ արտայայտել մի եղելութեան գլուխ չգալու մասին:*
ԱՓՍՈՍԱԼԻ, ան. *Ինչ բանի պէտք է ափսոսալ:*
ԱՓՍՈՍԱՆՔ, գ. *Ափսոսալը:*
ԱՓՐԻԿԱՅԻՆ
ԱՓՐԻԿԵԱՆ } ան. *Աֆրիկային յատուկ, վերաբերեալ:*
ԱՓՐԻԿԵՑԻ, ան. գ. *Աֆրիկայի բնիկ:*
ԱՓՐԻԿՈՒՇԻ, ան. գ. *Աֆրիկացի իգական սեռի:*
ԱՓՐՈՂԻՏԱԿԱՆ, ան. *Ափրոդիտէ աստուածուհուն՝ Վեներային յատուկ:*
ԱՓՑԻ, մկ. *Ափով:*

ԱՔԱՂԱՂ, գ. *Ընտանի հաւի արուն, արլոր:*
*** ԱՔԱՂԱՂՕՐԷՆ**, մկ. *Աքաղաղի պէս:*
+ ԱՔԱՆ ԱՆԵԼ, նբ. *Ուրիշի փողերն ուտել:*
+ ԱՔԱՆ-ՑԱՔԱՆ, ան. մկ. *Ցիրուցան, թափթփած:*
+ ԱՔԱՇ, գ. *Կաւէ լայնափոր աման:*
ԱՔԱՐ, գ. (Կենդ.) *Անտառահաւերի ցեղին պատկանող թռչուն մեծ կաքաւի նման:*
*** ԱՔԱՐՏԵԼ**, նբ. *Մեղաղբել:*
ԱՔԱՑԵԼ, ն. չք. *Աքացի տալ, խփել:*
ԱՔԱՑԻ, մկ. *Ոտքով զարնել, կից:*
+ ԱՔԵԼ, նբ. *Ուղարկել:*
ԱՔԵՄԵՆԵԱՆ, ան. *Աքեմենէսից սերած:*
+ ԱՔԻՍՏ, գ. (Կենդ.) *Կզաքիսների ցեղին պատկանող մսակեր կենդանի:*
+ ԱՔԼԱՊՈՊՈԶ, **ԱՔԼԱՊՈՒԶ**, S. *Գլխկոնձի:*
+ ԱՔԼՈՐ, **ԱՔԼԱՐ**, գ. *Աքաղաղ:*
+ ԱՔԼՈՐԱԹՈՒՓ, գ. *Խաղողի որթի մի տեսակ:*
ԱՔԼՈՐԱԽԵՂՆ, գ. *Խրուկ, խորոզակ:*
+ ԱՔԼՈՐԱԿԱՆՉ, գ. *Լուսաղէմին արլորի կանչելը, եւ կանչելու ժամանակը:*
+ ԱՔԼՈՐԱԿՈՒԻ, գ. *Աքլորների կոխ:*
+ ԱՔԼՈՐԱՃՈՒՑ, գ. *Ճուտ-արլոր:*
ԱՔԼՈՐԻ ԿՏՈՒՑ, գ. (Բուս.) *Ուտելի խոտ:*
ԱՔԼՈՐԱՆԱԼ, ք. *Գոռոզանալ, սնապարծել:*
ԱՔԼՈՐՈՒԿ, գ. *Անորոշ տեսակի բանջար:*
*** ԱՔՈՍԷԶ**, գ. *Մարմնի մասը երկու ազդրերի միջեւ:*
ԱՔՍՈՐ, գ. *Դատարանի վճռով կմ վարչակազմի կարգադրութեամբ բնակութեան տեղից իբրեւ պատիժ ուրիշ տեղ ջշելը:*
ԱՔՍՈՐԱԿԱՆ, ան. *Աքսորին յատուկ:*

<p>ԱՔՍՈՐԱՃԱՆԱՊԱՐՀ, գ. <i>Աքսոր տանող ճանապարհ, արտորաճամբայ:</i></p> <p>ԱՔՍՈՐԱՆՔ, գ. <i>Աքսորուելը:</i></p> <p>ԱՔՍՈՐԱՎԱՅՐ</p> <p>ԱՔՍՈՐԱՏԵՂԻ գ. <i>Այն տեղը, ուր մեկը արտորում է:</i></p> <p>ԱՔՍՈՐԵԱԼ, ան. <i>Աքսորուած:</i></p>	<p>ԱՔՍՈՐԵԼ, նբ. <i>Աքսոր ուղարկել:</i></p> <p>1. ԱՔՑԱՆ, գ. <i>Գամ բռնելու՝ քաշելու երկաթե գործիք:</i></p> <p>+ 2. ԱՔՑԱՆ, գ. <i>Ուտքով հարուած:</i></p> <p>ԱՔՑԱՆԵԼ, բ. <i>Աքցանով բռնել:</i></p> <p>+ ԱՔՑԱՏՐԱՔ, ան. <i>Աքացի հարուածներով տրաքուած:</i></p>
--	---

Բ, Բ

Բ. բ. Բեն, 1. *Հայերեն այբուբենի երկրորդ տառը:* 2. *Շրթնային փակ նուրբ բաղաձայն:* 3. *Թուարկութեան մէջ՝ երկրորդ:*

ԲԱ, շղկ. 1. *Արդարեւ, անշուշտ:* 2. *Միջ. փխկ. Ջարմանքի արտայայտութիւն:*

ԲԱԲ, գ. *Անձանօթ բոյսի անուն:*

ԲԱԲԱՆ, գ. *Բաբախոց: Սրտի տրոփում:*

ԲԱԲԱՆԱԳԻՐ, գ. *Սրտագիր:*

ԲԱԲԱՆԵԼ, նբ. *Սրտի յաճախակի գարնել:*

ԲԱԲԱՆԻՒՆ } գ. *Բաբախելը բաբախելու գործողութիւնը:*

ԲԱԲԱՆՈՒՄ }

ԲԱԲԱՆՈՒՆ, ան. *Բաբախող:*

ԲԱԲԱՆ, գ. *Հին ժամանակուայ պատերազմական գործիք:*

ԲԱԲԵԼԱԿԱՆ, ան. *Բաբելոնին յատուկ վերաբերեալ:*

ԲԱԲԵԼԱՑԻ,

ԲԱԲԵԼՈՆԱՑԻ, ան. գ. *Բաբելոնի բնակիչ՝ ժողովուրդ:*

ԲԱԲԵԼՈՆԵԱՆ, ան. *Բաբելական:*

ԲԱ՛ԲԵ, Միջ. *Որ արտայայտում է գարմանք:*

ԲԱ՛ԲՕ, Միջ. *Բա՛բէ, ափսո՛ւ, աւա՛ղ. ցաւի եւ շուարմունքի բացազանչութիւն:*

* **1. ԲԱԳ**, գ. *Բաժին, մասն:*

* **2. ԲԱԳ**, ան. *Կից, միասին հաւաքուած:*

* **ԲԱԳԱՄԻՏ**, ան. *Փոփոխամիտ:*

ԲԱԳԱՐԱՆ, գ. (Կրօն.) *Բագերի՝ Աստուածների կացարան: Մեհեան:*

ԲԱԳԻՆ, գ. *Ձոնի սեղան, զոհարան:*

* **ԲԱԳԱՍԵԼ**, ան. *Բագիններ սիրող:*

ԲԱ՛Դ, գ. (Կենդ.) 1. *Մաշկոտն: Ջրային հաւ:* 2. *Փոխ. Հետաքրքրութիւն շարժող սուտ լուր:*

+ ԲԱ՛ԴԱԵԼ, գ. *Բադի նման լող տալը:*

ԲԱ՛ԴԱԿ, գ. *Թթի՝ խաղողի եւ այլ պտուղների հիւթ:*

ԲԱ՛ԴԻԿ, գ. *Փոքր բադ:*

+ ԲԱՉԱԶ, (Արաբ.) գ. *Կտաւեղենի՝ գործուածքների վաճառական:*

ԲԱՉԱԶՆՈՑ, գ. *Այն փողոցը կմ շուկայի այն մասը, որտեղ խմբուած են բազագների խանութները:*

ԲԱՉԱԶՈՒԹԻՒՆ, գ. *Բազագ լինելը:*

ԲԱՉԱԼ՛Տ, գ. (Լատ.-ֆրն.) (Հանք.) *Չանազան հանքերից խառնուած խիստ կարծր եւ ծանր երկաթաքար՝ բասանաքար:*

ԲԱՉԱԼ՛ՏԱՑԻՆ, ան. *Բազալ՝տին յատուկ: Երկաթաքարային:*

ԲԱՉԵ, գ. (Կենդ.) *Գիշատիչ թռչունների կարգին եւ բազէների ճեղից (Falconidae) թռչուն:*

ԲԱՉԷԿԻՐ, ան. գ. *Նա որ որսի ժամանակ բազէ է կրում ձեռքերի վրայ:*

ԲԱԶԻԼԻԿ, գ. (Յուն.) (Ճարտրպ.) Քրիստոնեական սինագարդ տաճար:
+ ԲԱԶԿԱԹԱՆ, գ. Ուտելիք, որ պատրաստուում է (թթուեցրած) թանից:
ԲԱԶԿԱԹՈՒՒ, գ. Բազկի ցողուններից թթու:
ԲԱԶԿԱԹՈՒ, գ. Աթոռ, որ բացի թիկունքի յենարանից ունի նաև երկու կողմից յենարաններ բազուկների (ձեռքերի) համար:
ԲԱԶԿԱԿԱՆ, ած. գ. Կտորեղենից շինուած կապ:
ԲԱԶԿԱԿԱՆՊ, գ. Բազպան:
*** ԲԱԶԿԱՍՐՅՈՒԹԻՒՆ**, գ. Մրցութիւն բազուկներով:
ԲԱԶԿԱՅԻՆ, ած. Բազուկներին յատուկ:
*** ԲԱԶԿԱՇԱՐԺ**, գ. Բազուկները շարժելը (լողալիս):
+ ԲԱԶԿԱՊ, գ. Բազուկների կապ:
ԲԱԶԿԱՊԱՆԱԿ, գ. Բազպան:
ԲԱԶԿԱՏԱՐԱԾ, ած. մկ. Բազուկները տարածած:
ԲԱԶԿԱՐԶԱԿ, ած. Բազուկներ՝ ճիւղեր արձակած:
ԲԱԶԿԱՏԵՂ, գ. Բազուկները հենելու տեղ:
ԲԱԶԿԱՑԻ, մկ. Բազուկով, թելով:
ԲԱԶԿԵՐԱԿ, գ. Զարկերակի կմ շնչերակի հարուածը՝ զարկը:
ԲԱԶԿԻԿ, **ԲԱԶԿՈՒԿ**, գ. Վայրի բազուկ:
ԲԱԶԿՈՍԿԻ, գ. (Կազմախ.) Բազուկի երկայն ու հաստ ոսկրը:
ԲԱԶԿՈՒՐԱՐ, գ. (Եկեղ.) Ուրար:
ԲԱԶՄԱՍՅՐ, ած. Շատ այրեր՝ քարանձաւներ ունեցող:
ԲԱԶՄԱԲԱԺԻՆ, ած. Շատ մասերի բաժանուած:
ԲԱԶՄԱԲԱՐՁ, ած. Շատ բաղձալի:
ԲԱԶՄԱԲԱՆ, ած. Շատախօս:
ԲԱԶՄԱԲԱՆԵԼ, չբ. Շատ խօսել, երկարաբանել:

ԲԱԶՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմաբան լինելը:
ԲԱԶՄԱԲԱՆՈՒԿ, ած. Շատ բանուկ:
ԲԱԶՄԱԲԱՇԽ, ած. 1. Շատ տեղ կմ շատերին բաշխուած: 2. ած. գ. (Մաթ.) Քանակ՝ բաղկացած շատ անդամներից:
ԲԱԶՄԱԲԱՆ, ած. Որտեղ բառեր շատ կան:
ԲԱԶՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմաբան լինելը:
ԲԱԶՄԱԲԱՐԲԱՆ, ած. Շատ բարբառներ ունեցող:
ԲԱԶՄԱԲԱՐԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմաբարբառ լինելը:
ԲԱԶՄԱԲԱՐՈՅ, ած. Զանազան բարքերի՝ բնատրույթեան տեր:
*** ԲԱԶՄԱԲԵՈՆ**, ած. Բեռը շատ:
ԲԱԶՄԱԲԵՐ, ած. Բազմաբեղուն:
ԲԱԶՄԱԲԵՐԱՆ, ած. Շատ բերաններ ունեցող:
ԲԱԶՄԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Բազմաբեր լինելը:
ԲԱԶՄԱԲԻԾ, ած Շատ բծեր ունեցող:
ԲԱԶՄԱԲԻՐ, ած. Շատ բիրաւորներով, բազմաթիւ:
ԲԱԶՄԱԲԱԿ, ած. Շատ բնակչութիւն ունեցող:
ԲԱԶՄԱԲԱԿԱՆ, ած. Շատ բնակարաններ ունեցող:
*** ԲԱԶՄԱԲՈՂԲՈՋ**, ած. Շատ բողբոջներ ունեցող:
ԲԱԶՄԱԲՈՅԼ, ած. Շատ բոյլեր՝ խումբեր ունեցող:
*** ԲԱԶՄԱԲՈՅԾ**, ած. Շատ սնուող:
ԲԱԶՄԱԲՈՅՍ, ած. Որտեղ շատ բոյսեր կան:
ԲԱԶՄԱԲՈՅՐ, ած. Շատ հոտաւէտ:
*** ԲԱԶՄԱԲՈՐԲՈՔ**, ած. Շատ բորբոքուած:
ԲԱԶՄԱԲՈՅ, ած. Շատ բոց ունեցող:
ԲԱԶՄԱԲՈՒՆ, ած. Առատ բխող:

ԲԱԶՄԱԲՁԻՋ, ան. Շատ բջիջներ ունեցող:

* **ԲԱԶՄԱԲՈՒՐԵԱՆ**, ան. Շատ տեսակ բուրմունքներ ունեցող, շատ հոտաւէտ, բազմաբոյր:

ԲԱԶՄԱԳԱԳԱԹ, ան. Շատ զագաթներ ունեցող:

* **ԲԱԶՄԱԳԱՀՈՒԹԻՒՆ**, գ. Անչափ ա-գահութիւն, անյագութիւն:

ԲԱԶՄԱԳԱՆՁ, ան. Շատ գանձ ունեցող:

ԲԱԶՄԱԳԱՒԱՌ, ան. Շատ գաւառներ ունեցող:

ԲԱԶՄԱԳԵՂ, ան. Շատ զեղեցիկ:

ԲԱԶՄԱԳԷՏ, ան. Շատ բան գիտցող:

ԲԱԶՄԱԳԹՈՒԹԻՒՆ, գ. Բազմազոյթ լինելը:

ԲԱԶՄԱԳԻՆ,
ԲԱԶՄԱԳՆԻ, ան. Մեծ գին ունեցող, թանկագին:

* **ԲԱԶՄԱԳԻՐ**, ան. Շատ գրող:

ԲԱԶՄԱԳԻՏԱԿՈՒԹԻՒՆ, գ. Բազմա-գիտակ լինելը, շատ գիտելիքներ ունե-նալը:

ԲԱԶՄԱԳԻՏ, ան. Ինչ որ շատ է գտնը-տում:

ԲԱԶՄԱԳԼԽԱՆԻ } ան. Շատ գլուխներ
ԲԱԶՄԱԳԼՈՒՒՆ } ունեցող:

ԲԱԶՄԱԳՆԱՅ, ան. Որտեղով շատ գնացող եկող կայ, բանուկ:

ԲԱԶՄԱԳՈՅՆ, ան. Շատ գոյներ ունե-ցող:

ԲԱԶՄԱԳՈՉ, ան. Մեծ գոչիւնով:

* **ԲԱԶՄԱԳՈՎԵՍՏ**, ան. Շատ գովուած՝ հռչակուած:

* **ԲԱԶՄԱԳՈՐԾ**, ան. Շատ գործ կատա-րող:

ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ, Բազմա-գործառոյթի ծառայող:

ԲԱԶՄԱԳՈՐՈՎ, ան. Շատ գորով՝ սէր ունեցող:

ԲԱԶՄԱԳՈՒԹ, ան. Գուրջ շատ, զթա-ռատ:

ԲԱԶՄԱԳՈՒՄԱՐ, ան. Որտեղ գու-մարուած է բազմութիւն:

ԲԱԶՄԱԳՈՒՆԱԿ, ան. Բազմագոյն:

ԲԱԶՄԱԳՈՒՆԴ, ան. Մեծ գունդ կազմող:

ԲԱԶՄԱԳՈՒՆԻ, ան. Բազմատեսակ, զանազան, պէսպէս:

ԲԱԶՄԱՂԱՐԵԱՅ,
ԲԱԶՄԱՂԵԱՆ, ան. Շատ դարեր գոյութիւն ունեցող:

* **ԲԱԶՄԱՂԱՂՈՒԹԻՒՆ**, գ. Բազմա-դարձ լինելը:

ԲԱԶՄԱՂԷՋ, ան. Շատ դիզուած:

ԲԱԶՄԱՂԷՄ, ան. Շատ դէմքեր ունեցող:

* **ԲԱԶՄԱՂԻՄԱԿ** } ան. մկ. Զանազան
ԲԱԶՄԱՂԻՄԻ } կերպ:

ԲԱԶՄԱՂԻՄՈՒԹԻՒՆ, գ. Բազմադէմ եւ բազմադիմի լինելը:

ԲԱԶՄԱՂՈՒՌ, ան. Շատ դրներ ունե-ցող:

ԲԱԶՄԱՂՈՒՍԳ, ան. Շատ դրուագներ ունեցող:

ԲԱԶՄԱՁԱՆ, ան. Զանազան տեսակ:

ԲԱԶՄԱՁԱՆԵԼ, նբ. Բազմազան դարձ-նել:

ԲԱԶՄԱՁԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմազան լինելը:

ԲԱԶՄԱՁԱՂ, ան. Շատ զարդարուն՝ շքեղ:

ԲԱԶՄԱՁԱՂՈՒԹԻՒՆ, գ. Բազմա-զարդ լինելը:

ԲԱԶՄԱՁԱԻԱԿ, ան. Շատ զուակ ունե-ցող:

ԲԱԶՄԱՁԱԻԱԿՈՒԹԻՒՆ, գ. Բազմա-զուակ լինելը:

ԲԱԶՄԱՁԲԱՂ, ան. Շատ զբաղեցուած:

ԲԱԶՄԱՁԲԱՂՈՒԹԻՒՆ, գ. Բազմազբաղ լինելը:

ԲԱԶՄԱՁԳ, ան. Շատ ազգեր պարունա-կող:

* **ԲԱԶՄԱՁԳԵԱՆ**, ան. Շատ ազգերի

<p>վերաբերեալ: ԲԱԶՄԱԶԳԻ, ան. Տեսակ-տեսակ: ԲԱԶՄԱԶԳՈՒԹԻՒՆ, գ. Շատ ազգեր պարունակելը: ԲԱԶՄԱԶԵՂ ԲԱԶՄԱԶԵՂՈՒՆ } ան. Յորդանաստ, լիուլի: ԲԱԶՄԱԶԻՆՈՒՈՐ, ան. Մեծաթի զին- ուորներով: ԲԱԶՄԱԶՆ, ան. Բազմազգի: ԲԱԶՄԱԶՈՒԱՐՃ, ան. Շատ գուարճալի: * ԲԱԶՄԱԹԱՄԱՆԱԶ, ան. Շատ հոգս պատճառող: ԲԱԶՄԱԹՓՈՒԱԾ, ան. Շատ թափ- ուած: ԲԱԶՄԱԹԵԼ, ան. Բազմալար: ԲԱԶՄԱԹԵՄԱՅԻՆ, ան. Շատ թեմա- ներից կազմուած: ԲԱԶՄԱԹԵՐԹ, ան. 1. Շատ թերթերից բաղկացած: 2. (Բուս.) Շատ թերթիկներ ունեցող: ԲԱԶՄԱԹԻԻ, ան. Թուով շատ: ԲԱԶՄԱԹԻՐ, ան. Շատ սխալ: * ԲԱԶՄԱԹՈՅՆ, ան. Շատ թոյն ունե- ցող: ԲԱԶՄԱՏԱՄԱՆԱԿԵԱՅ, ան. Երկար ժամանակ ապրող: ԲԱԶՄԱՏԱՆՔ, ան. Բազում ժանիք ունեցող: ԲԱԶՄԱՏԱՈՒՆԱԳ, ան. Շատ ժառանգ- ներ ունեցող: ԲԱԶՄԱՏԻՐ, ան. Աշխոյժ: ԲԱԶՄԱՏԻՈՐ, ան. Որտեղ շատ ժխոր ` աղմուկ կայ: ԲԱԶՄԱՏՈՂՈՎ, ան. Որտեղ մեծ բազմութիւն է ժողովուած: ԲԱԶՄԱՏՈՂՈՎՈՒՐ, ան. Շատ ազ- գեր ունեցող: ԲԱԶՄԱՆԱՐ, ան. Շատ լարեր ունեցող: ԲԱԶՄԱԼԵԶՈՒ, ան. Որտեղ շատ լե- գուներ կան կմ խօսուում են:</p>	<p>ԲԱԶՄԱԼԵԶՈՒԵԱՆ, ան. Բազմալեզու: ԲԱԶՄԱԼԵԶՈՒԹԻՒՆ, գ. Բազմալեզու լինելը: ԲԱԶՄԱԼԻ, ան. Որտեղ շատ ալիքներ կան: ԲԱԶՄԱԼՈՅՍ, ան. Լոյսը առատ: ԲԱԶՄԱԼՈՒՐ, ան. Շատ բան լսող: * ԲԱԶՄԱՄԱԶ, ան. Երածշտական շատ խազեր պարունակող: ԲԱԶՄԱՄԱՂ, ան. Որտեղ շատ խաղեր են կատարուում: ԲԱԶՄԱՄԱՈՒՆ, ան. Բազմազան: ԲԱԶՄԱՄԱՐԱՄ, ան. Շատ խարդախ: ԲԱԶՄԱՄԻՏ, ան. Շատ եւ խիտ: ԲԱԶՄԱՄԼԱՄ, ան. Շատ խնամք ունե- ցող: ԲԱԶՄԱՄՈՂԵՄ, ան. Շատ խոհեմ: ԲԱԶՄԱՄՈՂԽՈՂ, ան. Սպանիչ, ջարդ տուող: ԲԱԶՄԱՄՈՂՈՎԱԿ, ան. Շատ խողո- վակներ ունեցող: ԲԱԶՄԱՄՈՅՁ, ան. Շատ խուզարկող: ԲԱԶՄԱՄՈՏ, ան. Որտեղ խոտը առատ է: ԲԱԶՄԱՄՈՐԱՆ, ան. Շատ խորաններ ունեցող: ԲԱԶՄԱՄՈՐՀՈՒՐ, ան. Մեծախոր- հուրդ: ԲԱԶՄԱՄՈՐՇ, ան. Շատ խորշեր ունե- ցող: ԲԱԶՄԱՄՈՐՇԱԿ, ան. Շատ խորշակ բերող: ԲԱԶՄԱՄՈՐՏԻԿ, ան. Առատ կերա- կուր, ճոխ: ԲԱԶՄԱՄՈՑ, ան. Շատ խոցոտող: * ԲԱԶՄԱՄՈՒՎ, ան. Շատ յուզուած: ԲԱԶՄԱՄՕՍ, S. Շատախօս: ԲԱԶՄԱՄՕՍՈՒՆ, ան. Շատ բան ասող, բազմաբովանդակ: ԲԱԶՄԱՄԱԼ, ան. Շատ ծալքեր ունեցող: ԲԱԶՄԱՄԱՄ,</p>
---	--

ԲԱԶՄԱԾԱԽՍ, ան. Շատ ծախս պահանջող:

* **ԲԱԶՄԱԾԱԽՈՒԹԻՒՆ**, գ. Բազմա-ծախս լինելը:

ԲԱԶՄԱԾԱՂԻԿ, ան. Շատ ծաղիկ ունեցող:

ԲԱԶՄԱԾԱՌԱՅ, ան. Շատ ծառաներ ունեցող:

* **ԲԱԶՄԱԾԱԻԱԼ**, ան. Շատ ծառայում սփռում:

ԲԱԶՄԱԾԻՆ, ան. գ. Շատ երեխայ ծնող:

* **ԲԱԶՄԱԾԻՐ**, ան. Մեծ ծիր՝ շրջան կատարող:

ԲԱԶՄԱՇՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմածին լինելը:

ԲԱԶՄԱՇՆՈՒՆՂ, ան. Բազմածին:

ԲԱԶՄԱԿԱԼ, գ. Մոմի քիթն առնելու մկրատ:

* **ԲԱԶՄԱԿԱՍ**, ան. Շատ բան կամեցող:

ԲԱԶՄԱԿԱՄԱՐ, ան. Շատ կամարներ ունեցող:

ԲԱԶՄԱԿԱՆ, գ. Խրախճան:

* **ԲԱԶՄԱԿԱՆԱԿԻՑ**, ան. գ. Բազմակած մասնակից՝ սեղանակից:

* **ԲԱԶՄԱԿԱՊ**, ան. Շատ կապեր ունեցող:

ԲԱԶՄԱԿԱՌՅՅ, ան. Շատ կառոյցներ ունեցող:

ԲԱԶՄԱԿԱՍԱՐ, ան. Ամէն բանով կատարելալ:

ԲԱԶՄԱԿԱՐՇ, ան. Շատ կարծիքներ ունեցող:

ԲԱԶՄԱԿԱՐՕՏ, ան. Շատ բանի կարօտ:

ԲԱԶՄԱԿԵԱՅ, Տ. Երկայնակեաց:

ԲԱԶՄԱԿԵՆՏՐՈՆ, ան. Շատ կենտրոններ ունեցող:

ԲԱԶՄԱԿԵՆՑԱՂ, ան. Տարբեր կեանք վարող:

ԲԱԶՄԱԿԵՐ, Տ. Շատակեր:

ԲԱԶՄԱԿԵՐՊ, ան. Չանազան կերպի:

ԲԱԶՄԱԿԵՐՊԱՐԱՆ, ան. Տ. Բազմա-

կերպ:

ԲԱԶՄԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ, գ. Շատ կերտը-ումածք ունեցող:

* **ԲԱԶՄԱԿԵՑԻԿ**, ան. Շատ ապրող, երկայնակեաց:

ԲԱԶՄԱԿԷՏ, գ. Երեք կմ աւելի միջակէտ գրուածքի կմ տպագրութեան մէջ:

ԲԱԶՄԱԿԻ } ան. Շատ անգամ՝ յա-
1. **ԲԱԶՄԱԿԻՆ** } ան. Շատ անգամ՝ յա-
ճախակի:

2. ԲԱԶՄԱԿԻՆ, ան. Մի քանի կին ունեցող:

ԲԱԶՄԱԿԻՐՃ, ան. Բազմաթիւ կիրճեր ունեցող:

ԲԱԶՄԱԿՂՁԻ, ան. Շատ կղզիներ ունեցող:

ԲԱԶՄԱԿՆՃԻՌ, ան. Շատ կնճիռներ ունեցող:

* **1. ԲԱԶՄԱԿՆՈՒԹԻՒՆ**, գ. Շատ աչքեր ունենալը:

2. ԲԱԶՄԱԿՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմակին լինելը:

* **ԲԱԶՄԱԿՇԻՌ**, ան. Ծանրակշիռ:

ԲԱԶՄԱԿՈՂՄ, ան. (Երկրաչ.) Շատ (4-ից աւելի) կողմ եւ անկիւն ունեցող:

ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ, ան. Շատ կողմերից:

ԲԱԶՄԱԿՈՅՏ, ան. Շատ կուտակում:

ԲԱԶՄԱԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ, ան. Բազմաթիւ կուտակութիւններ ունեցող:

ԲԱԶՄԱՀԱԶԱՐ, ան. Շատ հազարաւորներից բաղկացած:

ԲԱԶՄԱՀԱՃՈՅ, ան. Շատ հաճելի:

ԲԱԶՄԱՀԱՍ, ան. Շատ համեր ունեցող:

ԲԱԶՄԱՀԱՍԱՐ, ան. Բազմաթիւ, բազմատեսակ:

ԲԱԶՄԱՀԱՍԲԱՐ, ան. Մեծ պաշար պարունակող:

ԲԱԶՄԱՀԱՍԲԱԻ, ան. Շատ համբաւում:

ԲԱԶՄԱՀԱՍԲԵՐ, ան. Շատ համբերող:

ԲԱԶՄԱՀԱՆՂԵՍ, ան. Շատ հանդիսա-

ցած:
ԲԱԶՄԱՀԱՆՃԱՐ, ան. Շատ հանճարեղ:
ԲԱԶՄԱՀԱՏՈՐ, ան. Շատ հատորներինց
 բաղկացած:
ԲԱԶՄԱՀԱՐԻՐ, ան. Հարիւրաւոր:
ԲԱԶՄԱՀԱՐԿԻ, ան. Շատ մեծարան-
 քով:
ԲԱԶՄԱՀԱՐՈՒՍՏ, ան. Շատ փարթաւ,
 շատ հարուստ:
ԲԱԶՄԱՀԱՒԱՔ, ան. Շատ քան հաւա-
 քող ղիզող:
ԲԱԶՄԱՀԵՐ, ան. Գլխին շատ մազեր
 ունեցող:
ԲԱԶՄԱՀԵՐԹ, ան. Մի քանի հերթի:
ԲԱԶՄԱՀԻՒՍ, ան. Շատ հիւսուած:
ԲԱԶՄԱՀՍՈՒՏ, ան. Շատ հմուտ:
ԲԱԶՄԱՀՍՏՈՒԹԻՒՆ, գ. Բազմահմուտ
 լինելը:
ԲԱԶՄԱՀՆԱՐ, ան. Շատ հնարագէտ:
ԲԱԶՄԱՀՆՁԻՒՆ, ան. Շատ հնչիւններ
 ունեցող:
 ԲԱԶՄԱՀՈԳ } ան. Շատ հոգսեր ունե-
 ԲԱԶՄԱՀՈԳՍ } ցող:
ԲԱԶՄԱՀՈԳՈՒԹԻՒՆ, գ. Բազմահոգս
 լինելը:
ԲԱԶՄԱՀՈՂՈՎ, ան. Շատ հողովուղ:
 Բազմափոփոխ:
ԲԱԶՄԱՀՈՇ, ան. Խիստ հոծ:
ԲԱԶՄԱՀՈՅԼ, ան. Մեծ խումբ կազմող:
*** ԲԱԶՄԱՀՈՒԺԿՈՒ**, ան. Շատ հուժկու:
ԲԱԶՄԱՀՈՒՋ, ան. Առատ հունձք
 ունեցող:
*** ԲԱԶՄԱՀՈՒՋ**, ան. Շատ հնչող:
ԲԱԶՄԱՀՈՉԱԿ, ան. Շատ հոչակուած:
ԲԱԶՄԱՀԱՅՆ, ան. 1. Մեծ ձայնով:
 2. (Երաժ.) Մի քանի տարբեր ձայներով
 երգուող:
ԲԱԶՄԱՀԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմաձայն
 լինելը:
ԲԱԶՄԱՀԵԻ, ան. Շատ ձեւեր ունեցող:
ԲԱԶՄԱՀԻՐ(Ք), ան. Շատ ձիրքեր ունե-
 ցող

ԲԱԶՄԱՂԱՂԱԿ, ան. Աղմկալի, բազմա-
 ժխոր:
ԲԱԶՄԱՂԵՏ, ան. Շատ աղէտներ կրող:
ԲԱԶՄԱՂԻ, ան. Բազմալար:
ԲԱԶՄԱՃԱՃԱՆՉ, ան. Շատ ճաճանչա-
 տը
*** ԲԱԶՄԱՃԱՌ**, ան. Շատ ճառող:
ԲԱԶՄԱՃԱՌԱԳԱՅԹ, ան. Շատ ճառա-
 զայթ ունեցող:
*** ԲԱԶՄԱՃԻՂ**, ան. Շատ ճիւղեր ունե-
 ցող:
ԲԱԶՄԱՃՈՒՅ, ան. Շատ ճոխ:
*** ԲԱԶՄԱՍԱԳԻԼ**, ան. Շատ մագիլներ
 ունեցող:
*** ԲԱԶՄԱՍԱՆԿ**, ան. Շատ խորամանկ:
ԲԱԶՄԱՍԱՆՈՒԿ, ան. Շատ մանուկներ
 ունեցող:
ԲԱԶՄԱՍԱՍԼ, ան. Շատ մասեր ունե-
 ցող:
 ԲԱԶՄԱՍԱՍՆԱԲԱՐ } մկ. Շատ մասե-
 ԲԱԶՄԱՍԱՍՆԱՊԷՍ } րով:
ԲԱԶՄԱՍԱՍՆԵԱՅ, ան. Բազմամասն:
ԲԱԶՄԱՍԱՍՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմա-
 մասն լինելը:
ԲԱԶՄԱՍԱՐԴ, ան. Որտեղ շատ մարդ
 կայ:
*** ԲԱԶՄԱՍԱՐՏ**, ան. 1. Շատ պա-
 տերազմներ մղող: 2. Մի շարք ձեւերից
 մարզական մրցում:
ԲԱԶՄԱՍԱՐՏԱՀՐԱԲԵՐ, ան. Բազում
 մարտափառներ ունեցող:
ԲԱԶՄԱՍԲՈՒՅ, ան. Որտեղ մեծ ամբոյս՝
 բազմութիւն կայ:
ԲԱԶՄԱՍԵՇԱՐ, ան. Շատ պատուի
 արժանի:
ԲԱԶՄԱՍԵՂ, ան. Շատ մեղաւոր:
ԲԱԶՄԱՍԹԵՐ(Ք), ան. Շատ մթերք
 ունեցող:
ԲԱԶՄԱՍԻԼԻՈՆ, ան. Շատ միլիոններ:
ԲԱԶՄԱՍԻՍ, ան. Միսը շատ:
ԲԱԶՄԱՍԻՏ, ան. Շատ մտացի:
ԲԱԶՄԱՍՂՈՆ, ան. Շատ մղոններ ընդ-

<p>գրկող: ԲԱԶՄԱՍՇԱԿՈՒԹԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմամշակող լինելը: ԲԱԶՄԱՍՈՒՄԻՆ, ած. Շատ ամուսին ունեցող: ԲԱԶՄԱՍՈՒՄՆՈՒԹԻՒՆ, գ. Շատ անգամ ամուսնանալը: ԲԱԶՄԱՅԱՂԹ, ած. Շատ յաղթութիւններ տարած: ԲԱԶՄԱՅԱՂԱՐ, ած. Շատ զարդարած: ԲԱԶՄԱՅԱՐԿ, ած. Շատ յարկեր ունեցող: ԲԱԶՄԱՅԱՐՄԱՐ, ած. Շատ յարմարութիւններ ունեցող: ԲԱԶՄԱԵՂԱՆԱԿ, ած. Շատ կերպ, տարբեր եղանակ ունեցող: ԲԱԶՄԱՀՈՒՄ, ած. Շատ եւ զանազան: ԲԱԶՄԱՅՕՂ, ած. Շատ յօդեր՝ խաղեր ունեցող: ԲԱԶՄԱՆԱԼ, չբ. Շատանայ, թուով աւելանայ: ԲԱԶՄԱՆԱՄՍ, ած. Շատ նախատելի: ԲԱԶՄԱՆԳԱՄԵՍՑ, ած. Մէկից աւելի անգամ գործածութեան համար նախատեսած: ԲԱԶՄԱՆԴԱՄ, ած. Շատ անդամներ ունեցող: ԲԱԶՄԱՆԴԱՍՈՒԹԻՒՆ, գ. 1. Բազմանդամ լինելը: 2. (Մաթ.) Քանակի բազմանդամ լինալը: ԲԱԶՄԱՆԻՇ, ած. Շատ թուանշաններից կազմուած: ԲԱԶՄԱՆԻՍ, ած. (Երկրաչ.) Հաստատուն մարմին: ԲԱԶՄԱՆԿԱՐ, ած. Շատ նկարներով: ԲԱԶՄԱՆԿԻՆ, ած. Շատ անկիւններ ունեցող: ԲԱԶՄԱՆԿԻՆԻ, գ. (Երկրաչ.) Շատ (սովորաբար 4-ից աւելի) անկիւն ունեցող: ԲԱԶՄԱՆՇԱՆ, ած. 1. Շատ նշաններ</p>	<p>ունեցող: 2. (Մաթ.) Մի քանի նշան ունեցող: ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿ, ած. Շատ բան նշանակող: ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿԷՏ, ած. Շատ նշանակէտեր ունեցող: ԲԱԶՄԱՆՈՒԱԳ, ած. Շատ նուագներ պարունակող: * ԲԱԶՄԱՆՈՒԱՃ, ած. Շատերին նուաճող: * ԲԱԶՄԱՆՈՒԷՐ, ած. Շատ նուէրներ պարունակող: ԲԱԶՄԱՆՈՒՆ, ած. Շատ անուններ ունեցող: ԲԱԶՄԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմանուն լինելը: ԲԱԶՄԱՇԱՀ, ած. Որտեղ շահ՝ օգուտ շատ կայ: ԲԱԶՄԱՇԱՂԱՓ } ած. Շատ շա- ԲԱԶՄԱՇԱՂԱՓԱՆԻ } դափներ ունեցող: ԲԱԶՄԱՇԱՌԱԻՂ, ած. Շատ շատաւիղներ ունեցող: * ԲԱԶՄԱՇԱՐ, ած. Շատ շարքեր ունեցող: ԲԱԶՄԱՇԱՐԱԻ, ած. Շարաւր՝ թարախը շատ: ԲԱԶՄԱՇԱՐԺ, ած. Շատ շարժուող: * ԲԱԶՄԱՇԱԻՂ, ած. Շատ շաւիղներ ունեցող: ԲԱԶՄԱՇԵՇՏ, ած. Շատ շէշտեր ունեցող: ԲԱԶՄԱՇԽԱՏ, ած. Շատ աշխատանք պահանջող: ԲԱԶՄԱՇԱՈՂՀ, ած. Շատ շնորհող, շնորհատու: Շատ շնորհներ ունեցող: ԲԱԶՄԱՇՈՂ, ած. Շատ շողշողուն: * ԲԱԶՄԱՇՈՒՐԹՆ, ած. Բազմալեզու: * ԲԱԶՄԱՇՈՒՔ, ած. Մեծաշուք: ԲԱԶՄԱՇՐԶԻԿ, ած. Շատ տեղ շրջած: ԲԱԶՄԱՇՓՈԹ, ած. Շատ շփոթ, խառն: ԲԱԶՄԱՈՒՈՐՏ, ած. Շատ ոլորտներ ունեցող:</p>
--	---

ԲԱԶՄԱԶԱՐ, ան. Շատ չարիքներ բերող:

ԲԱԶՄԱԶԱՐԶԱՐ, ան. Շատ չարչարուած չարչարանքներ կրած:

* **ԲԱԶՄԱԶՍՓ**, ան. Մեծ չափով:
ԲԱԶՄԱԶԵԱՅ } ան. Շատ աչքեր ունեցող:
ԲԱԶՄԱԶԵԱՆ }

* **ԲԱԶՄԱՊԱՀԱՆՋ**, ան. Շատ պահանջող:

ԲԱԶՄԱՊԱՃՈՅՃ, ան. Շատ պաճուճուած՝ զարդարուած:

ԲԱԶՄԱՊԱՏԵԱՆ, ան. Շատ պատեաններ ունեցող:

* **ԲԱԶՄԱՊԱՏԻԺ**, ան. Շատ պատժի արժանի:

ԲԱԶՄԱՊԱՏԻԿ, ան. 1. Բազմադիմի: 2. գ. (Թուաբ.) Մի թիւ, որ իր մէջ պարունակում է մի ուրիշ թիւ մի քանի անգամ առանց մնացորդի:

ԲԱԶՄԱՊԱՏԻՐ, ան. Շատ պատիր, խարուսիկ:

ԲԱԶՄԱՊԱՏԻԻ, ան. Մեծապատիւ:

* **ԲԱԶՄԱՊԱՏԿԱՌ**, ան. Շատ պատկառած, ակնածանքի արժանի::

ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ, նբ. 1. Աւելացնել, շատացնել: 2. (Թուաբ.) Երկու տուեալ թուերից մէկը կրկնել այնքան անգամ՝ որքան միաւոր կայ միւսի մէջ:

ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼԻ, ան. Ինչ որ պէտք է բազմապատկուի:

ԲԱԶՄԱՊԱՏԿԻՉ, ան. Նա որ բազմապատկում՝ շատացնում՝ կրկնում է:

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ, գ. Բազմապատիկ լինելը:

ԲԱԶՄԱՊԱՏՈՒՄ, ան. Շատ բան պատմող:

ԲԱԶՄԱՊԱՐԳԵԻ, ան. Առատաշնորհ:

ԲԱԶՄԱՊԱՐԻՄՊ, ան. Շատ պարիսպներ ունեցող:

ԲԱԶՄԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. Ռամկապետտութիւն, ռամկավարութիւն: Հկր. Մալաւապետտութիւն:

ԲԱԶՄԱՊԻՄԻ, ան. Շատ տեսակ:

ԲԱԶՄԱՊԻՍՈՒԹԻՒՆ, գ. Բազմապիսի լինելը:

ԲԱԶՄԱՊՏՈՅՏ, ան. Շատ պտոյտներ ունեցող:

ԲԱԶՄԱՊԱՆ, ան. Որտեղ շատ ջանք է գործ դրում:

ԲԱԶՄԱՌԱՏ, ան. Շատ առատ:

* **ԲԱԶՄԱՍԱՀ**, ան. Լպրծուն:

ԲԱԶՄԱՍԵՆԵԱԿ, ան. Շատ սենեակներ ունեցող:

ԲԱԶՄԱՍԵՐ, ան. Շատ սերով:

ԲԱԶՄԱՍԵՐՄ, ան. Շատ սերմեր ունեցող:

ԲԱԶՄԱՍԻՒՆ, ան. Շատ սիւներ ունեցող:

ԲԱԶՄԱՍԽԱԼ, ան. Շատ սխալուող:

ԲԱԶՄԱՍՆՈՒՆԿ, ան. Առատ սնունդ ունեցող:

ԲԱԶՄԱՍՊԻ, ան. Շատ սպիներ ունեցող:

ԲԱԶՄԱՍՏԵՂԵԱՆ, ան. Շատ ստեղներ ունեցող:

ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆ, ան. Շատ աստիճաններով:

ԲԱԶՄԱՍՏԻՆ, ան. Շատ ստինքներ ունեցող:

ԲԱԶՄԱՍՏՈՐԱԳԻՐ, ան. Շատ ստորագրութիւններ կրող:

ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾ, ան. Այն մարդը կմ այն կրօնը, որ ընդունում է շատ աստուածներ:

ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾԵԱՆ, ան. Շատ աստուածների գոյութիւնը ընդունող:

ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. Կրօն, որ ընդունում է շատ աստուածների գոյութիւն:

ԲԱԶՄԱՍՓԻՌ, ան. Շատ տեղ սփռուած:

ԲԱԶՄԱՍՔԱՆՉ, ան. Շատ սքանչելի:

* **ԲԱԶՄԱՎԱՃԱՌ**, ան. Որտեղ վաճառականութիւնը զարգացած է շատ:

<p>ԲԱԶՄԱՎԱՆԿ, ԲԱԶՄԱՎԱՆԿԱՅԻՆ, ած. Մի քանի վանկից բաղկացած: Հկո. Միավանկ: ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ, ած. Շատ յոգնեցնող, շատ աշխատանք պահանջող: Մեծ վաստակ ունեցող: ԲԱԶՄԱՎԷՊ, ած. 1. Շատ վեպեր պարունակող: 2. գ. Անուն անագրի: ԲԱԶՄԱՎԷՐ, ած. Շատ վերքեր ունեցող: ԲԱԶՄԱՎԻՇՏ, ած. Շատ վշտեր կրած: * ԲԱԶՄԱՎՆԱՍ, ած. Շատ վնասակար: ԲԱԶՄԱՎՏԱՆԳ, ած. Շատ վտանգներ պարունակող: ԲԱԶՄԱՎՐՈՎ, ած. Շատ վրդովուած: * ԲԱԶՄԱՎՐԷՊ, ած. Շատ վրիպող սխալուող: ԲԱԶՄԱՏԱԳՆԱՊ, ած, Շատ տազնապած: ԲԱԶՄԱՏԱՆՁ, ած. Շատ տանջուած: ԲԱԶՄԱՏԱՆԵԱԿ, ած. Շատ տասնեակներով: ԲԱԶՄԱՏԱՐ, ած. Շատ բան իր մէջ տանող: ԲԱԶՄԱՏԱՐԱԾ, ած. Շատ տարածուած: ԲԱԶՄԱՏԱՐՐ, ած. Շատ տարրերից բաղկացած: ԲԱԶՄԱՏԵՂԵԱԿ, ած. Շատ բանի տեղեակ: ԲԱԶՄԱՏԵՍ, ած. Շատ բան տեսնող, շատ բան տեսած: 2. Բազմաչեայ: ԲԱԶՄԱՏԵՍԱԿ, ած. Շատ տեսակներ ունեցող: ԲԱԶՄԱՏԵՍԱԿՈՒԹԻՒՆ, գ. Բազմատեսակ լինելը: ԲԱԶՄԱՏԵՍԻՆ, Բազմատես: ԲԱԶՄԱՏԵՐԵՒ, ած. Շատ տերեւներ ունեցող: ԲԱԶՄԱՏԷՐ, ած. Շատ տերեր ունեցող: * ԲԱԶՄԱՏԻ, ած. Շատ ծեր: Տարիքոտ: ԲԱԶՄԱՏՈՂ, ած. Շատ տողեր ունեցող: ԲԱԶՄԱՏՈՒՆԿ, ած. Որտեղ շատ տունկեր կան:</p>	<p>* ԲԱԶՄԱՐԱՐ, ած. Շատ բան անող: ԲԱԶՄԱՐԴԻՒՆ, ած. Շատ արդիւնք բերող: ԲԱԶՄԱՐԺԱՆ, ԲԱԶՄԱՐԺԱՆԻ, ած. Շատ արժանիք ունեցող: ԲԱԶՄԱՐԺԷՔ, ած. Մեծ արժէք ունեցող: ԲԱԶՄԱՐՄԱՏ, ած. Շատ արմատներ ունեցող: ԲԱԶՄԱՐՈՒԵՍՏ, ած. Շատ արուեստներ զիտցող: ԲԱԶՄԱՐՈՒԵՍՏԵԱՆ, ած. Բազմարուեստի վերաբերեալ: * ԲԱԶՄԱՐՏՕՍՐ, ած. Շատ արտաստուող: ԲԱԶՄԱՅԵՂ, ած. Շատ ցեղերի բաժանուած: ԲԱԶՄԱՅԵՂՈՒԹԻՒՆ, գ. Բազմացեղ լինելը: ԲԱԶՄԱՅՈՒՄ, գ. Բազմանայր: ԲԱԶՄԱՅՐԻՒ, ած. Շատ տարածուած, ցրիւ եկած: ԲԱԶՄԱՅՕՂՈՒՆ, ած. Շատ ցօղուններ ունեցող: ԲԱԶՄԱՓԱՅԼ, ած. Շատ փայլուն: ԲԱԶՄԱՓԱՌ, ած. Շատ փառքով: ԲԱԶՄԱՓԱՐԹԱՍ, ած. Շատ փարթամ: ԲԱԶՄԱՓԷՇ, ած. Բազում փէշեր ունեցող: ԲԱԶՄԱՓԹԻԹ, ած. Առատութեամբ փթթող: * ԲԱԶՄԱՓՈՅԹ, ած. Հոգսերով լի: ԲԱԶՄԱՓՈՐՁ, ած. Շատ փորձառու: ԲԱԶՄԱՓՈՐՁՈՒԹԻՒՆ, գ. Բազմափորձ լինելը: ԲԱԶՄԱՔԱՅԼ, ած. Շատ քայլեր ունեցող: ԲԱԶՄԱՔԱՆԱԿ, ած. Անթիւ, մեծաքանակ: ԲԱԶՄԱՔԱՆՂԱԿ, ած. Շատ քանդակներ ունեցող: ԲԱԶՄԱՔԱՆՔԱՐ, ած. Շատ քանքար:</p>
--	--

<p>ների տեր, բազմատաղանդ: ԲԱԶՄԱՔԻՐՏՆ, ան. Շատ քրտնեցնող: ԲԱԶՄԱՔՆԻՆ} *ԲԱԶՄԱՔՆԻՆ} ան. Շատ քննող: ԲԱԶՄԱՔՆՆՈՂԱԳՈՑՆ, բաղդ. աստ. <i>* Բազմաքննողի:</i> * ԲԱԶՄԱՔՆՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմաքնին լինելը: ԲԱԶՄԵԼ, չբ. 1. Սեղան նստել: 2. Հանդիսապէս նստել: ԲԱԶՄԵՌԱՆՆ, ան. Շատ եռանդով: ԲԱԶՄԵՐԱՆՍ, ան. Շատ երախտիք ունեցող: ԲԱԶՄԵՐԱՆՍՈՒԹԻՒՆ, գ. Բազմերախտ լինելը: ԲԱԶՄԵՐԱՄ, ան. Մեծ երամ: ԲԱԶՄԵՐԱՆԳ, ան. Շատ երանգներ ունեցող, երկներանգ: Գոյնզգոյն: * ԲԱԶՄԵՐՈՒՄ, ան. Շատ յաճախակի երդող: ԲԱԶՄԵՐԵՄԱՆԻ, ան. Շատ երեսներ ունեցող, բազմերես: ԲԱԶՄԵՐԶԱՆԻՎ, ան. Շատ երջանիկ: * ԲԱԶՄԸՇԱՅ, ան. Շատ ընծաներ բերող: ԲԱԶՄԻՄԱՍՏ, ան. Շատ իմաստուն, շատ իմաստ ունեցող: ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ, գ. Բազմիմաստ լինելը: * ԲԱԶՄԻՇՆԱՆ, ան. Շատ իշխաններ ունեցող: ԲԱԶՄԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ, գ. Կառուարողութեան ձեւը: ԲԱԶՄԻՑՍ, մկ. Յաճախ: * ԲԱԶՄՈԼՈՐ, ան. Շատ ոլորում: ԲԱԶՄՈՂԿՈՑԶ, ան. Շատ ողկոյզներ ունեցող: ԲԱԶՄՈՅԹ, գ. Մեծ Արջ համաստեղութիւնը: ԲԱԶՄՈՍ, Տ. Բազմաճիւղ: ԲԱԶՄՈՏԱՆԻ, ան. Շատ ոտքեր ունեցող:</p>	<p>ԲԱԶՄՈՐԱԿ, ան. Բազմաթիւ որակներով: ԲԱԶՄՈՐԴԻ, Տ. Բազմազուակ: ԲԱԶՄՈՑ, գ. Նստելու տեղ: ԲԱԶՄՈՒԹԻՒՆ, գ. Բազում՝ շատ լինելը: * ԲԱԶՄՈՒՍՈՑՅ, ան. Շատ բան սովորեցնող: ԲԱԶՄՈՒՍՈՒՄ, ան. Շատ ուսեալ: * ԲԱԶՄՈՒՍՈՒՄՆՈՒԹԻՒՆ, գ. Շատ գիտուն լինելը: ԲԱԶՄՈՒՐԱՆ, ան. մկ. Շատ ուրախ: ԲԱԶՄՕԳՈՒՏ, ան. Շատ օգտակար: ԲԱԶՄՕՐԵԱՅ, ան. Շատ օրեր տեւող: ԲԱԶՄՕՐԻՆԱԿ, ան. Շատ տեսակ: ԲԱԶՄՕՐՆԵԱԼ, ան. Շատ օրհնեալ: ԲԱԶՈՒԿ, գ. Ձեռք, թել: ԲԱԶՈՒՄ, ան. Շատ: + ԲԱԶՈՒՄՔ, գ. (Սստղաբ.) Համաստեղութիւն հիւսիսային երկնագնդում: ԲԱԶՊԱՆ, գ. Եկեղեցական զգեստաւորութեան բազուկի մաս: ԲԱԶՐԻՔ, գ. Բազկայթոռի երկու կողմի յենարանները բազուկների համար: ԲԱԺ, գ. Բաժին, մասն: Հարկ, տուրք: * ԲԱԺԱԳԻՐ, գ. Անորոքագիր բաժը՝ հարկը վճարած լինելու: ԲԱԺԱԿ, գ. Գաւաթ: ԲԱԺԱԿԱԳՈՂ, գ. Բաժակ գողացող: ԲԱԺԱԿԱՌՕՍՈՒԹԻՒՆ, Տ. Բաժակաճառ: ԲԱԺԱԿԱՃԱՌ, գ. Համաբօտ ճառ: <i>Կենաց խօսք, զովասանք:</i> ԲԱԺԱԿԱՃԱՌԵԼ, բ. Բաժակաճառ ասել: ԲԱԺԱԿԱՎԱՃԱՌ, ան. Բաժակներ վաճառող: ԲԱԺԱԿԻՑ, Տ. Բաժանորդ: ԲԱԺԱՆ, ան. Իրարից բաժանում: ԲԱԺԱՆԱԲԱՐ, մկ. Բաժանում: ԲԱԺԱՆԱԳԻՐ, գ. Բաժանման գիր: ԲԱԺԱՆԱԿԱՆ, ան. Ինչ որ կարող է մա-</p>
--	---

<p>սերի բաժանուել:</p> <p>ԲԱԺԱՆԱՎԻՑ, ան. գ. Մասն եւ բաժին ունեցող:</p> <p>ԲԱԺԱՆԱՍԷՐ, ան. Բաժանել սիրող:</p> <p>ԲԱԺԱՆԱՐԱՐ, ան. գ. Նա որ բաժանում է:</p> <p>ԲԱԺԱՆԱՔԱՐ, գ. Բաժանող քար:</p> <p>ԲԱԺԱՆԵԼ, նբ. Կտոր կտոր անել:</p> <p>ԲԱԺԱՆԵԼԻ, գ. (Թուաբ.) Այն թիւը, որ բաժանուելու է բաժանարարով:</p> <p>ԲԱԺԱՆԵԼԻՈՒԹԻՒՆ, գ. Իրի բաղադրիչ մասերի բաժանուելու յատկութիւնը:</p> <p>ԲԱԺԱՆԻՉ, ան. Բաժանում կատարող:</p> <p>ԲԱԺԱՆՍՈՒՆՔ, գ. Մի մեծ ամբողջից բաժանուած մաս:</p> <p>ԲԱԺԱՆՈՎԻ, ան. մկ. Ինչ որ բաժանուած է:</p> <p>ԲԱԺԱՆՈՐ, գ. Մասնակից, կցորդ, բաժին ունեցող:</p> <p>ԲԱԺԱՆՈՐԱԳԻՆ, գ. Այն գումարը, որ մի անձ վճարում է բաժանորդ դառնալու համար:</p> <p>ԲԱԺԱՆՈՐԱԳԻՐ, գ. Բաժանորդագրութեան անդորրագիր:</p> <p>ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Բաժանորդ գրելը:</p> <p>ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԵԼ, չբ. Բաժանորդ գրուել:</p> <p>ԲԱԺԱՆՈՐԱԹԵՐԹ, գ. Թերթ, որի մէջ գրում են բաժանորդ լինել ցանկացողների անունները:</p> <p>ԲԱԺԱՆՈՐԱՎՃԱՐ, Տ. Բաժանորդագին:</p> <p>ԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ, գ. Իրարից բաժան լինելը:</p> <p>ԲԱԺԱՆՈՒՄ, գ. Բաժանելը:</p> <p>+ ԲԱԺԱՆՔ, գ. Իրարից բաժանուելը:</p> <p>* ԲԱԺԱՌՈՒ, ան. գ. Բաժ առնող: Հարկ վերցնող:</p> <p>ԲԱԺԻՆ, գ. 1. Բաժանուած ամբողջի ա-</p>	<p>մէն մի մասը: 2. Առիւծի բաժին, Ամենամեծ բաժին:</p> <p>ԲԱԺԻՆՔ, Տ. Օժիտ:</p> <p>ԲԱԺՆԵԳԻՆ, Տ. Բաժանորդագին:</p> <p>ԲԱԺՆԵԹՈՒՂԹ, գ. Տոկոսաբեր թուղթ:</p> <p>ԲԱԺՆԵՎԻՑ, ան. գ. Բաժանակից:</p> <p>ԲԱԺՆԵՏԷՐ, գ. Նա որ բաժին ունի:</p> <p>ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ, ան. Բաժնետերերից բաղկացած:</p> <p>1. ԲԱԼ, գ. 1. Մէգ: 2. ան. Մթնեցնող:</p> <p>2. ԲԱԼ, գ. Բալենիի պտուղը:</p> <p>ԲԱԼԱԳԱՆ, գ. Թէթեւ փայտէ կառուցուածք: Տոնավաճառի կրպակ:</p> <p>+ ԲԱԼԱԼՈՒՎ, գ. Անորոշ տեսակի թուփ:</p> <p>ԲԱԼԱԽ, գ. (Բուս.) Ճահճային անպիտան խոտ:</p> <p>+ ԲԱԼԱԽՈՏԻ, գ. Բոյսի հաստ արմատ:</p> <p>ԲԱԼԱՉԻԳ, ան. Մշուշ բերող:</p> <p>+ ԲԱԼԱՅ, գ. Որդեակ, որդի:</p> <p>ԲԱԼԱՍԱՆ, գ. Անուշահոտ ծաղիկ: Սպեղանի:</p> <p>ԲԱԼԱՍՄԱՆԱԿԱՆ, ան. Բալասանի:</p> <p>ԲԱԼԵՆԻ, գ. (Բուս.) Կորիզապտուղների կարգին պատկանող ծառ:</p> <p>ԲԱԼԻ, Տ. Բալենի:</p> <p>1. ԲԱԼԻՇ, գ. Թաթարական դրամ:</p> <p>+ 2. ԲԱԼԻՇ, գ. Բարձ:</p> <p>+ ԲԱԼՆՈՒՏ, գ. Բալենիների անտառ:</p> <p>* ԲԱԼՈՒՏ, ան. Միգապատ, մշուշապատ:</p> <p>ԲԱԼՕՂԻ, գ. Բալով շինած օղի:</p> <p>ԲԱԽԱՍ, ան. Խելքից զարկուած:</p> <p>ԲԱԽԱՐԳԵԼ, Տարածք (գօտի)՝ բախումը կանխելու համար:</p> <p>ԲԱԽԵԼ, նբ. Հարուած տայ:</p> <p>ԲԱԽԻՆ, գ. Բախելուց առաջացած հարուածը:</p> <p>ԲԱԽՈՒՄ, գ. Բախելը:</p> <p>ԲԱԽՉԱ, (բրբ.) (Պարս.) Փոքր պարտէզ:</p> <p>ԲԱԽՏ, գ. Ինչ որ բաժին է ընկած մէկին:</p>
---	---

* **ԲԱԽՏԱԲԱՇԽ**, ան. *Բախտ բաշխող՝ բաժանող:*
ԲԱԽՏԱԲԵՐ, ան. *Բախտ բերող:*
ԲԱԽՏԱԳԻԾ, գ. (բնստ.), փխբ. *Բախտի գիծ, ճակատագիր:*
ԲԱԽՏԱԳՈՒՇԱԿ, ան. գ. *Բախտ գուշակող:*
ԲԱԽՏԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ, գ. *Բախտ գուշակելը:*
 * **ԲԱԽՏԱԳՐՈՒԹԻՒՆ**, գ. *Ճակատագիր:*
ԲԱԽՏԱՆԱՐ, գ. *Թղթախաղի այն տեսակը, որի մեջ ոչինչ կախուած չէ խաղացողի հմտութիւնից:*
ԲԱԽՏԱՆՆԻՐ, ան. գ. *Բախտ փնտրող:*
ԲԱԽՏԱԿ, գ. *Սեւանայ լճի ձկներից մի տեսակը:*
ԲԱԽՏԱԿԻՑ, կցի, ան. *Միեւնոյն բախտն ունեցող:*
 + **ԲԱԽՏԱՎԱՐ**, գ. *Բախտ բերող:*
ԲԱԽՏԱՏՈՄՍ, գ. *Վիճակահանութեան տոմս:*
 * **ԲԱԽՏԱՅԻ**, մկ. *Պատահաբար:*
ԲԱԽՏԱԻՈՐ, ան. *Բախտ յաջողութիւն ունեցող:*
 + **ԲԱԽՏԱԻՈՐԵԼ**, նբ. *Բախտատր դարձնել:*
ԲԱԽՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ, գ. *Բախտատր լինելը:*
 + **ԲԱԽՏՈՎԻ**, ան. *Ըստ բախտի:*
ԲԱԽՏՈՐՈՇ, ան. *Ճակատագրական:*
 + **ԲԱԽՏՓՈՐՁՈՒՄ**, գ. *Վիճակ հանելը:*
 * **ԲԱԾԻՆ**, գ. *Մի տեսակ աղած ձուկ:*
 1. **ԲԱԿ**, գ. 1. *Տան կողքին բաց տեղ:*
 2. *Շրջանակ, շրջան:*
 2. **ԲԱԿ**, գ. *Մետաղեայ անօթ:*
ԲԱԿԱՌԱԿԱՆ, ան. (Քրկն.) *Հաւաքական:*
ԲԱԿԱՌՈՒԹԻՒՆ, գ. (Քրկն.) *Ոճի ձեւ:*
ԲԱԿԼԱՅ, գ. (Բուս.) *Թիթեռնածաղիկ ների կարգին պատկանող բոյս:*
 1. **ԲԱՀ**, գ. *Ձեռքի հողագործական գործիք:*

+ 2. **ԲԱՀ**, գ. *Հոսող ջրի քանակութեան չափ:*
 3. **ԲԱՀ**, միջ. *Զարմանքի բացազանչութիւն:*
ԲԱՀԱԿՈԹ, գ. *Բահի կոթ:*
 + **ԲԱՀԱՓՈՐ**, ան. *Բահով փորում:*
ԲԱՀԵԼ, նբ. *Բահով փորել:*
ԲԱՂ, *Բաղադրական մասնիկ:*
ԲԱՂԱՂԲԱԿԱՆ, ան. 1. *Հետը՝ կից՝ միասին դրում:* 2. (Քրկն.) *Սկզբից բաղադրական մասնիկ ունեցող (բառ):*
ԲԱՂԱՂԲԱՏՈՄՍ, գ. *Բաղադրիչների չափը նշող տոմս:*
ԲԱՂԱՂԵԱԼ, ան. *Մի քանի մասից կմ կտորից բաղկացած:* (Քիմ.) *Բաղադրեալ մարմին:*
ԲԱՂԱՂԵԼ, նբ. *Առանձին մասերից կազմել մի ամբողջութիւն:*
ԲԱՂԱՂԻՉ, գ. *Բարդ նիւթի ամէն՝ մի մասը:*
ԲԱՂԱՂՈՒԹԻՒՆ, գ. *Բաղադրելը, բաղադրելու գործողութիւնը:*
 * **ԲԱՂԱԿՑԵԼ**, նբ. *Իրար կցել, շարակցել, իրար հետ յօղել, բաղադրել:*
 * **ԲԱՂԱԿՑՈՒԹԻՒՆ**, գ. *Բաղակցելը:*
ԲԱՂԱՁԱՅՆ, ան. գ. (Քրկն.) *Չայնատրի հետ կցուող:*
ԲԱՂԱՁԱՅՆԱԿԱՆ, ան. *Չայների միութեամբ:*
 * **ԲԱՂԱՁԱՅՆԱԿԻ**, մկ. *Չայնակցութեամբ:*
 * **ԲԱՂԱՁԱՅՆԵԼ**, չբ. *Չայնակից լինել:*
ԲԱՂԱՄ, գ. (Բուս.) *Մի տեսակ ներկատու ծառ:*
ԲԱՂԱՆԵԿԱՆ, ան. *Բաղնիքին յատուկ:*
ԲԱՂԱՆԻՔ, (անեգ.), գ. *Շէնք, որի մեջ տաք ջրով կը լոզնան:*
 * **ԲԱՂԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ**, գ. *Միեւնոյն անունը կրելը:*
 + **ԲԱՂԱՋ**, **ԲԱՂԱՃ**, գ. *Կլոր հաց պինդ խմորից:*
 * **ԲԱՂԱՍԻՈՆ**, գ. *Վայրի նուան ծաղիկ:*

ԲԱՂԱՐՋ, գ. ան. *Անթթիսնոր (առանց խաշի) հաց:*
ԲԱՂԱՐՋԱԿԵՆ, ան. *Բաղարջ ուտող:*
ԲԱՂԱՂԱՐՋԱԿԵՐՈՒԹԻՒՆ, գ. *Բաղարջ ուտելը:*
ԲԱՂԱՓՈՒՇՏ, Տ. *Միզափամփուշտ:*
ԲԱՂԲԱՋԱՆՔ, Տ. *Բաջաղանք: Ցնդաբանություն:*
ԲԱՂԴԱՇԻ ԶՈՂ, գ. (Բուս.) *Խաչածաղիկների ընտանիքից, բանջար:*
ԲԱՂԴԱՍՈՒԹԻՒՆ, Շարադասություն:
ԲԱՂԴԱՏԱԲԱՐ, մկ. *Բաղդատություն:*
ԲԱՂԴԱՏԱԿԱՆ, ան. *Բաղդատություն կատարող:*
ԲԱՂԴԱՏԵԼ, նբ. *Առարկաների միջեւ յարաբերությունը որոշել:*
ԲԱՂԴԱՏԻ, գ. *Բարակ պատ:*
ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Բաղդատելը:*
ԲԱՂԵՂ, գ. (Բուս.) *Բաղեղագգիներին պատկանող մշտականաչ բոյս:*
*** ԲԱՂԿԱՑՈՒԹԻՒՆ**, գ. *Բաղկանալը:*
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ, ան. *Բաղկացնող, մաս կազմող:*
ԲԱՂԶԻՄԱԿԱՆ, ան. *Իրար հետ հիստող:*
ԲԱՂԶԻՄՈՒԹԻՒՆ, գ. *Իրար հետ կապակցում լինելը:*
ԲԱՂՁԱԼ, ն. չբ. 1. *Ցանկանալ:* 2. *Կամենալ: Փափագիլ:*
ԲԱՂՁԱԼԻ, ան. *Ինչ որ մարդ կը բաղձայ:*
ԲԱՂՁԱՆՏԱՒՈՐ, ան. *Բաղձանքով տառապող:*
ԲԱՂՁԱԿԱՆ, ան. *Բաղձալի:*
ԲԱՂՁԱՆՔ, գ. *Բաղձալը, ցանկություն:*
ԲԱՂՆԵԶԳԵՍՏ, գ. *Բաղնիքում կմ լողանալու ժամանակ գործածող զգեստ:*
ԲԱՂՆԵԿԱՆ, ան. *Բաղնիքին յատուկ:*
ԲԱՂՆԵՊԱՆ, **ԲԱՂՆԷՊԱՆ**, գ. *Բաղնիք պահող*
ԲԱՂՆԻՔ, Տ. *Բաղանիք: Լոգնալու շէնք:*
ԲԱՂՍԱՍՈՒԿ ՊԱՐՏԷԶԻ, գ. (Բուս.)

Հինաճաղկի մի ընտանի տեսակը:
*** ԲԱՂՏԻ**, ան. *Չարաբախտ:*
ԲԱՂԴՁՈՒԿ, **ԲԱՂԱՐՋՈՒԿ**, գ. (Բուս.) *Մոլոշների կարգին պատկանող բոյս:*
ԲԱՃԿՈՆ, գ. *Վերարկու կմ վերարկուի տակ հագնող զգեստ:*
ԲԱՃԿՈՆԱԿ, գ. *Փոքր բաձկոն:*
ԲԱՃԿՈՆԱՑՈՒ, գ. *Բաձկոնի հասկացող կտոր:*
ԲԱՃԿՈՆԱԽՈՐ, գ. *Բաձկոն հագածը:*
ԲԱՄ, միջ. *Նմանաձայնություն բնութեան ուժեղ դրդողի:*
 + 1. **ԲԱՄԲ**, գ. *Ձեռքի բաց թայթ:*
 2. **ԲԱՄԲ**, գ. *Նուագարանի հաստ լարի ցած խուլ հնչիւնը: Թաւ ձայն:*
ԲԱՄԲԱԿ, գ. *Բարակ՝ սպիտակ՝ երկայն՝ առաձգական՝ բուսական մազ:*
ԲԱՄԲԱԿԱԲԱՃԿՈՆ, գ. *Բամբակէ բաձկոն:*
ԲԱՄԲԱԿԱԲՈՅՑ, Տ. *Բամբակագործ:*
ԲԱՄԲԱԿԱԳՈՑՆ, (ույ), ան. *Բամբակի գոյն ու տեսք ունեցող:*
ԲԱՄԲԱԿԱԳՈՐՑ, գ. *Նա ուլ զբաղում է բամբակի բոյսի մշակութեամբ:*
ԲԱՄԲԱԿԱԳՈՐՑՈՒԹԻՒՆ, գ. *Բամբակագործի արհեստը:*
ԲԱՄԲԱԿԱԶՏԻՉ, ան. *Բամբակը գտող:*
ԲԱՄԲԱԿԱԹԵԼ, գ. *Բամբակեայ թել:*
ԲԱՄԲԱԿԱՍՕՐՈՒՄ, ան. *Բամբակե մօրուս կրող:*
ԲԱՄԲԱԿԱՎԱՃԱՌ, գ. *Բամբակի վաճառական:*
ԲԱՄԲԱԿԱՔԱՂ, գ. *Բամբակի քաղելու գործողությունը:*
ԲԱՄԲԱԿԷ, ան. *Բամբակից պատրաստուած:*
ԲԱՄԲԱԿԵՂԷՆ, ան. գ. *Բամբակից պատրաստուած գործուածք:*
ԲԱՄԲԱՍԱԿԱՆ, ան. *Բամբասանք՝ չարախօսություն պարունակող:*
ԲԱՄԲԱՍԱՆՔ, գ. *Բամբասելը, բամբասելու գործողությունը, զրպարտանք:*

ԲԱՄԲԱՍԱՍԷՐ, ան. Բամբասել սիրող:
ԲԱՄԲԱՍԵԼ, նբ. Մէկի մասին վատ, ոչ ճշմարիտ, բան սակել:
ԲԱՄԲԱՍՈՂ, ան. գ. Բամբասանքներով, գրպարտություններով զբաղուող:
+ ԲԱՄԲԱՐԱԿ, ան. Թոյլ անճարակ՝ բանուգործ չունեցող մարդ:
ԲԱՄԲԻՇ, գ. Թագուհի, տիկնաց տիկին:
ԲԱՄԲՈՒԿ,
ԲԱՄԲՈՒՍ, S. Հնդեղեգ:
ԲԱՄԻԱ, գ. (Արաբ.) (Բուս.) Ընդարեր բոյս:
ԲԱՄԻԱՎԱՃԱՌ, գ. Բամիա՝ կուտատուկ վաճառող, բամիայի վաճառքով զբաղուող:
ԲԱՄՓԵԼ, գ. Բամփով՝ թաթով խփել:
ԲԱՅ, գ. Գործողություն ցույց տուող բառ:
ԲԱՅԱՍՏԱԿԱՆ, գ. (Քրկն.) Ածական անուն, որ առաջ է եկել բայարմատից:
ԲԱՅԱԿԱՆ, ան. Բային յատուկ:
ԲԱՅԱՆՈՒՆ, գ. (Քրկն.) Գոյական անուն:
ԲԱՅԱՄՄԱՍ, գ. (Քրկն.) Բառի հիմնական մասն:
ԲԱՅԵԼ, բ. Մայել:
ԲԱՅՅ, Շաղկապ, որ կապում է երկու այնպիսի մտքեր, որոնցից երկրորդը հակառակ է առաջինին:
1. ԲԱՆ, գ. Մտաւոր կարողություն՝ ճանաչելու. դատելու, կշռելու. խոհակաւնություն:
2. ԲԱՆ, գ. (Բուս.) Տաք գօտիներում բուսնող ծառ:
ԲԱՆԱԳԷՏ, ան. Բանիմաց:
ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ, ան. Բանագէտի:
ԲԱՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ, գ. Բանագնաց լինելը:
ԲԱՆԱԳՈՂ, ան. գ. Հեղինակ, որ ուրիշ հեղինակներից քաղած հաւաքածո ներկայացնում է իբրեւ իրենը:
ԲԱՆԱԳՈՂՈՒԹԻՒՆ, գ. Բանագող լինելը:

ԲԱՆԱԴՐԱՆՔ, գ. Խօսք դնելը: Եկեղեցական անէծք, նզովք:
ԲԱՆԱԴՐԵԼ, նբ. Դաւանող անձ մը՝ նզովիչ:
ԲԱՆԱԼ, նբ. Բաց անել:
ԲԱՆԱԼԻ,
ԲԱՆԱԼԻՔ, գ. Մետաղէ գործիք, որով կողպէքը բաց են անում կմ փակում:
ԲԱՆԱԽՓԱՆ, ան. Բանը խօսքը աշխատանքը խափանող:
*** ԲԱՆԱԽՈՅՁ**, ան. Խօսքը խուզարկող՝ քննող:
ԲԱՆԱԽՕՍ, գ. Ճառախօս:
ԲԱՆԱԽՕՍԵԼ, չբ. Ատենախօսել, ճառախօսել:
ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ, գ. Ատենամ խօսելը, ատենախօսություն: Դասախօսություն:
ԲԱՆԱԾ, ան. Ասեղնագործած: Աշխատուած:
ԲԱՆԱԿ, գ. 1. Մարդկանց բազմություն, որ համախմբուած է ճանապարհ գնալու: 2. Ձօրքի գունդ:
ԲԱՆԱԿԱԿԻՑ, ան. Նոյն բանակից եղող:
ԲԱՆԱԿԱՍԷՁ, գ. Բանակի միջավայրը:
ԲԱՆԱԿԱՅԻՆ, ան. գ. Բանակին յատուկ:
ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բանական լինելը:
ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ, գ. Բանակ կազմելը:
ԲԱՆԱԿԱՏԷՐ, գ. Բանակի տէր:
ԲԱՆԱԿԱՏԵՂ }
ԲԱՆԱԿԱՏԵՂԻ } գ. Ձօրքի կայան, բանակի գօրանոց:
ԲԱՆԱԿԵԼ, չբ. Իջեւանել: Դիրք գրաւել:
*** ԲԱՆԱԿՈՇԵԼ**, նբ. Խօսքերով մէկին քարկոծել:
ԲԱՆԱԿՈՒԻ, գ. Խօսքով կմ գրով կռիւ:
ԲԱՆԱԿՈՒՄԱԿԱՆ, ան. Բանակումին յատուկ:
ԲԱՆԱԿՈՒՈՒԹԻՒՆ, գ. Բանակորի վարելը:
*** ԲԱՆԱԿՐԿԻՏ**, ան. 1. Բծախնդիր: 2.

Խօսք քաշքշող:

ԲԱՆԱԿՑԱԳՈՐԾԸՆԹԱՑ, գ. Բանակցութեան ղեկավարի գործընթաց:

ԲԱՆԱԿՑԵԼ, չք. Մէկի հետ Բանակցութիւն վարել:

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Մէկի հետ խօսելը: Կարծիքների փոխանակութիւն:

ԲԱՆԱԶԵԻ, գ. Խօսքի խօսելու ձև:

ԲԱՆԱԶԵԻՅԵԼ, նք. Խօսքի կամ գրառման ճիշտ ու որոշ ձևակերպել:

ԲԱՆԱՍՍԱՑ, գ. ած. Ժողովրդական ստեղծագործութիւններ պատմող եւ երգող անձ:

ԲԱՆԱՍԷՐ, ած. Բան խօսք՝ գրականութիւն սիրող:

ԲԱՆԱՍԻՐԱԲԱՐ, մկ. Իբրեւ Բանասէր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ած. Բանասիրութեան յատուկ:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Լեզուի, գրական մշակոյթի ուսումնասիրութեամբ զբաղուող գիտութիւն:

ԲԱՆԱՍՏԵՂԾ, գ. Չափածոյ, խօսքով ստեղծագործող:

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ, ած. Բանաստեղծին յատուկ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ, գ. Ստեղծագործութիւն խօսքի միջոցով:

ԲԱՆԱՍՏԵՂԾՕՐԷՆ, մկ. Բանաստեղծի նման:

ԲԱՆԱՎԷՃ, գ. Բանակոյն: Քննարկում:

ԲԱՆԱՎԻՃԱԿԱՆ, ած. գ. Խօսքի վիճակը

ԲԱՆԱՏՈՂԵՐ, գ. Խօսքի տողեր:

ԲԱՆԱՐԱՐ, ած. Բանաստեղծ:

ԲԱՆԱՐԱՐ, ած. Գործարար, գործունէակ:

ԲԱՆԱՐՈՒԵՍ, գ. Բանատր արուեստ:

ԲԱՆԱԻՈՐ, ած. 1. Բանականութիւն ունեցող: 2. Բերանացի: Հկր. Գրատր:

ԲԱՆԱՔԱՂ, ած. Այստեղից այնտեղից խօսքեր՝ գրուածք քաղող:

ԲԱՆԱՔԱՂԵԼ, նք. Ուրիշների գրուածքներից քաղուածքներ անել:

ԲԱՆԱՔԱՂՈՒԹԻՒՆ, գ. Բանաքաղելը:

ԲԱՆԲԵՐ, գ. Լրաբեր, համբաւաբեր:

ԲԱՆԳ, գ. (Բուս.) Սորմազգիների կարգին պատկանող բոյս:

ԲԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. Բանազէտ լինելը:

ԲԱՆԴԱԳՈՒՇԱՆՔ, գ. Յնորք, պատրանք:

1. **ԲԱՆԴԱԳՈՒՇԵԼ**, նք. Սոյոքեցնել:

2. **ԲԱՆԴԱԳՈՒՇԵԼ**, չք. Յնորուել:

ԲԱՆԵԼ, չք. Աշխատանք կատարել:

ԲԱՆԵԼԱԿԱՐԳ, գ. Աշխատանքի կարգը, ոճը:

ԲԱՆԵՂ, ած. Լեզուանի, ճարտարախօս: + **ԲԱՆԹՈՂ** գ. Գործը՝ աշխատանքը թողնելը:

ԲԱՆԻԲՈՒՆ, ած. Խօսելու մէջ հմուտ:

ԲԱՆԻՄԱՑ, ած. Բան հասկացող:

ԲԱՆԻՄԱՑՈՒԹԻՒՆ, գ. Խելացիութիւն: + **ԲԱՆԿԱԼ**, գ. Եկեղեցիներին մօտ փոքրիկ սենեակ, որտեղ մտն են ծախում:

+ **ԲԱՆՀՈԳԻ**, ած. Յանկարծակի՝ տեղնուտեղը մեռած:

ԲԱՆՇՈՐ, գ. Այն շորը, որ բանտորը հագնում է աշխատանքի ժամանակ:

ԲԱՆՈՂԶԷՔ, գ. Օրական աշխատավարձ:

ԲԱՆՈՒԱԾՔ, գ. Բանելու՝ գործելու՝ աշխատելու կերպը:

ԲԱՆՈՒԶԱՆՔ, գ. Փոխ վերցնելը:

ԲԱՆՈՒԶՈՎԻ, ած. Բանեցնելու համար փոխ վերցրած (իր):

ԲԱՆՈՒԿ, ած. 1. Աշխատասէր: 2. Շատ երթելու կերպի, գործադրութեան մէջ եղող:

ԲԱՆՈՒՈՐ, ած. գ. Նա որ ուրիշի մօտ վարձով աշխատում է:

ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ, ած. Բանտորի վերաբերեալ, յատուկ:

ԲԱՆՈՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. Բանտոր լինելը:

ԲԱՆԶԱՐ, գ. Մարդկանց եւ անասունների համար ուտելի կանաչեղէն:

ԲԱՆԶԱՐ, փխկ. Եղինճքանջարի:

ԲԱՆՋԱՐ ԿԱՐՄԻՐ, գ. (Բուս.) Ուտեղի մի մոլայտտո:
ԲԱՆՋԱՐԱԲՈՅԾ, ած. գ. Բանջարեղեն մշակող:
ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ, գ. Բանջարաբոյժի պարապմունքը: Գիւղատնտեսութեան ճիւղ:
ԲԱՆՋԱՐԱԹԱՆ, գ. Մտով ապուր:
ԲԱՆՋԱՐԱՍԾԱԽ, S. Բանջարավաճառ:
ԲԱՆՋԱՐԱԿԵՐ, ած. Բանջար ուտող:
ԲԱՆՋԱՐԱՃԱՇԱԿՈՒԹԻՒՆ, գ. Բանջար ուտելը:
ԲԱՆՋԱՐԱՅԻՆ, ած. Բանջարեղեն:
ԲԱՆՋԱՐԱՆՈՑ, գ. Արտ, որտեղ ցանում ու մշակում են բանջար:
ԲԱՆՋԱՐԱՎԱՃԱՌ, գ. Խանութպան, որ բանջարեղեն է ծախում:
ԲԱՆՋԱՐԱՔԱՐ, ած. Բանջար քաղող:
ԲԱՆՋԱՐԵՂԷՆ, ած. Բանջար պարունակող:
ԲԱՆՋՐՈՒՌ, ած. գ. Բանջար քաղող:
ԲԱՆՄԱՐԿԵԼ, նբ. Խօսք խառնել. Քսութիւն անել:
ԲԱՆՄԱՐԿՈՒ, ած. գ. Խօսք խառնող:
ԲԱՆՄԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Բանսարկու լինելը:
ԲԱՆՍԵԼՈՒ } ած. Ուրիշի ասածին
ԲԱՆՍԵՐԹՈՒԿ } հետեւող:
ԲԱՆՏ, գ. Շինութիւն՝ տեղ, որտեղ արգելքի տակ պահում են յանցաւորներին:
ԲԱՆՏԱՆՑԻԿ, գ. Փոքրիկ բանտայտուց:
ԲԱՆՏԱՆՈՒՑ, գ. Բանտային խուց:
*** ԲԱՆՏԱՄՈՒՑ**, ած. Բանտ մտած:
ԲԱՆՏԱՊԱՇ, ած. գ. S. Բանտապան:
ԲԱՆՏԱՊԱՆ, գ. Բանտի մէջ վերակացու:
ԲԱՆՏԱՊԵՏ, գ. Բանտի կառավարիչ՝ պետ:
ԲԱՆՏԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. Բանտապետ լինելը:
ԲԱՆՏԱՐԳԵԼ, ած. Բանտում արգելում:

ԲԱՆՏԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ, գ. Բանտում արգելում լինելը:
ԲԱՆՏԱՐԿԵԱԼ, ած. գ. Բանտ ձգուած, բանտ դրուած:
ԲԱՆՏԱՐԿԵԼ, նբ. Բանտը դնել:
ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Բանտ ձգուելը:
ԲԱՆՏԱՐԿՈՒՄ, գ. Բանտարկելը:
ԲԱՆՏԵԼ, բ. Արգելափակել, բանտարկել:
ԲԱՆՈՒԿ, ած. Երթելակելի:
ԲԱՇ, գ. Ձիու, առիւծի վզի ողնաշարի վրայ բուսած երկայն՝ հաստ մազը:
ԲԱՇԱՐՁԱԿ, ած. մկ. Բաշը արձակ ազատ:
1. ԲԱՇԽ, գ. Ինչ որ մարդու բաժին է ընկած:
2. ԲԱՇԽ, ԲԱՇԽԵՐ, գ. (Կենդ.) Մարդագիւնների դասին պատկանող ստորին կենդանիների կարգ:
ԲԱՇԽԱԿԱՆ, ած. Բաշխան վերաբերեալ:
ԲԱՇԽԵԼ, նբ. Բաժին-բաժին անել:
ԲԱՇԽԻՉ, ած. Բաշխող, մասնատրող:
ԲԱՇԽՈՂԱԿԱՆ, ած. Բաշխուելուն վերաբերող:
ԲԱՇԽՈՒՄ, գ. Բաշխելը:
ԲԱՇՈՏ, գ. (Կենդ.) Թռչուն բազէների ընտանիքից:
ԲԱՌԲԱՐ, գ. (Բուս.) Հսկայ ծառ, մոլորների կարգից:
ԲԱՉԻՒՆ, գ. Անասունների ձայնը:
ԲԱՋԱՂԱՆՔ, գ. Յիմար-յիմար դուրս տալը:
ԲԱՋԱՂԵԼ, չբ. Յիմար-յիմար դուրս տալ:
*** ԲԱՋԱՂԿՈՏ**, ած. Յիմար-յիմար դուրս տուող:
ԲԱՌ, գ. Մարդկային ձայնի մի հնչիւն կամ հնչիւններից յօդուած խումբ: Խօսքի մի մասնիկը:
ԲԱՌԱԲԱՐՈՒԹԻՒՆ }
ԲԱՌԱԲԱՐՈՒՄ } գ. Բառերի բար-

<p>դոււմը:</p> <p>ԲԱՌԱԳԱՆՁ, S. Բառամթերք:</p> <p>ԲԱՌԱԳԷՏ, ած. գ. Բառագիտութեամբ պարապող:</p> <p>ԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ, ած. Բառագիտութեան վերաբերեալ:</p> <p>ԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. Լեզուի բառերի գիտութիւն: Լեզուաբանութեան ճիւղ:</p> <p>ԲԱՌԱԳԻՐ, S. Բառարանագիր:</p> <p>ԲԱՌԱԳԻՐՔ, S. Բառգիրք:</p> <p>ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒՄ, գ. (լեզվբ.) Բառի գործածութիւն, կիրառութիւն:</p> <p>ԲԱՌԱԶԳԱՅ, ած. Բառի ճիշտ իմաստը ըմբռնող:</p> <p>ԲԱՌԱԶՆՆԱԿԱՆ, ած. Բառագննութեան վերաբերեալ:</p> <p>ԲԱՌԱԶՆՆՈՒԹԻՒՆ, գ. (Քրկն.) Քերականութեան մասը:</p> <p>ԲԱՌԱԶՈՅԳ, գ. Միմիեանց հետ որոշակի կապի մէջ գտնուող բառերի զոյգ:</p> <p>* ԲԱՌԱՆՈՅԾ, ած. Դժուար բառերը մեկնող:</p> <p>ԲԱՌԱՌԱՂ, գ. Մրամխտ խօսք:</p> <p>ԲԱՌԱՌԱՂԱՅԻՆ, ած. Բառախաղին վերաբերող:</p> <p>ԲԱՌԱԿԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ, ած. (լեզվբ.): Բառակազմագիտութեանը վերաբերող:</p> <p>ԲԱՌԱԿԱԶՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, գ. (լեզվբ.) Բառագիտութեան ենթաբաժին, որն ուսումնասիրում է բառակազմութեան օրինաչափութիւնները:</p> <p>ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ, գ. Բառեր կազմելը:</p> <p>ԲԱՌԱԿՈՅՏ, գ. Բառերի խումբ:</p> <p>ԲԱՌԱԿՈՒՏԱԿ, ած. Բառերի անիմաստ կուտակում ունեցող:</p> <p>ԲԱՌԱԿՈՒՏԱԿՈՒՄ, գ. Բառերի կուտակում, իրար հետեւից ասված՝ շարված բառերի անիմաստ կոյտ:</p> <p>ԲԱՌԱՀՆՉԻՒՆԱՅԻՆ, ած. Բառային եւ հնչիւնային, հնչարարին վերաբերող:</p> <p>ԲԱՌԱՄԹԵՐՔ, գ. Բառերի ամբողջ քա-</p>	<p>նակը:</p> <p>ԲԱՌԱՆՇԱՆԱՅԻՆ, ած. Բառերով եւ նշաններով արտայայտուող:</p> <p>ԲԱՌԱՇԻՆԱՐԱՐ, գ. Բառաստեղծ, նոր բառեր ստեղծող:</p> <p>ԲԱՌԱՇԻՆՈՒԹԻՒՆ, գ. Բառ ստեղծելը:</p> <p>ԲԱՌԱՉ, գ. Կովի արձակած ձայնը:</p> <p>ԲԱՌԱ(Ն)ՉԵԼ, չբ. Բառաչ արձակել: ԲԱՌԱՉԻՒՆ } գ. Բառաչի ձայնը: ԲԱՌԱՉՈՒՄ }</p> <p>ԲԱՌԱՐԱՆ, գ. Գիրք, որի մէջ ամփոփուած են լեզուի բառերը:</p> <p>ԲԱՌԱՐԱՆԱԳԻՐ, ած. գ. Բառարան գրող՝ կազմող:</p> <p>ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Բառարանագիր լինելը:</p> <p>ԲԱՌԱՐԱՆԱԳՐՈՒՄ, գ. Բառարանագրելը:</p> <p>ԲԱՌԱՐԱՆԱԿԱՆ, ած. Բառարանի վերաբերեալ:</p> <p>ԲԱՌԱՅԱՆԿ, գ. Համառօտ բառարան մի գրքի մէջ պատահող բառերի:</p> <p>ԲԱՌԱՅԻ, ած. 1. Անուանի: 2. ած. մկ. Բառը բառի դէմ դնելով, ճշտիւ հետեւելով բնագրին:</p> <p>ԲԱՌԱՓՈՒՍԱՌՈՒԹԻՒՆ, գ. (լեզվբ.) Բառի փոխառութիւն:</p> <p>ԲԱՌԳԻՐՔ, գ. Բառարան:</p> <p>ԲԱՌԳՐՔՈՅԿ, գ. Փոքր՝ համառօտ բառարան:</p> <p>ԲԱՌՆԱԼ, նբ. Վեր բարձրացնել:</p> <p>ԲԱՍՏԵՌՆ, գ. Փափուկ տախտ:</p> <p>ԲԱՍՐԱՆՔ, գ. Պարսաւանք:</p> <p>ԲԱՍՐԵԼ, նբ. Պարսաւել:</p> <p>+ ԲԱՐ, գ. Առհասարակ պտուղ:</p> <p>+ ԲԱՐԱԹԱՓ, ած. Բարը՝ պտուղը թափած:</p> <p>1. ԲԱՐԱԿ, ած. մկ. Քիչ հաստութիւն ունեցող: Լուրբ:</p> <p>2. ԲԱՐԱԿ, գ. Որսկան շուն:</p> <p>ԲԱՐԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Բարակ գործելը:</p>
--	---

ԲԱՐԱԿԱՍՏԷՉՔ, ան. Բարակ մեջք ունեցող:
ԲԱՐԱԿԱՇՈՒՐԹՆ, ան. Բարակ շըրթունքներ ունեցող:
ԲԱՐԱԿԱՎԻՉ, ան. Բարակ վիզ ունեցող:
 + **ԲԱՐԱԿԱՑԱԻ**, գ. Հիւանդութիւն:
ԲԱՐԱԿԵԼ, չբ. Բարակ դառնալ:
 ԲԱՐԱԿԻԿ } ան. Շատ բարակ:
 * ԲԱՐԱԿՈՒԿ }
ԲԱՐԱԿՆԱԼ, Տ. Բարականալ:
ԲԱՐԱԿՈՒԹԻՒՆ, գ. Բարակ լինելը:
 * **ԲԱՐԱՊԵՏ**, գ. Դրան պահապան:
ԲԱՐԱՊԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բարապան լինելը:
ԲԱՐԱԻՈՐ, գ. Տան դրան շրջանակի վերի սեւը:
ԲԱՐԲԱՋԱՆՔ, **ԲԱՐԲԱՋԱՆՔ**, գ. Վայրիվերոյ՝ արեղցիեղ խօսք:
ԲԱՐԲԱՋԵԼ, **ԲԱՐԲԱՋԵԼ**, նբ. Վայրիվերոյ՝ արեղցիեղ խօսել:
ԲԱՐԲԱՌ, գ. 1. Մարդկային ձայն:
 2. Լեզուի տարածքային տարբերակ:
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. Բարբառների գիտութիւն:
ԲԱՐԲԱՌԵԼ,
ԲԱՐԲԱՌԻԼ, ն. չբ. Մարդկային ձայն արտասանել:
ԲԱՐԲԱՐՈՍ, ան. գ. Անուն, որ տալիս էին հին յոյներն ու հռոմայեցիները ուրիշ ազգերին: Վայրենի:
ԲԱՐԲԱՐՈՍԱԲԱՐ, մկ. Բարբարոսի պէս, անգթաբար:
ԲԱՐԲԱՐՈՍԱՆԱԼ, չբ. Բարբարոս դառնալ:
ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԻՒՆ, գ. Բարբարոս լինելը:
ԲԱՐԳԱԻԱՃ,
 * **ԲԱՐԳԱԻԱՃԱԿԱՆ**, ան. Պերճ, փառաւոր, անուանի:
ԲԱՐԳԱԻԱՃԱՆԱԼ, Տ. Բարգաւաճել:
ԲԱՐԳԱԻԱՃԵԼ, նբ. Փառաւորել, պատ-

ուել:
 * **ԲԱՐԳԱԻԱՃՈՒՆ**, ան. Բարգաւաճ, ծաղկած, յառաջադէմ:
 + 1. **ԲԱՐԴ**, գ. 1. Չորացրած խոտի դեղ:
 + 2. Մի երեսնեակ:
 2. **ԲԱՐԴ**, ան. Դիզուած, կուտակուած, խրթին: Հկո. Պարզ:
ԲԱՐԴԱՍԱՆՑ, ան. (Քրկն.) Բարդուած էւ ածանցուած միաժամաակ:
ԲԱՐԴԱԿԱՋԱՍ, ան. Խրթին ձեւ, կառուցուածք ունեցող:
ԲԱՐԴԱՀԻՄ, գ. (փխբ.) Բարդ հիւսուածք՝ կառուցուածք ունեցող:
ԲԱՐԴԱՆԱԼ, չբ. Բարդ դառնալ:
ԲԱՐԴԵԼ, նբ. 1. Դիզել, կուտակել, դարսել: 2. (Քրկն.) Պարզ բառերից բարդ բառ կազմել:
ԲԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. Բարդ՝ խառնուած՝ խճճուած՝ դժուարալոյծ լինելը:
ԲԱՐԵԱՑԱԿԱՍՍ, ան. Մէկին բարիք կամեցող:
ԲԱՐԵԱՑԱԿԱՍՍՈՒԹԻՒՆ, գ. Բարեացակամ լինելը:
ԲԱՐԵԲԱՆՍ, ան. Բարի բախտ ունեցող, բախտատր:
ԲԱՐԵԲԱՆՍԱԲԱՐ, մկ. Բարի բախտից, բախտի յաջողելով:
ԲԱՐԵԲԱՆՍՈՒԹԻՒՆ, գ. Բարեբախտ լինելը:
ԲԱՐԵԲԱՆԵԼ, նբ. Բարին՝ լաւը ասել:
ԲԱՐԵԲԱՇԽ, ան. Բարիք բաշխող:
ԲԱՐԵԲԱՐՈՑ, ան. Բարի բարք ու վարք ունեցող:
 * **ԲԱՐԵԲԵՂՈՒՆ** } ան. Լաւ բերք բերող:
 ԲԱՐԵԲԵՐ }
ԲԱՐԵԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Բարեբեր լինելը:
ԲԱՐԵԲՈՅՍ, ան. Լաւ բուսած:
ԲԱՐԵԲՈՅՐ, ան. Անուշաբոյր:
 * **ԲԱՐԵԲՈՒՑ**, ան. Լաւ կերակրուող:
ԲԱՐԵԳԵՂ, ան. Շատ գեղեցիկ:
ԲԱՐԵԳՈՒԹԻՒՆ, գ. Բարեզուք լինելը:
ԲԱՐԵԳՈՐԾ, ան. Նա որ բարի բան է անում:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ, ան. Բարեգործության վերաբերեալ:
ԲԱՐԵԳՈՐԾԵԼ, չբ. Բարի գործ անել:
ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Բարի գործ անելը:
ԲԱՐԵԳՈՒԹ, ան. Շատ գթած, գթասիրտ:
ԲԱՐԵԳՈՒՇԱԿ, ան. Լուս բան գուշակոյ:
ԲԱՐԵԴԱԻԱՆՈՒԹԻՒՆ, գ. (Կրօն.) Բարի ճշմարիտ դասանք ունենալը:
ԲԱՐԵԴԷՄ, ան. Բարի դէմք ունեցող, գեղեցկադէմ:
ԲԱՐԵԴԷՊ, ան. Յարմար, տեղին:
ԲԱՐԵԴԻՐ, ան. Լուս դիրք ունեցող:
ԲԱՐԵԶԱՐԴ, ան. Լուս զարդարում:
ԲԱՐԵԶԱՐԴԵԼ, նբ. Չարդարել. վայելչացնել:
ԲԱՐԵԶԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. Բարեզարդ լինելը:
ԲԱՐԵԶԱՐԻԱԿ, ան. Բարի զուակներ ունեցող:
*** ԲԱՐԵԶԳՕՆ**, ան. Շատ զգօն:
ԲԱՐԵԶՈՒԱՐԹ, ան. Շատ զուարթ:
ԲԱՐԵԺԱՄ
*** ԲԱՐԵԺԱՄԱՆԱԿ** } ան. Յարմար ժամանակին:
ԲԱՐԵԺՊԻՏ, ան. Քաղցր ժպիտ ունցող:
ԲԱՐԵԼԱԻ, ան. Շատ լուս:
ԲԱՐԵԼԱԻԵԼ, նբ. Բարուրքել:
ԲԱՐԵԼԱԻՈՒԹԻՒՆ, գ. Բարելու լինելը:
ԲԱՐԵԼԱԻՈՒԻՄ, գ. Բարելուելը:
ԲԱՐԵՆԱՌՆ, ան. Ոչ շատ տաք:
ԲԱՐԵՆԱՌՆԵԼ, նբ. Բարեխառն դարձնել:
ԲԱՐԵՆԱՌՆՈՒԹԻՒՆ, գ. Բարեխառն լինելը:
ԲԱՐԵՆԻՂՃ, ան. Բարի խիղճ ունեցող, խղճմտանքով վարուող:
ԲԱՐԵՆԻՂՃՈՒԹԻՒՆ, գ. Բարեխիղճ լինելը:
ԲԱՐԵՆՆԱՄ, ան. Լուս խնամք տանող:

ԲԱՐԵՆՆԱՄԵԼ, նբ. Լուս խնամել:
ԲԱՐԵՆՈՐՀՈՒՐԴ, ան. Բարին մտածող:
ԲԱՐԵՆՐԱՏ, ան. Բարին խրատող:
ԲԱՐԵՆՐԱՏՈՒԹԻՒՆ, գ. Բարեխրատ լինելը:
ԲԱՐԵՆՈՂ, ան. Խոհեմ, խելացի:
ԲԱՐԵՆՈՍ, ան. Բարի քաղցր խօսող:
ԲԱՐԵՆՈՍԱԿԱՆ, ան. Բարեխօսության վերաբերեալ:
ԲԱՐԵՆՈՍԵԼ, չբ. Բարեխօսութիւն անել:
ԲԱՐԵՆՈՍՈՒԹԻՒՆ, գ. Բարեխօս լինելը:
ԲԱՐԵՏՆԴՈՒԹԻՒՆ, գ. Բարեծնունդ՝ ազնուատոհմ լինելը:
ԲԱՐԵՏՆՈՒՆԴ, ան. Ազնիւ ծագումից:
ԲԱՐԵԿԱԶՄ, ան. Նուրբ՝ գեղեցիկ կազմուածք ունեցող:
ԲԱՐԵԿԱԶՄՈՒԹԻՒՆ, գ. Բարեկազմ լինելը:
ԲԱՐԵԿԱԹ, ան. Մաքուր կաթ տուող:
ԲԱՐԵԿԱՄ, ան. Բարիք կամեցող մէկին:
ԲԱՐԵԿԱՄԱԲԱՐ, մկ. Իբրեւ բարեկամ, բարեկամի պէս:
ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ, ան. Բարեկամին յատուկ:
ԲԱՐԵԿԱՄԱՆԱԼ, չբ. Բարեկամ դառնալ:
ԲԱՐԵԿԱՄԱՊԷՄ, Տ. Բարեկամաբար:
ԲԱՐԵԿԱՄԱՑՆԵԼ, անց. ձեւ Բարեկամանալի:
*** ԲԱՐԵԿԱՄԵՑՈՒԹԻՒՆ**, գ. Բարիք կամենալը:
ԲԱՐԵԿԱՄՈՒՇԻ, գ. Կին բարեկամ:
ԲԱՐԵԿԱՌՈՅՑ, ան. Լուս կառուցում:
ԲԱՐԵԿԱՐԳ, ան. Լուս կարգեր ունեցող:
ԲԱՐԵԿԱՐԳԵԼ, նբ. Բարեկարգ դարձրնել:
ԲԱՐԵԿԱՐԳԻՉ, ան. Նա որ բարեկարգում է, բարեկարգող:
ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. Բարեկարգ

<p>լինելը: ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ, գ. Բարեկարգելը: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ, գ. (Եկեղ.) 1. Լաւ ապրելու օր: 2. Յատկապէս մեծ պասին նախընթաց շարաթը: ԲԱՐԵԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ, գ. Լաւ՝ առողջ կեանք: ԲԱՐԵԿԵՐՊ, ած. Վայելչատես: ԲԱՐԵԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Բարեկերպ լինելը: ԲԱՐԵԿԵՐՏ, ած. Գեղեցիկ՝ սիրուն շինուած: ԲԱՐԵԿԵՏԻԿ, ած. Լաւ ապրող: ԲԱՐԵԿԵՏՈՒԹԻՒՆ, գ. Բարեկեցիկ կեանք: ԲԱՐԵԿԻՐԹ, ած. մկ. Լաւ կրթուած: ԲԱՐԵԿԻՐԹՈՒԹԻՒՆ, գ. Բարեկիրթ լինելը: ԲԱՐԵԿԻՐԹՈՐԷՆ, մկ. Բարեկիրթ կերպով: ԲԱՐԵԿՐՕՆՈՒԹԻՒՆ, գ. (Կրօն.) Բարեկրօն՝ բարեպաշտ լինելը: ԲԱՐԵՀԱՃ, ած. Նա որ լաւ է տրամադրուած: ԲԱՐԵՀԱՃԵԼ, ջբ. Բարեհաճ՝ լաւ տրամադրուած լինել: ԲԱՐԵՀԱՃՈՅ, ած. Շատ հաճելի: ԲԱՐԵՀԱՃՈՒԹԻՒՆ, գ. Բարեհաճ լինելը: ԲԱՐԵՀԱՍ, ած. Ախորժեղի համ ունեցող: ԲԱՐԵՀԱՍԲԱԻ, ած. Լաւ համբաւ ունեցող: ԲԱՐԵՀԱՍԲԱԻԵԼ, նբ. Բարի համբաւ տարածել: ԲԱՐԵՀԱՍԲԱԻՈՒԹԻՒՆ, գ. Բարեհամբաւ լինելը: ԲԱՐԵՀԱՍԲՈՅՐ, ած. Քաղցր, հաճելի: * ԲԱՐԵՀԱՆԴԵՍ, ած. Գովելի: ԲԱՐԵՀԱՍԱԿ, ած. Վայելուչ հասակով: ԲԱՐԵՀԱԻԱՆ, ած. Շուտ հաւանող: ԲԱՐԵՀՆՉԻՒՆ, ած. Լաւ հնչող:</p>	<p>ԲԱՐԵՀՈԳԱԲԱՐ, մկ. Բարեհոգի կերպով: ԲԱՐԵՀՈԳԻ, ած. Հոգով բարի, բարեմիտ: ԲԱՐԵՀՈԳՈՒԹԻՒՆ, գ. Բարեհոգի լինելը: ԲԱՐԵՀՈԶԱԿ, ած. Լաւ հոշակող կմ հոշակուած: ԲԱՐԵՀՐԱԻԷՐ, ած. Դեպի բարին հրաւիրող: * ԲԱՐԵՀՐԵՇՏԱԿ, ած. գ. (Կրօն.) Բարու հրեշտակ: ԲԱՐԵՁԱՅՆ, Տ. Քաղցրաձայն: ԲԱՐԵՁԵԻ, ած. Լաւ ձեւ՝ կերպարանք ունեցող: ԲԱՐԵՁԵԻԵԼ, նբ. Բարեձեւ դարձնել: ԲԱՐԵՍԱՂԹԱՆՔ, գ. Բարեմաղթութիւն: ԲԱՐԵՍԱՂԹԵԼ, նբ. Մէկի համար բարիք մաղթել: ԲԱՐԵՍԱՍՆՈՒԹԻՒՆ, գ. Լաւ վիճակ ունենալը: ԲԱՐԵՄԻՏ, ած. Միտքը բարի: ԲԱՐԵՄՏՈՒԹԻՒՆ, գ. Բարեմիտ լինելը: ԲԱՐԵՄՏԱԲԱՐ } մկ. Բարեմիտ կերպով: ԲԱՐԵՄՏՕՐԷՆ } ԲԱՐԵՑԱՂԹ, ած. Քաջայայղթ: ԲԱՐԵՑԱՁՈՂ, ած. Յաջող: ԲԱՐԵՑԱՐՄԱՐ, ած. Լաւ յարմարած: ԲԱՐԵՑԻՇՍԱԿ, ած. Լաւ յիշատակ թողած: ԲԱՐԵՑՈՅՍ, ած. Լաւ յոյս՝ յոյսեր ունեցող: ԲԱՐԵՑՈՒՍՈՒԹԻՒՆ, գ. Բարեյոյս լինելը: ԲԱՐԵՅՕՂ, ած. Բարեձեւ: ԲԱՐԵՅՕԺԱՐ, ած. Բարի բանին յօժարող: ԲԱՐԵՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ, գ. Բարի յօժարութիւն: ԲԱՐԵՆԱԽԱՆՁ, ած. Բարի բանի նախանձող: * ԲԱՐԵՆԻՇ, ած. Լաւ նիշ:</p>
--	---

ԲԱՐԵՆՈՐՈՎԵԼ, նբ. Նորոզել՝ լաւացնելու նպատակով:
ԲԱՐԵՆՈՐՈՎԵԼԻ, ած. Ինչ որ պէտք է կմ կարելի է բարենորոզել:
ԲԱՐԵՆՈՐՈՎԻՉ, ած. գ. Բարենորոզող:
ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒԹԻՒՆ, գ. Նորոզուած՝ լաւացրած կարգը՝ դրութիւնը:
ԲԱՐԵՆՈՐՈՎՈՒՄ, գ. Բարենորոզելը:
ԲԱՐԵՆՈՐՈՎՉԱԿԱՆ, ած. Բարենորոզութեան վերաբերեալ:
ԲԱՐԵՆՊԱՍՍ, ած. Լաւ եւ նպաստաւոր:
ԲԱՐԵՆՊԱՍՏԱԿ, ած. Բարի նպատակ ունեցող:
ԲԱՐԵՇԱՏ, ած. Բարիքներով առատ:
ԲԱՐԵՇԷՆ, ած. Լաւ շինուած:
ԲԱՐԵՇԻՆՈՒԹԻՒՆ, գ. Բարեշէն լինելը:
ԲԱՐԵՇՆՈՐՉ, ած. Բարիք շնորհող:
ԲԱՐԵՇՐՁԵԼ, նբ. Բարեշրջում առաջ բերել:
ԲԱՐԵՊԱՇՏ, ած. (Կրօն.) Նա որ բարի ուղիղ՝ ճշմարիտ պաշտամունք ունի:
ԲԱՐԵՊԱՇՏԱԲԱՐ, մկ. (Կրօն.) Իբրեւ բարեպաշտ:
ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ, ած. (Կրօն.) Բարեպաշտին կմ բարեպաշտութեան յատուկ:
ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ. (Կրօն.) Բարեպաշտ լինելը:
ԲԱՐԵՊԱՏԵՉ, ած. Շատ պատեհ:
ԲԱՐԵՊԱՏԵՉՈՒԹԻՒՆ, գ. Պատեհ՝ յարմար առիթ:
*** ԲԱՐԵՊԱՏՃԱՆ**, ած. Լաւ պատճառ ունեցող:
ԲԱՐԵՊՏՈՒՂ, ած. Առատ պտղաբերող, արգասաւոր:
ԲԱՐԵՋԱՆ, ած. Ջանքով՝ ջանասիրութեամբ կատարուած:
*** ԲԱՐԵՍԱՅՈՒԹԻՒՆ**, Բարեխօսութիւն:
ԲԱՐԵՍԷՐ, ած. Բարութիւնը սիրող:
ԲԱՐԵՍԻՐԱԲԱՐ, մկ. Իբրեւ բարեսէր:
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ, ած. Բարեսէր:
ԲԱՐԵՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Բարեսէր լինելը:

ԲԱՐԵՍԻՐՏ, ած. Սիրտը բարի:
ԲԱՐԵՍՆՈՒՆՂ, ած. Լաւ սնուցանող:
ԲԱՐԵՍՏՈՒԵՐ, ած. Լաւ ստուեր ունեցող:
ԲԱՐԵՍՐՏՈՒԹԻՒՆ, գ. Բարեսիրտ լինելը:
ԲԱՐԵՎԱԽՃԱՆ, ած. Բարի վախճան ունեցող:
ԲԱՐԵՎԱՅԵԼՈՒՉ, ած. մկ. Շատ վայելուչ, բարեձեւ:
ԲԱՐԵՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ, գ. Բարեվայելուչ լինելը:
ԲԱՐԵՎԻՃԱԿ, ած. Լաւ վիճակի մէջ գտնուող:
ԲԱՐԵՏԵՍ, ած. Գեղեցիկ:
ԲԱՐԵՏԵՍՈՒԹԻՒՆ, գ. Բարեսէս լինելը:
ԲԱՐԵՏՈՉՄ, ած. Լաւ տոհմի սերունդ:
ԲԱՐԵՏՈՉՄԻԿ, S. Բարեսոհմ:
ԲԱՐԵՐԱՐ, ած. Նա՝ որի արածը բարիք է:
ԲԱՐԵՐԱՐԱԿԱՆ, ած. Բարերարին յատուկ:
ԲԱՐԵՐԱՐԵԼ, չբ. Իբրեւ բարերար լաւութիւն անել մէկին:
ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. Բարերար լինելը:
ԲԱՐԵԻ, մկ. միջ. Ողջոյնի եւ բարեմաղթութեան խօսք:
+ ԲԱՐԵԻԱԳԻՐ, ԲԱՐՈՎԱԳԻՐ, գ. Ընտանեկան նամակ:
ԲԱՐԵԻԵԼ, նբ. Բարեւ տալ:
ԲԱՐԵԻԷՏ, ած. Բարիքներով լեցուն:
*** ԲԱՐԵՓԱՐԹԱՄ**, ած. Ճոխ, շատ հարուստ:
ԲԱՐԵՓՈՒՍԱԿԱՆ, ած. Բարեփոխութիւն պարունակող:
ԲԱՐԵՓՈՒՆԵԼԻ, ած. Ինչ որ կարելի է կմ պէտք է բարեփոխել:
ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄ, գ. Բարեփոխելը:
ԲԱՐԻ, ած. 1. Լաւ, գովելի: 2. Օգտակար: 3. Հկո. Չար:

ԲԱՐԻԱՆԱԼ, չբ. *Բարի դասնայ*:
ԲԱՐԻ-ԲԱՐԻ, ած. գ. *Ինչ որ Բարի լաւ է*:
 + **ԲԱՐԻՆՈՒՍ**, գ. *Առաւօտեան լուսա-
 քաղք*:
ԲԱՐԻՈՆ, գ. (քիմ.) *Պարզ մետաղ ոսկե-
 դեղին գոյնով*:
 + **ԲԱՐԽԱՆԱ**, գ. (Բուս.) *Բաղադրեալ-
 ների ընտանիքին պատկանող խոտ*:
ԲԱՐԿ, ած. *Կրքոտ, զայրացկոտ*: *Բորբ*:
ԲԱՐԿԱՃԱՅԹ, ած. *Բարկ թունդ ճայ-
 թող*:
ԲԱՐԿԱՆԱԼ, բ. *Չայրանայ*:
ԲԱՐԿԱՍԻՐՏ, ած. *Բարկ՝ բորբոքուող
 սիրտ ունեցող*:
ԲԱՐԿԱՑԱՅՑ, ած. *Սաստկապէս ցայ-
 տող*:
ԲԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. *Թունդ լինելը*: *Չայ-
 բոյթ*:
ԲԱՐԿՕՂԻ, S. *Կոնեակ*:
ԲԱՐՁ, գ. *Կտակ պարկ*: *Տոսարակ*:
 * **ԲԱՐՁԱԳՈՐԾ**, ած. գ. *Բարձեր եւ ընդ-
 հանրապէս անկողնի պարագաներ
 պատրաստող (արհեստաւոր)*:
 + **ԲԱՐՁԱԿԱԼ**, գ. *Բարձր պահող*:
ԲԱՐՁԱԿԻՑ, գ. *Աթոռակից, սեղանա-
 կից*:
ԲԱՐՁԱՊԱՆ, գ. *Զինուորի երանքը
 պահպանող զրահ*:
ԲԱՐՁԸՆԿԵՐ, գ. *Ամուսին*:
 * **ԲԱՐՁԸՆՏԻՐ**, ած. *Ընտրուած առաջին
 բարձի համար*:
ԲԱՐՁԻԹՈՂԻ, ած. մկ. *Կիսատ թերի
 թողնուած*:
ԲԱՐՁՈՂԱԿԱՆ, ած. *(Օանրութիւն)
 վերցնելու, վերցնող*:
ԲԱՐՁՈՄԿՐ, գ. (Կազմախ.) *Բարձի
 ազդրի՝ սրունքի վերեւի ոսկրը*:
ԲԱՐՁՈՒՄ, գ. *Վեր վերցնելը*:
ԲԱՐՁՈՒՆՔ, գ. *Բարձրադիր տեղ*:
ԲԱՐՁՐ, ած. *Ինչ որ զգալի տարածու-
 թիւն ունի զագաթնահայեաց ուղղու-
 թեամբ*:

* **ԲԱՐՁՐԱԲԱՆ**, ած. մկ. *Բարձր խօսող*:
ԲԱՐՁՐԱԲԱՐԲԱՌ, ած. մկ. *Բարձր
 բարբառով, բարձր ձայնով*:
ԲԱՐՁՐԱԲԵՐՁ, ած. *Բարձր-բարձր,
 շատ բարձր*:
ԲԱՐՁՐԱԲՆԱԿ, ած. *Բարձր տեղերում
 բնակուող*:
ԲԱՐՁՐԱԲՈՒՆ, ած. *Բարձր բուն ունե-
 ցող*:
ԲԱՐՁՐԱԳԱԳԱԹ, ած. *Բարձր զագաթ
 ունեցող*:
ԲԱՐՁՐԱԳԱՀ, ած. *Բարձրադիր*:
ԲԱՐՁՐԱԳԵՂ, ած. *Վայելչագէղ*:
ԲԱՐՁՐԱԳՈՅՆ, բաղդ. աստ. *Բարձրի 1.
 Աւելի բարձր*:
ԲԱՐՁՐԱԳՈՉ, ած. մկ. *Բարձր գոչող*:
ԲԱՐՁՐԱԴԷԶ, ած. *Բարձր դիզուած*:
ԲԱՐՁՐԱԴԵՏԱԿ, ած. *Բարձրից դիտող,
 վերեւից նայող*:
ԲԱՐՁՐԱԴԻՐ, ած. *Բարձր դիրք ունե-
 ցող*:
ԲԱՐՁՐԱԹՈՒԶ, ած. *Բարձր՝ դէպի
 բարձրը թռչող*:
ԲԱՐՁՐԱԹՈՒԶՈՒԹԻՒՆ, *Թռչող սարքի
 գտնուելու կէտի հետաւորութիւնն ուղ-
 դածիզով գրոյական հարթութիւնից*:
ԲԱՐՁՐԱԽՕՍ, ած. *Բարձր ձայնով
 խօսող*:
ԲԱՐՁՐԱԾՍԱՅՐ, ած. *Բարձրակատար*:
ԲԱՐՁՐԱԾՆՈՒՆՂ, ած. *Բարձր՝ ազնը-
 ուական ծագում ունեցող*:
ԲԱՐՁՐԱԿԱԿԱՆ, ած. մկ. *Բարձրաձայն
 ողորով*:
ԲԱՐՁՐԱԿԱՌՈՅՑ, ած. *Բարձր կա-
 ռուցուածք ունեցող*:
ԲԱՐՁՐԱԿԷՏ, գ. *Բարձրագոյն կէտը*:
ԲԱՐՁՐԱԿՈՀԱԿ, ած. *Ալիքները բարձր*:
ԲԱՐՁՐԱԿՐՈՒՆԿ, ած. *Բարձր կրունկ
 ունեցող*:
ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՑ, ած. *Դէպի վեր նայող*:
ԲԱՐՁՐԱՀԱՍԱԿ, ած. *Բարձր հասակ
 ունեցող*:

ԲԱՐՁՐԱՀԱՍՈՒԹԻՒՆ, Առաւելագոյն բարձրութիւնը, որին կարող է հասնել սարքը:

ԲԱՐՁՐԱՀՈՎԻ, ած. Վսեմ հոգու տէր:

ԲԱՐՁՐԱՀՈՉԱԿ, ած. Բարձր ձայնով հռչակուող:

ԲԱՐՁՐԱԶԱՅՆ, ած. մկ. Բարձր ձայնով:

ԲԱՐՁՐԱԶԱՅՆԵԼԻ, ած. Բարձրաձայն ասուելու ենթակայ:

ԲԱՐՁՐԱԶԱՅՆՈՒՄ, գ. Բարձրաձայնելը:

ԲԱՐՁՐԱՂԱՂԱԿ, մկ. Բարձր աղաղակով:

ԲԱՐՁՐԱՃԱԿԱՍ, ած. Բարձր ճակատ ունեցող:

ԲԱՐՁՐԱՄԻՏ, ած. Մեծամիտ:

ԲԱՐՁՐԱՍՈՒՐ, ած. Անառիկ:

ԲԱՐՁՐԱՍՏՈՒԹԻՒՆ, գ. Բարձրամիտ լինելը:

ԲԱՐՁՐԱՅԱՐԿ, ած. Բարձր յարկ կմ յարկեր ունեցող:

ԲԱՐՁՐԱՆԱՆ, չբ. Դէպի վեր շարժուել:

ԲԱՐՁՐԱՆԻՇ, ած. Բարձրութեամբ նշանաւոր:

ԲԱՐՁՐԱՇԵՆ, ած. Բարձր շինուած:

ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ, ած. Բարձր շնորհ ունեցող:

ԲԱՐՁՐԱՉԱՓ, գ. (Ֆիզ.) Գործիք, որով չափում են մի տեղի բարձրութիւնը ծովի մակերէնոյթից:

ԲԱՐՁՐԱՊԱՍ, ած. Բարձր պատեր ունեցող:

ԲԱՐՁՐԱՊԱՍԻԻ, ած. Բարձր պատի ունեցող:

ԲԱՐՁՐԱՊԱՐԻՄՊ, ած. Բարձր պարիսպ ունեցող:

ԲԱՐՁՐԱՍԱՂԱՐԹ, ած. Բարձր ճիւղեր ու տերեւներ ունեցող:

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ, ած. Պատուի բարձր աստիճան ունեցող:

ԲԱՐՁՐԱՍՐՈՒՆՔ, ած. Բարձր սրունքներ ունեցող:

ԲԱՐՁՐԱՎԻՋ, ած. Վիզը բարձր երկար:

ԲԱՐՁՐԱՐԺԱՆ, ած. Բարձր արժանիքի տէր:

ԲԱՐՁՐԱՐԺԷՔՈՒԹԻՒՆ, գ. Բարձրարժէք լինելը:

ԲԱՐՁՐԱՑԱՏԿԵԼ, չբ. Բարձրացատկ կատարել:

ԲԱՐՁՐԱԻԱՆՂԱԿ, ած. գ. Բարձր դիրք ունեցող:

ԲԱՐՁՐԱՔԱՆՂԱԿ, գ. Բարձր քանդակ:

* **ԲԱՐՁՐԱՔԻԹ**, ած. Բարձր քիթ ունեցող:

ԲԱՐՁՐԵԱԼ, ած. գ. (Կրօն.) Բարձր կմ բարձր եղող:

+ **ԲԱՐՁՐԿԵԿ**, ած. Քիչ բարձր:

ԲԱՐՁՐՈՐԱԿ, ած. Բարձր որակի:

ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ, գ. Բարձր լինելը:

ԲԱՐՁՐՈՒՂԷՇ, ած. Բարձրասաղարթ:

ԲԱՐՁՐՕՁԻՔ, ած. Բարձր օձիք ունեցող:

ԲԱՐՁՐԻՆՔ, գ. Բարձր վայր:

ԲԱՐՈՑԱՐՆԱՆԵԿԱՆ, ած. Բարոյական եւ բնտանկան:

ԲԱՐՈՑԱԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ, ած. Բարոյական եւ իրաւագիտական:

ԲԱՐՈՑԱԽՕՍ, ած. Նա որ խօսում է կենդանիների բարքերի ու բնութեան մասին:

ԲԱՐՈՑԱԽՕՍԱԿԱՆ, ած. Բարոյախօսութեան վերաբերեալ:

ԲԱՐՈՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ, գ. Գիտութիւն կանոնների բարին գործելու:

ԲԱՐՈՑԱԼԻ } ած. Առաքինի:
ԲԱՐՈՑԱԼԻՑ }

ԲԱՐՈՑԱԿԱՆ, ած. Ինչ որ համապատասխան է բարոյականութեան:

ԲԱՐՈՑԱԿԱՆԱՑՆԵԼ, անց. բ. Բարոյական դարձնելը:

ԲԱՐՈՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ամբողջութիւնը այն զգացումների, որոնք տուեալ հասարակութեան մէջ ճանաչուում են իբրեւ հասարակական բարի եւ որոնք հասարակութեան անդամը երեւան են բերում ազատ կամքով:

իղձերի՝ երազանքների մասին խօսք:

ԸՂԱՎԱՆ, ան. 1. Բղձ՝ փափագ արտա-
յայտող: 2. Ստորադասական եղանակը:

ԸՂԱՎԵՐՏ, ան. Փափագելի:

* **ԸՂԱՎԵՏ**, գ. Ըղձացած՝ փափագած
կէտը:

ԸՂԱՆՈՅՇ, գ. Յաւերժահարս:

ԸՂԱՎԱՌ, ան. Տենչերով տոչորուած:

* **ԸՂԱՓՈՓԱԳ**, ան. Շատ ըղձալի եւ
փափագելի:

* **ԸՄԲԵՐԵԼ, ԸՄԲԵՐՈՒԹԻՒՆ**, Ս. Համբե-
րել, համբերութիւն:

ԸՄԲԵՇ, գ. Ուժեղ մարդ, որ գօտեմար-
տում է ախոյեանի հետ:

ԸՄԲԵՍՄԱՐՏ, գ. Ըմբիշների մարտ:

ԸՄԲԵՍՄԱՐՏԵԼ, չբ. Բբրեւ ըմբիշ
մարտնչել:

ԸՄԲԵՍՄԱՐՏԻՎ, գ. Նա որ մարտնչում
է իբրեւ ըմբիշ:

ԸՄԲԵՍՄԱՐՏՈՒԹԻՒՆ, գ. Ըմբշական
մարտ:

ԸՄԲՈՇԽԵԼ, բ. Ճաշակել, վայելել:

ԸՄԲՈՍ, ան. Դիմադարձութիւն անող:

ԸՄԲՈՍՏԱԲԱՐ, մկ. Բբրեւ ըմբոստ:

ԸՄԲՈՍՏԱՎԱՆ, ան. Ըմբոստի՝ ապրս-
տամբի վերաբերող:

ԸՄԲՈՍՏԱՀՈԳԻ, ան. Ըմբոստ, անհնա-
զանդ [հոգի ունեցող]:

ԸՄԲՈՍՏԱՄԻՏ, ան. Ըմբոստ մտքով:

ԸՄԲՈՍՏԱՆԱԼ, չբ. Ապստամբիլ:

<p>ԸՄԲՈՍՏԱՑՈՒՄ, գ. <i>Ըմբոստանայր</i>: ԸՄԲՈՍՏՈՒԹԻՒՆ, գ. <i>Ըմբոստ լինելը</i>: ԸՄԲՈՆԵԼ, նբ. <i>Հասու լինել</i>: ԸՄԲՈՆԵԼԻ, ած. <i>Ինչ որ կարելի է ըմբռնել</i>: ԸՄԲՈՆՈՂԱԿԱՆ, ած. <i>Ըմբռնելու ընդունակ</i>: ԸՄԲՈՆՈՂԱՊԷՍ, Տ. <i>Ըմբռնողաբար</i>: ԸՄԲՈՆՈՒՄ, գ. Փոխ. <i>Ըմբռնելը</i>: ԸՄՊԱՆ, գ. <i>Ընկանակ</i>: ԸՄՊԱՆԱԿ, գ. <i>Խմելու բաժակ</i>: <i>Աման</i>: ԸՄՊԵԼ, Տ. <i>Խմել</i>: ԸՄՊԵԼԻ, ած. <i>Ինչ որ պէտք է խմել</i>: ԸՆԲԵՐԱՆԵԼ, ԸՆԲՈՆԵԼ, ԸՆԳԵՂՁԱՆԵԼ, Տ. <i>Ըմբերանել</i>: ԸՆ, նախդր. <i>Գործ էր ածուում բոլոր թեք հոլովների հետ</i>: ԸՆԱԲԵՐ, ած. <i>Հունդ բերող</i>: ԸՆԱԲՈՑՄ, ած. <i>Միասին բուսած</i>: ԸՆԱՍԾԻՆ, Տ. <i>Ընդարոյս</i>: ԸՆԱՄԿԱՂԱՍԲ, գ. (Բուս.) <i>Կաղամբի մի տեսակ</i>: ԸՆԱՄԿԵՐ, ած. <i>Ընդեղենով կերակրումուող</i>: ԸՆԱ ԱՍԷՆԸ, ԸՆԱՍԷՆԸ, մկ. <i>Բոլորը միասին</i>: ԸՆԱ ԱՌԱՋ, մկ. <i>Դէպի առաջ դիմաւորելու</i>: ԸՆԱԱՌԱՋԵԼ, չբ. <i>Ընդ առաջ ելնել</i>: ԸՆԱՍԷՐ, ած. <i>Ունդ ընդեղէն սիրող</i>: ԸՆԱՎԱՃԱՌ, ած. գ. <i>Ընդեղէն վաճառող</i>: ԸՆԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ, գ. <i>Ընդավաճառ լինելը</i>: ԸՆԱՐՁԱԿ, ած. 1. <i>Արձակ, լայնարձակ</i>: 2. Փոխ. <i>Չսահմանափակուած, չնեղուած</i>: 3. Հկո. <i>Համառօտ</i>: 4. Հկո. <i>Կրճատուած</i>: ԸՆԱՐՁԱԿԱԲԱՆ, ած. <i>Մանրամասն խօսող</i>: ԸՆԱՐՁԱԿԱԳՈՑՆ, բաղդ. աստ. <i>Ընդարձակի</i>: </p>	<p>ԸՆԱՐՁԱԿԱԾԱԻԱԼ, ած. <i>Ընդարձակ ծաւարուած</i>: ԸՆԱՐՁԱԿԱՊԷՍ, Տ. <i>Ընդարձակաբար</i>: ԸՆԱՐՁԱԿԱՍՐԱՀ, ած. <i>Ընդարձակ սրահ ունեցող</i>: ԸՆԱՐՁԱԿԵԼ, նբ. <i>Ընդարձակ լայն մեծ դարձնել</i>: ԸՆԱՐՁԱԿԵՑՆԵԼ, Տ. <i>Ընդարձակել</i>: ԸՆԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ, գ. <i>Ընդարձակ լինելը</i>: ԸՆԱՐՁԱԿՈՒՄ, գ. <i>Ընդարձակելը</i>: ԸՆԱՐՁԱԿՕՐԷՆ, մկ. <i>Ընդարձակ կերպով</i>: ԸՆԱՐՄԱՆԱԼ, չբ. 1. <i>Սաստիկ գարմանքից ապշել</i>: 2. <i>Անզգայանայ</i>: ԸՆԱՐՄԱՑՈՒՄ, գ. <i>Ընդարմանայր</i>: ԸՆԱՐՄԱՑՈՒՑԻՉ, ած. <i>Ընդարմացնող</i>: ԸՆԱԳԾԵԼ, բ. <i>Որեւէ բանի տակ գծել, շեշտել</i>: ԸՆԱԳԾՈՒՄ, գ. <i>Ընդգծելը</i>: ԸՆԱԳՐԿԵԼ, Տ. <i>Ընկրկել</i>: ԸՆԱԳՐԿՈՑԹ, <i>Մեկի իշխանութեան տակ գտնուող տարածք, երկիր, կալուածք</i>: ԸՆԱԳՐԿՈՒՄ, գ. <i>Ընդգրկուելը</i>: ԸՆԱԴԷՍ, ած. <i>Դիմացը դէմը եղած</i>: ԸՆԱԴԻՄԱԲԱՆ, Տ. <i>Ընդդիմախօս</i>: ԸՆԱԴԻՄԱԲԱՆԵԼ, բ. <i>Դիմադարձել</i>: ԸՆԱԴԻՄԱԴԱՐՁ, Տ. <i>Դիմադարձ</i>: ԸՆԱԴԻՄԱԴԻՐ, ած. <i>Դիմադրող, դէմ հակառակ կանգնող</i>: ԸՆԱԴԻՄԱԴՐԱԿԱՆ, ած. <i>Ընդդիմադրին յատուկ</i>: ԸՆԱԴԻՄԱԽՕՍ, ած. գ. <i>Մեկի խօսածին հակառակ խօսող</i>: ԸՆԱԴԻՄԱԽՕՍԱԿԱՆ, ած. <i>Ընդդիմախօսութիւն պարունակող</i>: ԸՆԱԴԻՄԱԽՕՍԵԼ, չբ. <i>Ընդդիմախօսութիւն անել</i>: ԸՆԱԴԻՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ, գ. <i>Մեկի խօսածին հակառակ խօսելը</i>: </p>
--	--

ԸՆԴԴԻՄԱԿ, ան. Հակառակ, իրար հակառակորդ:
ԸՆԴԴԻՄԱԿԱՑՈՒԹԻՒՆ, գ. Ընդդիմակաց լինելը:
*** ԸՆԴԴԻՄԱԿՑԵԼ**, չբ. Հակառակել:
ԸՆԴԴԻՄԱՀԱՐ, ան. Դեմ առ դեմ բախուող:
ԸՆԴԴԻՄԱՍԱՐՏ, ան. Դեմ առ դեմ կրոնուող:
*** ԸՆԴԴԻՄԱՍԱՐՏԱԲԱՐ**, մկ. Ընդդիմամարտ լինելով:
ԸՆԴԴԻՄԱՍԱՐՏՈՒԹԻՒՆ, գ. Դեմ առ դեմ կռուիլը:
ԸՆԴԴԻՄԱՍՈՒ, գ. (դիպվ.): Ընդդիմադիր լինելու մոլուցք ունեցող:
ԸՆԴԴԻՄԱՆԱԼ, չբ. Դեմ կանգնել, դիմադրել:
ԸՆԴԴԻՄԱՊԱՏՆԷՇ, գ. Պատնեշի դեմ կառուցուած պատնեշ:
*** ԸՆԴԴԻՄԱՓԱՌ**, ան. Ուղղափառ վարդապետութեան հակառակ եղող, չարափառ:
*** ԸՆԴԴԻՍՈՐՈՇԵԼ**, չբ. Ջոկուել իբրև հակառակորդ:
ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆ, գ. Բշխող կարգի հակառակ գործողներ:
ԸՆԵԼՈՒԶԱՆԵԼ,
ԸՆԵԼՈՒԶԵԼ, նբ. Դուրս հանել, վեր հանել: Կպցնել: Իրար հիւսել:
*** ԸՆԵԼՈՒՆ**, նբ. Բաժին հանել:
ԸՆԵՂԷՆ, ան. Ունդից՝ հունդից բաղկացած: Կեղեւուած հունդեղէն:
ԸՆԵՐԱԿԱՆ, ան. Ընդերքի վերաբերեալ:
ԸՆԵՐԱՀՄԱՑ, ան. գ. Քուրմ, որ հին ժամանակ հռոմայեցիներին մօտ գուշակութիւններ էր անում:
ԸՆԵՐԿԱՐ, մկ. Երկար ժամանակով, երկար ժամանակ:
*** ԸՆԵՐԿԱՐԱՆԱԼ**, չբ. Երկար ժամանակ տեսել:
ԸՆԵՐԿՐԵԱՅ, S. Ստորերկրեայ:

ԸՆԵՐՔ, գ. 1. Փորոտիք: 2. Փոխ. (Երկրի) խորքերը:
ԸՆԵՐՔԱԳՈՂ, գ. Ընդերքի հարստութիւնը իւրացնող:
ԸՆԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂ, գ. Ընդերքը օգտագործող:
ԸՆԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, գ. Ընդերքի օգտագործում:
*** ԸՆԶԱՐՄԱՆԱԼ**, չբ. Մի բանի վրայ զարմանալ:
*** ԸՆԻԿ**, գ. Փոքր ունդ: Հունդ, արմտիք:
ԸՆԴԱՑՆԱԿԱՆ, ան. Լայնակի, լայնքով կատարուող:
ԸՆԴԱՑՆԵԼ, նբ. Լայնացնել:
ԸՆԴԱՑՆՈՒՄ, գ. Ընդլայնելը:
ԸՆԴԵՁՈՒԵԱՆ, ան. Լեզուի տակ գտնուող:
ԸՆԻԱՌՆ, ան. Խառն:
ԸՆԾՈՎԵԱՅ, ան. Ծովի տակ եղող, ծովի տակի: Սուզանալ:
*** ԸՆԿԱՐԿԵԼ**, նբ. Բերանը փակել:
ԸՆՀԱԿԱՍԿԸ, մկ. Մէկին կմ մի բանի հակառակ:
1. ԸՆՀԱՆՈՒՐ, մկ. Ամէն տեղ:
2. ԸՆՀԱՆՈՒՐ, ան. 1. Ամէնքի վերաբերեալ: 2. Հիմնական, գլխաւոր: 3. Միասին՝ խմբով կատարուող: 4. Անորոշ, մութ: 5. (Քրկն.) Ընդհանուր գոյական անուն:
ԸՆՀԱՆՐԱԳՈՅՆ, բաղդ. աստ. Ընդհանուր ի:
ԸՆՀԱՆՐԱԿԱՆ, ան. Ամէն տեղ տարածում:
ԸՆՀԱՆՐԱՊԷՍ, մկ. 1. Ընդհանուր կերպով: Հկո. Մասնաւորապէս: 2. Առհասարակ, միշտ:
ԸՆՀԱՆՐԱՆԱԼ, չբ. Ընդհանուր դառնալ:
*** ԸՆՀԱՆՐԱՍՓԻՒՌ**, ան. Ամէն տեղ սփռում:
ԸՆՀԱՆՐԱՑՈՒՑԻՉ, ան. Ընդհանրացնող:

ԸՆԴՆԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Ընդհանուր հասարակաց լինելը:*
ԸՆԴՆԱՏ, ած. *Ընդհատուած, կտրուած:*
ԸՆԴՆԱՏԱԲԱՐ, մկ. *Ընդհատ կերպով:*
ԸՆԴՆԱՏԱԿ, գ. *Գաղտնի պայմաններում կատարուող գործ:*
ԸՆԴՆԱՏԱԿԱՆ, ած. *Կտրատուած:*
ԸՆԴՆԱՏԱԿԵԱՅ, ած. *Գաղտնի:*
ԸՆԴՆԱՏԵԼ, նբ. *Մի բանի շարունակութիւնը դադարեցնել:*
ԸՆԴՆԱՏԻՉ, ած. գ. *Նա որ ընդհատում է:*
ԸՆԴՆԱՏՈՒԹԻՒՆ, գ. *Ընդհատ ոչ շարունակ լինելը:*
ԸՆԴՆԱՏՈՒՄ, գ. *Ընդհատելը, ընդհատուելը:*
*** ԸՆԴՆԱՐԿԵԼ**, նբ. *Հարկի տակ դնել:*
ԸՆԴՆԱՐՈՒՄ, գ. 1. *Երկու առարկայի ուժով իրար դիպչելը:* 2. *Երկու անձի մէջ տեղի ունեցած բանակօրի, տարածանութիւն: Բախում:*
ԸՆԴՆԱՐՈՒԵԼ, չբ. *Ընդհարում ունենալ:*
ԸՆԴՆՈՒՄ, մկ. *Անմիջապէս, իսկոյն:*
ԸՆԱՄԻՇՏ, մկ. *Մշտապէս:*
ԸՆԱՄԻՋԱՐԿԵԼ, նբ. *Ընդմիջարկութիւն անել:*
ԸՆԱՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. *Մի բան մէջ ներմուծում, յաւելում շարադրանքի մէջ:*
ԸՆԱՄԻՋԱՐԿՈՒՄ, գ. *Ընդմիջարկելը:*
ԸՆԱՄԻՋԵԼ, նբ. *Ընդհատել:*
ԸՆԱՄԻՋՈՒՄ, գ. *Ժամանակաւոր դադար:*
*** ԸՆԱՄԻՇԵԼ** չբ. *Հակամիտել:*
ԸՆՅԱՏԱԿ, գ. *Յատակի տակը:*
ԸՆՅԱՏԱԿԵԱՅ, ած. *Ընդյատակում կատարուող:*
ԸՆԻՆՇՄԱՐԵԼ, նբ. *Ուրիշ բաների մէջ կմ միջով նշմարել:*
ԸՆՈՒՄ, **ԸՆՏՈՒՄ**, ած. գ. *Տան մէջ ծնած ու մեծացած: Ծառայ, սպասաւոր:*
ԸՆՈՍՏ, ած. մկ. *Յանկարծ տեղից վեր թռած:*
*** ԸՆՈՍՏԱԽՕՍ**, ած. *Մեծ-մեծ խօսող:*

ԸՆՈՍՏՈՒՄ, գ. *Յանկարծ վեր թռչելը:*
*** ԸՆՈՍՏԵԼ**, նբ. *Ոտքի տակ տալ:*
ԸՆՈՒՆԱԿ, ած. *Ընդունող, ընդունիչ: Ատակ, խելամիտ:*
ԸՆՈՒՆԱԿԱՆ, ած. *Տ. Ընդունակ:*
ԸՆՈՒՆԱՅՆ, ած. *Ունայն, դատարկ, գուր:*
*** ԸՆՈՒՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. *Ընդունայնագործ լինելը:*
ԸՆՈՒՆԱՅՆԱԽՕՍ, ած. *Դատարկ բաներ խօսող:*
ԸՆՈՒՆԱՅՆԱՆԱԼ, չբ. *Դատարկ բաների հետեւել:*
ԸՆՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. *Ձուր՝ անօգուտ լինելը:*
ԸՆՈՒՆԱՏԵՂԻ, գ. *Ժամանողներին առաջարկուող տեղ՝ հանգրուան:*
ԸՆՈՒՆԱՐԱՆ, գ. 1. *Նա որ իր մէջ ընդունում է:* 2. *Շինութեան մէջ սենեակ, որտեղ ընդունում են այցելուներին՝ հիւրերին:*
ԸՆՈՒՆԵԼ, նբ. 1. *Իր մէջ առնել, իր մէջ տեղաւորել:* 2. *Թոյլ տալ մէկին իր մօտ գալ, հիւրընկալել:* 3. *Յարգել, նկատի առնել:* 4. *Համարել, մի բանի տեղ դնել:*
ԸՆՈՒՆԵԼԻ, ած. *Ինչ որ կարելի կմ պէտք է ընդունել:*
ԸՆՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ, գ. *Հյուրասիրութիւն, ընդունելի՝ հաճելի լինելը:*
ԸՆՈՒՆԻՉ, ած. *Հաղորդումներ ընդունող սարք, նա որ ընդունում է:*
ԸՆՈՒՆՈՒՄ, գ. *Ընդունելը. ընդունակութիւն:*
ԸՆՋՐԵԱՅ, ած. *Ջրի տակ եղած, ընդծովեայ:*
*** ԸՆԿԱՅՐԱԲԱՆ**, ած. *Դատարկախօս, ունայնախօս:*
*** ԸՆԿԱՅՐԱԳՈՐԾ**, ած. *Դատարկ բանով զբաղուող:*
ԸՆԿԱՅՐԱՏՈՒՆ, ած. *Իզուր ծախսըլող:*
*** ԸՆԿԱՅՐԱՀՈԳ**, ած. *Ձուր տեղը իր վրայ հոգսեր վերցնող:*

* **ԼՆԴՎԱՅՐԱՃԱՆՈՒ**, ան. Աւելորդ տեղը ճառող խօսող:
 * **ԼՆԴՎԱՅՐԱՊԱՐ**, ան. Դատարկ՝ պարայ թափառող:
ԼՆԴՎԱՅՐԸՆԿԵՑԻՎ, ան. Արհամարհուած:
1. ԼՆԴՎՁԵԼ, նբ. Վիզը տակն ուղրել:
2. ԼՆԴՎՁԵԼ, Չսանձահարուել: Ընթուտանայ, ապստամբիլ:
ԼՆՊՐԻՆԱԿԵԼ, նբ. Որեւէ բնագրի օրինակով գրել:
ԼՆՊՐԻՆԱԿԻՉ, ան. Նա որ ընթորինակում է, ընթորինակել է:
ԼՆՊՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Ընթորինակումած գրութիւն:
ԼՆՊՐԻՆԱԿՈՒՄ, գ. Ընթորինակելը:
ԼՆԵԼ, Տ. Անել: + Ընել-ըլլայ: + Կընէ կըլլայ:
ԼՆԹԱՆԱԼ, չբ. Քայլելով անցնել, երթայ:
ԼՆԹԱՆԱԼԻ, ան. Որտեղով կարելի է ընթանալ:
 * **ԼՆԹԱՅԱԲԱՐ**, մկ. Յառաջխաղացումով:
ԼՆԹԱՅԱԳԻՐ, գ. Ուղեգիր, բեռնագիր:
ԼՆԹԱՅԱԿԱՆ, ան. Ընթացքի՝ երթի վերաբերեալ:
ԼՆԹԱՅԱԿԱՐԳ, գ. Գործունէութեան կարգը:
ԼՆԹԱՅԱՍՍԱՍ, գ. Գործունէութեան մի մասը:
ԼՆԹԱՅԱՊԱՇԱՐ, Այն առաւելագոյն ճանապարհը, որն առանց լրալիցքաւորման կարող է անցնել տուեալ ինքնաշարժ մեքենան:
ԼՆԹԱՅԱՐԱՆ, գ. Ընթանալու՝ վազքի տեղ, ասպարեզ, մարզադաշտ:
ԼՆԹԱՅԱԻԱՐՏ, ան. գ. Ուսման ընթացքն աւարտած:
ԼՆԹԱՅԻՎ, ան. 1. Ընթացող: 2. Ներկայում կատարուում է:
ԼՆԹԱՅՈՒԹԻՒՆ, Տ. Ընթացք:

ԼՆԹԱՅՔ, գ. Ընդհանրապէս ընթանալը:
 1. Հոսանք, հոսում: 2. Շարժում:
 3. Շարունակութիւն:
ԼՆԹԵՌՆԼԻ, ան. 1. Ընթերցող, կարդացող: 2. Ինչ որ կարելի է կարդալ:
ԼՆԹԵՐԱԿԱՅ, ան. Դասախօսի օգնական, կողքին՝ մօտը՝ առընթեր գտնուող:
ԼՆԹԵՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. Ընթերակայ լինելը:
ԼՆԹԵՐՑԱԿԱՆ, ան. Ընթեռնելի:
ԼՆԹԵՐՑԱՆԵԼԻ, ան. Կարդացուող:
ԼՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ընթերցում:
ԼՆԹԵՐՑԱՍԷՐ, ան. Նա որ սիրում է կարդալ:
ԼՆԹԵՐՑԱՍԻՐԵԼ, նբ. Ընթերցման սերունենալ:
ԼՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Ընթերցանութիւն սիրելը:
ԼՆԹԵՐՑԱՍՐԱՆ, գ. Սրահ կմ դահլիճ՝ ընթերցանութեան յատկացրած:
ԼՆԹԵՐՑԱՏՈՒՆ, Տ. Ընթերցարան:
ԼՆԹԵՐՑԱՐԱՆ, գ. Հիմնարկ, ուր գնում են գրքեր կարդալու:
 * **ԼՆԹԵՐՑԱԻԱՐՏ**, ան. Ընթերցումն աւարտած:
ԼՆԹԵՐՑՈՂ, գ. ան. Նա որ կարդում է, կարդացող:
ԼՆԹԵՐՑՈՂԱԿԱՆ, ան. Ընթերցողի վերաբերող:
ԼՆԹԵՐՑՈՂՈՒԹԻՒՆ, գ. Ընթերցող լինելը:
ԼՆԹԵՐՑՈՒԱՄ, գ. Ընթերցում, կարդալը:
ԼՆԹԵՐՑՈՒԹԻՒՆ } գ. Կարդալու գործողութիւնը:
ԼՆԹԵՐՑՈՒՄ }
 * **ԼՆԹՐԱՐԱՆ**, գ. Ընթրելու տեղ:
ԼՆԹՐԵԼ, չբ. Ընթրիք ուտել, երեկոյեան կերակուր ուտել:
ԼՆԹՐԻՔ, գ. Երեկոյեան կերակուր՝ հացկերոյթ:
ԼՆՄԱԽՈՏ, **ԼՆՁԱԽՈՏ**, գ. (Բուս.)

Գորտնուկների կարգին պատկանող բոյս:

ԸՍՍՅ, գ. 1. Ինչ որ ձրիաբար տրոուում է: 2. Նուէր: 3. Կաշառք:

* **ԸՍՍՅԱԲԱՐ**, մկ. Բրբեւ ընծայ:

ԸՍՍՅԱԲԵՐ, ած. Ընծայ բերող:

ԸՍՍՅԱԲԵՐԵԼ, նբ. Մի բան ընծայ բերել, ընծայ տալ:

ԸՍՍՅԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Ընծայ բերելը:

ԸՍՍՅԱԳԻՐ, գ. Ընծայման գիր, թուղթ:

ԸՍՍՅԱԿԱՆ, ած. Մակագրութիւն, Ընծայի կմ ընծայելու վերաբերեալ, ընծայման:

* **ԸՍՍՅԱՆԱԼ**, չբ. Ընծայուել, մատակարարուել:

ԸՍՍՅԱՏԱՐ, ած. Ընծայ տանող:

ԸՍՍՅԱՏՈՒՐ } ած. Ընծայ տուող:

ԸՍՍՅԱՐԱՆ, գ. Ընծան դնելու կմ պահելու տեղ, ընծայանոց: Դպրեվանք:

ԸՍՍՅԱՐՈՐ, ած. Նա որ ընծայ ունի մատուցանելու:

ԸՍՍՅԵԼ, նբ. 1. Ընծայ տալ: 2. Պարզելել:

ԸՍՍՅՈՒԹԻՒՆ, գ. Ընծայելը:

ԸՄԱԼԱԳԻՐ, գ. Ընդունման գիր. գրութիւն, որով մէկը հաւաստում է, թէ ընդունել ստացել է այսինչ բանը:

ԸՄԱԼԵԱԼ, ած. Ընդունուած:

ԸՄԱԼՈՒՉ, ած. Ընդունող, ընկալող: Հեռախօսի լսելի մասը՝ ընդունիչ:

ԸՄԱԼՈՒՄ, գ. Ընկալելը:

ԸՄԱԼՈՒՄԿ, ած. Ընկալուն:

+ 1. **ԸՄԱՍՏ**, ած. Ունկ փոքրիկ օղակ ունեցող

+ 1. **ԸՄԱՍՏ, ԴՈՒ(Ր)Ս ԸՄԱՍՏ**, ած. Ընկած-էլած, եփուած, փորձառու:

ԸՄԵՐ, գ. 1. Հացակից, սեղանակից: 2. Միասին աշխատող: 3. Ուղեկից: 4. Յարգական խօսք: 5. Ուրիշի հետ գոյգ կազմող: Բարեկամ:

ԸՄԵՐԱԲԱՆ, Տ. Հասարակագէտ:

ԸՄԵՐԱԲԱՐ, մկ. Բրբեւ ընկեր:

ԸՄԵՐԱԳԻՐ, Տ. Բաժանորդ:

ԸՄԵՐԱԴԱԻ, ած. Ընկերոջը դաւաճանող:

ԸՄԵՐԱԶՈՂ, ած. Ընկերոջ համար կեանքը տուող:

ԸՄԵՐԱԿԱՆ, ած. Ընկերոջը յատուկ:

ԸՄԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ընկերական լինելը: Ընկերական վարքագիծ:

ԸՄԵՐԱԿԻՑ, գ. Նա որ ուրիշի կմ ուրիշների հետ միացած է որեւէ ընդհանուր նպատակով:

ԸՄԵՐԱԿՅԱԲԱՐ, մկ. Բրբեւ ընկերակից:

ԸՄԵՐԱԿՅԵԼ, չբ. Ընկերակից դառնալ:

ԸՄԵՐԱԿՅՈՒԹԻՒՆ, գ. Ընկերակից լինելը:

ԸՄԵՐԱՅԻՆ, Տ. Ընկերական:

ԸՄԵՐԱՆԱԼ, չբ. Ընկեր մտերիմ բարեկամ դառնալ:

ԸՄԵՐԱՍԵՐ, ած. Ընկերոջը սիրող:

ԸՄԵՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ, Տ. Ընկերասիրութիւն:

* **ԸՄԵՐԱՎԱՐ**, Տ. Սոցիալիստ: Մարդկային ընկերութիւնը վարելու տեսութիւն մը:

ԸՄԵՐԱՏԵԱՑ, ած. Ընկերոջն ասող:

ԸՄԵՐԱՏԵՑՈՒԹԻՒՆ, գ. Ընկերատեաց լինելը:

ԸՄԵՐՈՎԻ, ած. մկ. Ընկերութեամբ, միասին:

ԸՄԵՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Ընկեր լինելը: 2. Միութիւն:

ԸՄԵՐՈՒՉԻ, գ. Բզական սեռի ընկեր:

ԸՄԵՐՔ, (Կազմախ.) Պարկաձեւ հիւսուածք, որ գոյանում է յղիացած կնոջ արգանդում:

ԸՄԵՑԻԿ, ած. 1. Ընկած, դուրս ձգուած ու լքուած: 2. գ. Գործ էր ածուում երբեմն վիրատրական մտքով:

ԼՆԿՂՄԱԿԱՆ, ան. *Ընկղմելու միջոցով կատարուող:*
ԼՆԿՂՄԵԼ, նբ. 1. Կոխել՝ իջեցնել հեղուկի մեջ: 2. Ջրասոյգ անել: 3. Ծովահեղձ անել: 4. Փոխ. *Խոր իջեցնել:*
ԼՆԿՂՄԻՉ, ան. *Նա որ ընկղմուում է:*
ԼՆԿՂՄՈՒՄ, գ. *Ընկղմելը:*
ԼՆԿՂՄՈՒԱԾՔ, Ջրում նաւի թաղւածքը:
ԼՆԿՃԵԼ, նբ. 1. Ծունկ չոգեցնել: 2. Խոնարհեցնել:
ԼՆԿՃՈՒՄ, գ. *Ընկճելը:* Նուաճում:
+ ԼՆԿՆԱԻՈՐ, ան. գ. *Ընկնատրութեամբ հիւանդ:*
ԼՆԿՆԱԻՈՐ(ՈՒ)ԵԼ, չբ. 1. *Ընկնատրութիւնը բռնել, ընկնատրութեամբ հիւանդանալ:* 2. *Խելագարուել:*
ԼՆԿՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ, գ. *Երկարատեւ նեարդային հիւանդութիւն:*
ԼՆԿՆԵԼ, չբ. 1. *Շարժուել բարձրից ցած իր ծանրութեան ուժով:* 2. Փոխ. *Բարձր վիճակից խոնարհ վիճակի հասնել:* 3. *Վերջանալ:* 4. *Գործածութիւնից դուրս գալ:* 5. *Վարակուել, հիւանդանալ:*
ԼՆԿՆԵԼ-ԵԼՆԵԼ, բ. *Շատ նեղութիւններից ազատուել, փորձառութիւն ձեռք բերել:*
ԼՆԿՈՂՄԱՆԵԼ, չբ. *Կողքի վրայ ընկնել:*
ԼՆԿՈՅՁ, ԼՆԳՈՅՁ, գ. *Ընկոյզի կմ ընկուզենու պտուղը:*
ԼՆԿՈՒՋԱԲԵՐ, ան. *Ընկոյզ բերող:*
ԼՆԿՈՒՋԱՋԱՐԴ, ան. գ. *Ընկոյզի ձեւով զարդարուած:*
ԼՆԿՈՒՋԱԽԱՂ, գ. *Կակալ իւաղալը:*
ԼՆԿՈՒՋԱՉԱՓ, ան. *Ընկոյզի մեծութեամբ:*
ԼՆԿՈՒՋԱՎԱՃԱՆ, ան. գ. *Ընկոյզի առեւտուր անող:*
ԼՆԿՈՒՋԵՆԻ, գ. (Բուս.) *Ընկուզագիւնների կարգին պատկանող յաղթանդամ գեղեցիկ ծառ:*
ԼՆԿՈՒՋԱՆՑ, ան. գ. *Որտեղ շատ*

ընկուզենի է բուսնում:
ԼՆԿՐԿԵԼ, նբ. *Արգելքի հանդիպելով կանգնել, նահանջել:*
*** ԼՆԿՐԿԻՉ**, ան. *Ընկրկող:* Նահանջող:
ԼՆՁԱՌԻԾ, գ. *Գիշատիչ կենդանի:*
ԼՆՁԵՆԱԻՈՐ, ան. *Ընձենի կրող:*
ԼՆՁԵՆԻ, գ. *Ընձի մորթ:*
ԼՆՁԵՌԵԼ, նբ. *Մէկի ձեռքը մի բան տալ:*
ԼՆՁԻՐ, ԼՆԾԻՐ } գ. *Շլած սերմի արձակած ծիր:*
ԼՆՁԻՐԱԲԵՐ, ան. *Ընձիւղներ տուող:*
ԼՆՁՈՒՂՏ, գ. (Կենդ.) *Կաթնասուն որոճող կենդանի, մինչեւ 7 մետր բարձրութեամբ:*
ԼՆՁՈՒՂՏԱՋԵԻ, ան. *Ընձուղտի ձեւ ունեցող:*
ԼՆՁԱՋՈՒՐԿ, ան. *Ինչից՝ գոյքից՝ ստացւածքից զրկուած:* Չքաւոր:
ԼՆՁԱՋՐԿՈՒԹԻՒՆ, գ. *Ընչագուրկ լինելը:* Աղքատանալ:
ԼՆՁԱՍԷՐ, ան. *Ինչք՝ ստացուածք սիրող. Արծաթասէր:*
ԼՆՁԱՊԱՇՏ, ան. *Ընչաքաղց:*
*** ԼՆՁԱՍԻՐԵԼ**, չբ. *Ընչասէր լինել:*
ԼՆՁԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. *Ընչասէր լինելը:*
*** ԼՆՁԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ**, գ. *Մանրըմունք բաներ ծախելը:*
ԼՆՁԱՏԵԱՅ, ան. *Հարստութիւն ատող:*
*** ԼՆՁԱՏԷՐ**, ան. գ. *Ինչքի՝ հարստութեան տէր, ունեւոր:*
ԼՆՁԱՅՔ, Տ. Բէխ:
ԼՆՁԱԻԷՏ, ան. *Ինչք՝ հարստութիւն շատ ունեցող:*
ԼՆՁԱԻՈՐ, ան. *Ունեւոր, ընչաւէտ, ընչեղ:*
ԼՆՁԱՔԱՂՑ, ան. *Սաստիկ ընչասէր, արծաթապաշտ:* Շատ ազահ:
ԼՆՁԱՔԱՂՑՈՒԹԻՒՆ, գ. *Ընչաքաղց լինելը:*
ԼՆՁԵՐ, ան. *Հարուստ:*
*** ԼՆՁԵՂԵՆ**, ան. *Նիւթեղէն:*

ԸՆՏԱՆԵՔԱՐ, մկ. *Իբրեւ ընտանի, իբրեւ մերձատր:*
*** ԸՆՏԱՆԵՔՈՅԱ**, ած. *Ընտանի, բնական:*
ԸՆՏԱՆԵՉՈՒՐԿ, ած. *Ընտանիքից զրկուած. առանց ընտանիքի:*
ԸՆՏԱՆԵՎԱՆ, ած. *Ընտանի, ընտել:* Հկր. *Պաշտօնական:*
ԸՆՏԱՆԵՎԻՑ, ած. *Միեւնոյն ընտանիքին պատկանող:*
ԸՆՏԱՆԵՆԱԼ, չք. *Ընտանեկան կապով կապուել:*
ԸՆՏԱՆԵՄԷՐ, ած. *Իր ընտանիքը սիրող:*
ԸՆՏԱՆԵՄԻՐՈՒԹԻՒՆ, գ. *Ընտանեւեր լինելը:*
ԸՆՏԱՆԵՑՈՒՄ, գ. *Ընտանեցնելը, ընտանենայր:*
ԸՆՏԱՆԻ, ած. 1. *Տան մէջ եղող:* 2. *Ընտել, բնիկ:* Հկր. *Վայրի, վայրենի:*
ԸՆՏԱՆԻՔ, գ. *Մի տան մէջ միասին ապրող:* 2. *Տան անդամները:* 3. *(Կենդ., Բուս.) Գիտական խմբաւորում կենդանիների բոյսերի:* 4. *(Լեզուաբ.) Գիտական խմբաւորում մի քանի լեզուների:*
ԸՆՏԱՆԻՔԱՌՈՐ, ած. *Ընտանիք ունեցող:*
ԸՆՏԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Ընտանի լինելը:*
ԸՆՏԵԼ, ած. *Մէկին վարժուած. սովորած:*
ԸՆՏԵԼԱՔԱՐ, մկ. *Ընտելութեամբ:*
ԸՆՏԵԼԱԳՈՅՆ, բաղդ. աստ. *Ընտել՝ի. Աւելի ընտել:*
ԸՆՏԵԼԱՎԻՑ, ած. *Նա որ ընտելացած է ուրիշի հետ:*
ԸՆՏԵԼԱՆԱԼ, չք. *Ծանօթութեան շնորհիւ մտերմանալ:*
ԸՆՏԵԼԱՄԷՐ, ած. *Ընտելութիւն սիրող:*
ԸՆՏԵԼԱՑՈՒՄ, գ. *Ընտելանալը:*
ԸՆՏԵԼՈՒԹԻՒՆ, գ. *Ընտել՝ վարժ՝ սովոր լինելը:*
ԸՆՏԻՐ, ած. 1. *Ընտրուած՝ ջոկուած նմանների միջից:* 2. *Լատրակ:* Հկր. *Յոռի, վատ:*

ԸՆՏՐԱԳՈՂՈՒԹԻՒՆ, գ. *Ընտրութեան արդիւնքների կեղծում:*
ԸՆՏՐԱԳՈՅՆ, Տ. *Ընտրելագոյն:*
ԸՆՏՐԱՉԱՆԳՈՒԱԾ, գ. *Ընտրողների բազմութիւն:*
ԸՆՏՐԱՉԱՏԵԼ, գ. *Առանձնացում:*
ԸՆՏՐԱԹԵՐԹ, գ. *Քուէաթերթ:*
ԸՆՏՐԱԹԵՐԹԻՎ, գ. *Քուէաթերթիկ:*
ԸՆՏՐԱԽԱՒ, գ. *Ընտրողների մի խաւը:*
ԸՆՏՐԱԿԱՆ, ած. *Ընտիր, լաւ:*
ԸՆՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Ընտրական լինելը, լաւութիւն:*
ԸՆՏՐԱՆԱԽԱԳԻԾ, գ. *Ընտրական նախագիծ:*
ԸՆՏՐԱՆԻ, գ. *Այլեւայլ խմբերից ընտրուած կազմ:*
ԸՆՏՐԱՆՔ, գ. *Ընտրելը, ջոկելը:*
ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ, ած. *Ընտրանքին վերաբերող:*
ԸՆՏՐԱՇՈՒԿԱՅ, գ. *Ընտրական շուկայ:*
ԸՆՏՐԱՇՐՁԱՆ, գ. *Ընտրական շրջան:*
ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐ, գ. *Ընտրութեան համար մղուած պայքար:*
ԸՆՏՐԱՊԷՄ, մկ. *Ընտրութեամբ:*
ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ, ած. *Ընտրութեան՝ քուէարկութեան համար նախատեսուած տարածքին վերաբերող:*
ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍ, գ. *Ընտրելու տեղը:*
ԸՆՏՐԱՏՈՒՓ, գ. *Քուէաարկը:*
ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿ, գ. *Ընտրութեան ցուցակ:*
ԸՆՏՐԵԱԼ, ած. *Ընտրուած ընտրութեամբ մի պաշտօնի հասած:*
ԸՆՏՐԵԼ, նք. 1. *Իրար մօտ դնելով համեմատել:* 2. *Նման բաներից ջոկել:*
ԸՆՏՐԵԼԱԳՈՅՆ, բաղդ. աստ. *Ընտրելի՛:*
ԸՆՏՐԵԼԻ, ած. *Ընտրուած:* Ինչ որ հարկատր է ընտրել:
ԸՆՏՐԵՆԻ, ած. *Ընտրովի, ընտրած:*
ԸՆՏՐԵԼԻՈՒԹԻՒՆ } գ. Ընտրեալ՝ ըն-
ԸՆՏՐԵԼՈՒԹԻՒՆ }

տիր լինելը:
ԸՆՏՐՈՂԱԲԱՐ, մկ. Ընտրելով, ընտրութիւն անելով:
ԸՆՏՐՈՂԱԿԱՆ, ած. Տ. Ընտրական:
ԸՆՏՐՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ընտրողի յատկութիւն:
ԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ, գ. Ընտրող լինելը:
ԸՆՏՐՈՎԻ, ած. մկ. Իբրեւ լուսագոյն ընտրուած՝ ջոկուած, ընտիր-ընտիր:
ԸՆՏՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Ընտրելը: ջոկելը: 2. Նման իրերի միջից ընտրել: 3. Մէկին պաշտօնի կոչելը:
ԸՄԵԼ, **ԸՍՈՒԵԼ** (արեւմտ. բարբ.), Տ. Ասել, ասուել:

+ **ԸՄԿՈՒԵԼ**, չբ. Հետանալ, անհետանալ:
ԸՍՏ, նախորդ. 1. Գործ էր ածուում մի քանի թեք հոլովների հետ: 2. Համաձայն: 3. Նման: Համեմատ:
ԸՍՏ ԱՄԵՆԱՅՆԻ, մկ. Ամէն բանով, բոլորովին:
ԸՍՏԱՆՁՆԵԼ, նբ. Իր վրայ վերցնել:
ԸՍՏ ԻՍ, մկ. Իմ կարծիքով:
ԸՍՏ ՄԱՍՆԵԱՅ, ած. մկ. Մասնակի (կերպով):
ԸՍՏ ՈՐՈՒՄ, մկ. 1. Ինչպէս որ, համաձայն այն բանին որ...:
ԸՍՏ ՕՐԵԱՅ, ած. Օրուայ հաշուով:

Թ, թ

1. **Թ, թ:** Թոյ, գ. Հայերէն այբուբենի իններորդ տառը: Ինն, իններորդ:
 2. **Թ:** Թիւ, թուահամար:
 + ԹԱԲԱՆՍ } գ. Ծանծաղ արհեստ կամ պրեսակ:
 + ԹԱԲԱՆՍ }
ԹԱԳ, գ. 1. Գլխի զարդարուն խորանաձեւ ծածկոց: 2. Քահանայի գլխի ծածկոցը:
 * **ԹԱԳԱԳԼՈՒԻՄ**, ած. Գլխին թագ ունեցող:
ԹԱԳԱՂԻՐ, ած. գ. Թագ դնող:
ԹԱԳԱՂԱՄ, գ. Չանազան երկրների ոսկեայ եւ արծաթեայ դրամներ, որոնք կրում էին թագաւորի պատկերը:
ԹԱԳԱՂՈՒԹԻՒՆ, գ. Թագ դնելը:
ԹԱԳԱՂՈՒՄ, գ. Թագադրելը:
ԹԱԳԱՁԱՐԴ, ած. Թագով զարդարուած:
ԹԱԳԱՁՈՒՐԿ, ած. Թագից՝ թագաւորութիւնից գրկուած:
ԹԱԳԱԺԱՌԱՆԳ, գ. Թագի ժառանգ:

ԹԱԳԱԺԱՌԱՆԳՈՒԻՉԻ, գ. Թագածառանգ իգական սեռի, թագաւորի աղջիկը:
ԹԱԳԱԿԱՊ, ած. Նա որ թագ է կապում ուրիշի գլխին:
ԹԱԳԱԿԻՐ, ած. Թագ կրող:
ԹԱԳԱԿԻՑ, ած. գ. Միաժամանակ թագաւորող անձերից ամէն մէկը:
ԹԱԳԱԿՈՒԻՒ, գ. Պայքար թագի համար:
ԹԱԳԱԿՑԵԼ, չբ. Թագակից լինել:
ԹԱԳԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Թագակից լինելը:
ԹԱԳԱՆՄԱՆ, ած. Թագի նմանող:
ԹԱԳԱՊԱՀ, ած. Նա որ պահում է թագը:
ԹԱԳԱՊԱՀԱՆՁ, ած. գ. Թագը պահանջող:
ԹԱԳԱՊՄԱԿ, ած. Թագով պսակուած, թագակիր:
 * **ԹԱԳԱՌՈՒ**, ած. Թագ առնող:
 * **ԹԱԳԱՏՈՒ**, ած. Թագ տուող:
ԹԱԳԱԻՈՐ, գ. Թագ ունեցող, թագ կրող:
 1. Նման. Նորափեսան՝ պսակի եւ հար-

սանիքի ժամանակ: 2. Ամենամեծը:
 3. Ուժեղ, յաղթանդամ: 4. Շախմատի
 մէջ զլիսաւոր քարը:
ԹԱԳԱԻՈՐԱԲԱՐ, մկ. Թագաւորի պէս:
ԹԱԳԱԻՈՐԱԲԱՐՈՅ, ած. Թագաւորի
 նման վարմունքով:
ԹԱԳԱԻՈՐԱԲԱՐԱԿ, ած. Որտեղ թագա-
 ւորն է բնակում:
ԹԱԳԱԻՈՐԱԴԱՍ, ած. Թագաւորին
 դասող:
 * **ԹԱԳԱԻՈՐԱԴԵՍ**, ած. Թագաւորի
 կերպարանք ունեցող:
ԹԱԳԱԻՈՐԱԶԱՐԴ, ած. Թագաւորի
 պէս զարդարում:
ԹԱԳԱԻՈՐԱԶՈՒՆ, ած. Թագաւորա-
 կան ցեղից՝ տոհմից:
ԹԱԳԱԻՈՐԱԶՈՒՐԿ, ած. Թագաւորից
 գրկում:
ԹԱԳԱԻՈՐԱԿԱՆ, ած. Թագաւորին յա-
 տուկ, վերաբերեալ:
ԹԱԳԱԻՈՐԱԿԱՅՏ, S. Թագաւորանիստ:
ԹԱԳԱԻՈՐԱԿԵՐՊ, ած. Թագաւորի
 կերպարանք ունեցող:
 + **ԹԱԳԱԻՈՐԱԿԻՆ**, գ. Թագաւորի կին,
 թագուհի:
ԹԱԳԱԻՈՐԱԿԻՑ, ած. Միասին թագա-
 ւորող:
ԹԱԳԱԻՈՐԱՀԱՅՐ, գ. Թագաւորի
 հայրը:
ԹԱԳԱԻՈՐԱՍՄՅՐ, գ. Թագաւորի
 մայրը:
ԹԱԳԱԻՈՐԱՍԷՏ, ած. Թագաւորին՝
 թագաւորութեանը միտում:
ԹԱԳԱԻՈՐԱՆԱԳՈՒ, ած. գ. Թագա-
 ւորին անարգող:
ԹԱԳԱԻՈՐԱՆԻՍՏ, ած. Որտեղ նստում
 է թագաւորը:
ԹԱԳԱԻՈՐԱՍՊԱՆ, ած. Թագաւորին
 սպաննող:
ԹԱԳԱԻՈՐԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ, գ. Թա-
 գաւորին սպաննելը:
ԹԱԳԱԻՈՐԱՎԱՅԵԼ, ած. Ինչպէս վայել

է թագաւորին:
ԹԱԳԱԻՈՐԵԼ, չբ. Թագաւոր դառնալ:
ԹԱԳԱԻՈՐԻԿ, գ. Մասուր:
ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Կառավար-
 ութեան ձեւ: 2. Ժամանակը, որի
 ընթացքում թագաւորը կառավարում է:
 3. Փոխ. Ընդհանրապէս՝ իշխանութիւն,
 տիրապետութիւն:
ԹԱԳԱԻՈՐՕՐՀՆԷՔ, գ. Եկեղեցական
 արարողութիւն թագաւորի օծման եւ
 օրհնութեան:
ԹԱԳՐԱԿԷՑ, ած. Թագից հրաժարուող:
ԹԱԳՈՒՀԻ, գ. 1. Թագաւորի կին: 2. Կին-
 թագաւոր: 3. Փոխ. Իշխող, տիրապե-
 տող: 4. (Մեղուար.) Փեթակի միակ էգ
 մեղուն: 5. Շախմատի խաղի մէջ՝ ամե-
 նաուժեղ քարը:
 1. **ԹԱԹ**, գ. Իրանական ծագման ժողո-
 վուրդ:
 2. **ԹԱԹ**, գ. 1. Ձեռք՝ մինչեւ դաստակը:
 2. Յատկապէս՝ մարդու ոտքի առաջին
 մասը: 3. Գուլպայի առաջի մասը:
 4. Կշեռքի նժար:
ԹԱԹԱԳՆԱՑ, ած. (Կենդ.) Թաթերի
 վրայ գնացող:
ԹԱԹԱՆ, ած. 1. Թաթախում: 2. Թրջը-
 ւած:
 + **ԹԱԹԱՆԱՂ**, գ. Թաթերով խաղալը:
ԹԱԹԱՆԵԼ, նբ. Հեղուկ կմ լոյծ նիւթի
 մէջ մի բան կոխել կմ քսել:
ԹԱԹԱՆՈՒՄ, գ. 1. Թաթախելը:
 2. Չատկի կմ Ծննդեան ճրագալոյցնե-
 րին պասը լուծելը:
ԹԱԹԱՀԱՏ, ած. Ձեռքերի կմ ոտքերի
 թաթերը կտրտած:
ԹԱԹԱՀԱՏԵԼ, բ. Թաթերը կամ թաթը
 հատել:
ԹԱԹԱՀԵՐՁՈՒԹԻՒՆ, գ. Թաթահերձ
 լինելը:
 + **ԹԱԹԱՀՈՐ**, գ. Թաթի շոր:
ԹԱԹԱՈ, գ. Ոլորապտոյտ ուժեղ քամի:
ԹԱԹԱՐ, ած. գ. Թաթարների ցեղին

<p>պատկանող անձ: ԹԱԹԱՐԱԿԱՆ, ան. Թաթարների յատուկ: ԹԱԹԱՐԵՐԷՆ, ան. մկ. գ. Թաթարական լեզու: ԹԱԹԱՐՆԵՐ, յոզն. գ. Ազգաբանական անուն, որ գործ է ածուում զանազան նշանակութեամբ: ԹԱԹԱԻ, գ. Յորդ անձրել: ԹԱԹԱԻԵԼ, չբ. Ընկղմել, մխրձել, թա- թախել (հեղուկի մէջ): ԹԱԹԱԻՈՒՄ, գ. Թաթաւելը: ԹԱԹԵԼ, բ. Թաթով խփել: + 1. ԹԱԹԻԿ, գ. Փոքրիկ թաթ: + 2. ԹԱԹԻԿ, գ. (Բուս.) Երիքովի վարդ կոչուած բոյսը: ԹԱԹԻՈՒՄ, ան. Թաթախող: ԹԱԹԻՆԵԼ, բ. Թաթախել: + ԹԱԹՄԱՆ, Տ. Թաթպան: ԹԱԹՈՒԼ, գ. Կենդանիների առաջին ոտների (փափուկ) թաթը: + ԹԱԹՊԱՆ, գ. Տանու ձեռնոց բրդից կմ կաշուց: ԹԱԹՊԱՆՍԱԳՈՐԾ, գ. Թաթպան շինող արհեստաւոր: ԹԱԹՕ, ԹԱԹՕՆ, (Մանկ.), գ. Թաթ, թաթիկ: ԹԱԼԱԹՈՍՈՒՄ} ԹԱԼԱԹՈՍՈՅ գ. Թալաթոսելը, կիսատ- պոստ մի բան անելը: ԹԱԼԱԼ, Տ. Թալանալ: + ԹԱԼԱԼԵԼ, չբ. Թալանալ, թուլանալ, ուշաթափուել: + ԹԱԼԱԿ, գ. Թակարդ: + ԹԱԼԱՆ, գ. (Պրսկ.) Կողոպուտ, աւա- րառութիւն: + ԹԱԼԱՆԵԼ, նբ. Կողոպտել, աւար առ- նել: ԹԱԼԻԱ, գ. Նարդի խաղի մէջ՝ մի քանի խաղ: ԹԱԼԼԵԼ, Տ. Թալանել:</p>	<p>ԹԱԼԼԻՈՆ, (լատ. Thallium), գ. (Քիմ.) Մպիտակաւուն պարզ մետաղական մարմին: ԹԱԼԽԵԼ, չբ. Գոյնը նետել: ԹԱԼԿԱՆԱԼ, չբ. Ուշաթափուել, նուա- դել: Գունատիլ: * ԹԱԼԿԱՑՈՒՑԻՉ, ան. Թալկացնող: ԹԱԼՍՈՒԴ, գ. Հրէաներից ռաբբիական ընդարձակ գրականութիւն: ԹԱԼՍՈՒԴԱԳԷՏ, ան. Թալմուդը ու- տումնասիրող, թալմուդի մասնագէտ: ԹԱԼՍՈՒԴԱԿԱՆ, ան. Թալմուդին յա- տուկ: ԹԱԽԱՆՁ, գ. 1. Տ. Թախանձանք: 2. Թա- խիծ, տխրութիւն: Աղերս, խնդրանք: * ԹԱԽԱՆՁԱԲԱՐ, մկ. Տաղտկալի՝ ան- ախորժ կերպով: Աղերսելով: ԹԱԽԱՆՁԱԳԻՆ, մկ. Թախանձանքով, մեծ աղաչանքով: ԹԱԽԱՆՁԱԼԻՑ, ան. Թախիծով լի, շատ տխրալի: Աղաչալից: ԹԱԽԱՆՁԱՆՔ, գ. Թախանձելը, ժտելը: ԹԱԽԱՆՁԵԼ, նբ. Մաստիկ աղաչել: * ԹԱԽԱՆՁԵԼԻ, ան. Թախանձագին, խիստ աղաչական: + ԹԱԽԹՓԵԼ, նբ. 1. Թախի տայ, ցնցել: 2. Թափել: ԹԱԽԻԾ, գ. Տեւական խիստ տխրութիւն: ԹԱԽԾԱԳԻՆ, ան. Թախիծ արտայայ- տող: ԹԱԽԾԱԳՈՐՈՎ, ան. Թախծոտ եւ գորովալից: ԹԱԽԾԱԴԷՄ, ան. Որի դէմքի վրայ թա- խիծ է երեւում: { ԹԱԽԾԱԼԻ } ան. Թախիծով լի: Տխրա- թԱԽԾԱԼԻՑ } լի: ԹԱԽԾԱՍԴՍՈՒՆՁ, ան. (բնստ.): Թախ- ծալի մրմունջով: ԹԱԽԾԱՆՔ, Տ. Թախծութիւն: ԹԱԽԾԱՆՈՅՇ, ան. Քաղցր թախիծով լեցուն:</p>
---	---

ԹԱԽԾԱՇԱՏ, ան. Թախծագին:
ԹԱԽԾԱՊԱՏ, ան. Թախծոնվ պատած, վշտահար:
ԹԱԽԾԵԼ, չք. Թախծոնվ բռնուած լինել:
ԹԱԽԾԵՐԵՍ, Տ. Թախծադէմ:
ԹԱԽԾՈՏ, ան. Թախծոնվ պատած: Տխրութիւն:
ԹԱԽԾՈՒԹԻՒՆ, գ. Թախծոնվ բռնուած լինելը:
ԹԱԽԾՈՒՆ, ան. Սկ. Թախծել սիրող:
ԹԱԽՎ, բնաւ. Թխկարու ձայնը:
+ ԹԱԽՏ, գ. (Պարսկ.) 1. Թագաւորական գահ: 2. Գահաւորակ: Փայտէ մահճակալ:
ԹԱԽՏԱՎ, գ. Փոքրիկ թախտ:
ԹԱԽՏԻՎ, գ. (Բուս.) Վայրի բանջար:
ԹԱՎ, գ. Փայտէ ձող: Ուռնակ:
ԹԱՎԱՂ, գ. Փայտէ փոքր թակ:
ԹԱՎԱՂԴ } գ. 1. Ցանցաձէ կմ վանդա-
ԹԱՎԱՂԹ } կաձէ սարքած՝ գործիք, անասուններ որսալու համար.: 2. Փոխ. Որոգայթ:
ԹԱՎԱՂԱԳՈՐԾ, գ. Թակարդ պատ-րաստող արհեստաւոր:
ԹԱՎԱՂԱԴԻՐ, ան. Թակարդ դնող լարող:
ԹԱՎԱՂԵԼ, նբ. 1. Թակարդով պատել:
 2. Փոխ. Պաշարել:
ԹԱՎԱՂՈՒՄԾ, ան. Թակարդ լարւած:
ԹԱՎԵԼ, նբ. Թակով հարուածներ տալ:
ԹԱՎԻՉ, գ. Փոքր թակ՝ միս, բուրդ թակելու համար:
+ ԹԱՎՈՎԻ, ան. մկ. Նարդախաղի այն տեսակները, որտեղ կարելի է հակառակորդի կենտ քարը զարնել. խփովի:
ԹԱՎՈՒՂ(Ի), գ. Կոճի ձէտով թակ:
+ ԹԱՎՈՒՉԱՎ, գ. Ուրագաձէ գործիք:
ԹԱՎՉԱԻՈՐ, ան. Թակիչ:
1. ԹԱՂ, գ. Այգու որթերը ձմեռուայ դէմ թաղելը:
2. ԹԱՂ, գ. Քաղաքի ամէն մի մաս:
3. ԹԱՂ, գ. Գետնատարած բոյսերի

ճիւղերը:
4. ԹԱՂ, գ. Պատի կամարաձէ շարուած մասը:
ԹԱՂԱԳԱԳԱԹ, գ. Կամարակապ ծածկի գագաթային մասը:
ԹԱՂԱՍՍՎ, գ. Քարակապ ծածկ:
ԹԱՂԱԿԱՆ, ան. Թաղին վերաբերեալ:
ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Թաղականի պաշտօնը:
ԹԱՂԱԿԻՑ, ան. Միասին թաղուած:
ԹԱՂԱՄԱՍ, գ. Թաղի մաս:
+ ԹԱՂԱՄԷՉ, ան. գ. Թաղի միջին եղած:
ԹԱՂԱՆԹ, գ. (Կազմախ.) Նուրբ՝ կակուղ՝ տափակ գործարանային հիւսւածք մարմնի մէջ կմ դուրսը:
ԹԱՂԱՆԹԱԹԵՒ, ան. Որի թելերը թաղանթներից են բաղկացած:
ԹԱՂԱՆԹԱՅԻՆ, ան. Թաղանթի վերաբերեալ:
ԹԱՂԱՆԹԱՊԱՏ, ան. Թաղանթով պատած:
ԹԱՂԱՆԹԱՊԱՏՆԵՇ, գ. Տեսողական համակարգի ֆիզիկական տարր, որը կարգաւորում է համակարգի մէջ թափանցող լոյսի քանակը:
ԹԱՂԱՆԹԱԻՈՐ, ան. Թաղանթ ունեցող:
ԹԱՂԱՊԵՏ, գ. Թաղի պէտ, վարչական կառավարիչ:
ԹԱՂԱՊԵՏԱՎԱՆ, ան. Թաղապետութեան վերաբերեալ:
ԹԱՂԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. Թաղը իբրեւ մի վարչական միութիւն:
ԹԱՂԱՊԵՏԱՐԱՆ, գ. Թաղի վարչական մարմնի նստավայրը:
+ ԹԱՂԱՏԵՂ, գ. Այգում այն տեղը որտեղ թաղում են:
ԹԱՂԱՐ, գ. (Պարսկ.) 1. Կաւէ աման գոգաւոր կմ կոնքաձէ: 2. Տ. Ջրաման բոյս աճեցնելու:
ԹԱՂԱԻՈՐ, Տ. Թաղեցի:
ԹԱՂԵԳՈՐԾ, գ. Թաղիք շինող:

ԹԱՂԵԳՈՐՄՈՒԹԻՒՆ, գ. Թաղիք շինելը:
ԹԱՂԵԼ, նբ. Հողի մէջ դնել եւ հողով ծածկել:
ԹԱՂԵԿԻՑ, ան. գ. Միեւնույն թաղում բնակող:
 ԹԱՂԹ } գ. (Բուս.) 1. Տ. Արջտակ:
 ԹԱՂԹԻԿ }
 2. Մագախտերի կարգին պատկանող բոյս:
ԹԱՂԹԱՂՈՒԿ, ան. գ. Ճախճախուտ տեղ:
ԹԱՂԻՔ, գ. Բրդից կմ մազից շինուած հաստ կմ բարակ կտոր:
 ԹԱՂԻՔԵԱՅ } ան. Թաղիքից պատ-
 ԹԱՂԻՔԷ } րաստուած:
ԹԱՂԿԵԼ, չբ. Խիտ առ խիտ իրար կըպչել:
ԹԱՂԿՈՒԹԻՒՆ, գ. Թաղկած լինելը:
 + **ԹԱՂՍԱՆՉԷՔ**, գ. Վարձ, որ տրուում է քահանային՝ ննջեցեալը թաղելու համար:
ԹԱՂՈՂՉԷՔ, Տ. Թաղմանչէք:
ԹԱՂՈՐԱՅՔ, գ. Թաղեր:
ԹԱՂՈՒՄ, գ. Թաղելը:
 1. ԹԱՍ, գ. Թշնամի:
 + 2. ԹԱՍ, ան. Մտաղիք:
ԹԱՍԴԱՅ,
ԹԱՍԴԱՆ, գ. Կերուխումի սեղանի աւագ կառավարիչ:
ԹԱՍԴԱՅԱԿԱՆ, ան. Թամաղային վերաբերող:
ԹԱՍԴԱՅՈՒԹԻՒՆ, գ. Թամաղայի պաշտօնը:
ԹԱՄԲ, գ. Նստարանի նման մի կազմած, որ դնում են ձիու մէջքին ու վրան հեծնում:
ԹԱՄԲԱԳՕՏԻ, գ. Թամբակայ:
ԹԱՄԲԱԳՈՐՄ, ան. գ. Թամբ շինող:
ԹԱՄԲԱԳՈՐՄԱԿԱՆ, ան. Թամբագործութեան վերաբերող:

ԹԱՄԲԱԳՈՐՄՈՒԹԻՒՆ, գ. Թամբագործ լինելը:
ԹԱՄԲԱԹՈԿ, գ. Թամբը ամրացնող թուկ:
ԹԱՄԲԱՁԵՒ, ան. Մկ. Թամբի ձեւ ունեցող:
ԹԱՄԲԵԼ, նբ. 1. Ձիու վրայ թամբը դնել:
 2. Նման. Մէկին իւր կամքին ենթարկել:
ԹԱՄԲՈՎԻ, մկ. Թամբը հետը:
ԹԱՄԲՈՒՄ, գ. Թամբելը:
ԹԱՄՈՒՋ, գ. (Բուս.) Հրանունկների ցեղին պատկանող գեղեցկատեսիլ նուրբ բոյս:
ԹԱՆ, գ. Մածունով պատրաստուած ըմպելիք:
ԹԱՆԱԲԱՆՁԱՐ, Տ. Թանապուր:
ԹԱՆԱԲՐՈՒՉ, գ. Թանի մէջ հաց բըրդած ուտելիք:
ԹԱՆԱԳՈՂ, ան. գ. Հասարակ գող:
ԹԱՆԱԳՈՂ, ան. Թան գողացող:
ԹԱՆԱԹԱԹԱՆ, ան. Թանի մէջ թաթախուած:
 + **ԹԱՆԱՄԱՇՈՒ**, գ. Տ. Թանապուր:
ԹԱՆԱԿԵՐ, ան. Թան ուտող:
ԹԱՆԱՀԱՏ, ան. Թանից կտրուած:
 + **ԹԱՆԱՄԱՆ**, գ. Աման, որի մէջ պահում են թանը:
ԹԱՆԱՊՈՒՐ, գ. Ապուր՝ պատրաստուած թանից:
ԹԱՆԱՔ, գ. Գունաւոր հեղուկ, որի մէջ գրիչը թաթախելով գրում են: Մէլան:
ԹԱՆԱՔԱԲԾ, գ. Թանաքի նշան:
ԹԱՆԱՔԱԳԻՐ, գ. ան. Թանաքով գրուած:
ԹԱՆԱՔԱԳՈՅՆ, ան. Թանաքի գոյն ունեցող:
ԹԱՆԱՔԱՄԱՆ, գ. Փոքրիկ սրուակ, որի մէջ պահում են թանաքը:
ԹԱՆԱՔՄԱՔՐԻՉ, գ. Թանաքը մաքրող իր՝ յարմարանք:
ԹԱՆԱՔՈՏ, ան. Վրան թանաք քսուած:

ԹԱՆԱՔՈՏԵԼ, նբ. Թանաք քսել, թանաք-քով կեղտոտել:
ԹԱՆԳԱՐԱՆ, գ. 1. Թանկ՝ մեծարժեք իրերի մթերանոց, գանձարան: 2. Նման. Անուն գանազան գրքերի:
ԹԱՆԳԱՐԱՆԱԳԷՏ, գ. Թանգարանի մասնագետ:
ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ, ած. Թանգարանին յատուկ:
ԹԱՆԳԱՐԱՆԱՅՈՒՄ, գ. Թանգարան դարձնելը, թանգարանի վերածելը:
ԹԱՆԹ, գ. Նուրբ մաշկ, աչքի վարագոյր:
ԹԱՆԹԱՆԱՅ, գ. Խնամք, հոգացողութիւն:
ԹԱՆԹՈՒՆԻՎ, գ. (Բուս.) Թանձրատերևուկների կարգին պատկանող բոյս:
ԹԱՆԹՈՒՆԵՆԻ, գ. (Բուս.) Այծատերև-ւազգիների կարգին պատկանող թուփ:
+ ԹԱՆԻ ԲԱՆՁԱՐ, գ. (Բուս.). Մի անորոշ բոյս:
+ ԹԱՆԻ ԾԱՂԻՎ, գ. (Բուս.) Գորտնուկների կարգին, հրանուկների ճեղին պատկանող բոյս:
ԹԱՆԿ, **ԹԱՆԳ**, ած. Արժեքատր, սուղ:
ԹԱՆԿԱԳԻՆ, ած. Բարձր գին ունեցող:
ԹԱՆԿԱՆԱԼ, չբ. Գինը բարձրանալ:
ԹԱՆԿԱՐԺԷՔ, ած. Բարձր արժեքի:
ԹԱՆԿԱՅՆԵԼ, անց. ձեռն կանաչալի:
ԹԱՆԿԱՆՈՑ, ած. Թանկ արժեցող:
ԹԱՆԿՈՒԹԻՒՆ, գ. Թանկ լինելը:
ԹԱՆՀԱՏ, S. Շաժիկ:
1. ԹԱՆՁԲ, ած. 1. Որի կազմիչ մասերը խիտ առ խիտ դասաւորուած են իրար մօտ: 2. Հաստամարմին: Հկո. Թեթեւ, փափուկ:
*** 2. ԹԱՆՁԲ**, գ. (Կենդ.) Անորոշ տեսակի ջրային թանձրամարմին թռչուն:
ԹԱՆՁՐԱԲԱՆԵԼ, չբ. Թանձր կերպով՝ դ-ի նման արտասանել ո, ր հնչիւնները:
*** ԹԱՆՁՐԱԲԱՐԲԱՆ**, ած. Թանձր լեզու ունեցող, ծանրալեզու:
ԹԱՆՁՐԱԳԻ, ած. Հաստ՝ ծանր պոչ ու-

նեցող:
ԹԱՆՁՐԱԴԱՆԱԿ, ած. Թանձր եւ դանդաղ:
ԹԱՆՁՐԱԼԱՐ, ած. Թանձր՝ հաստ լարեր:
ԹԱՆՁՐԱԼԵՁՈՒ, ած. Որի լեզուն թանձր է:
ԹԱՆՁՐԱՆԻՏ, ած. Թանձր եւ խիտ:
ԹԱՆՁՐԱՆՈՐ, ած. Թանձր եւ խոր:
ԹԱՆՁՐԱՆՈՒՌՆ, ած. Թանձր խոնուած:
ԹԱՆՁՐԱՄՈՐ, ած. Թանձր ծորող:
ԹԱՆՁՐԱՄՈՒԽ, ած. Թանձր ծուխ արձակող, շատ ծխացող:
ԹԱՆՁՐԱՇԻԹ, գ. Թանձր՝ պինդ հիւթով:
ԹԱՆՁՐՈՒՎ, գ. Հաստարուն ծառ, բոյս:
ԹԱՆՁՐԱԿԱՁՍ, ած. Թանձրամարմին:
ԹԱՆՁՐԱԿԵՂԵՒ, ած. Թանձր՝ հաստ կեղև ունեցող:
ԹԱՆՁՐԱԿՏՈՒՑ, ած. Թանձրակտուց՝ պնդակտուց թռչուններ:
ԹԱՆՁՐԱԿՈՒՌ, ած. Հաստ ու ամուր շինուած:
ԹԱՆՁՐԱՄԱՍ, ած. Թանձրութեամբ մածուղ՝ պատող:
*** ԹԱՆՁՐԱՄԱՍՈՒԹԻՒՆ**, գ. Թանձրամած լինելը:
ԹԱՆՁՐԱՄԱՐՍԻՆ, ած. Թանձր մարմին ունեցող, թանձր նիւթից:
ԹԱՆՁՐԱՄԻՍ, ած. Թանձր՝ պինդ միս ունեցող:
ԹԱՆՁՐԱՄԻՏ, ած. Միտքը թանձր, բուրբ. մտաւոր կարողութիւնը թոյլ:
ԹԱՆՁՐԱՄՈՐԹ, ած. Թանձր՝ հաստ մորթ ունեցող:
ԹԱՆՁՐԱՄՍՈՒԹԻՒՆ, գ. Թանձրամիս լինելը:
ԹԱՆՁՐԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. Թանձրամիտ լինելը:
ԹԱՆՁՐԱՄՐՈՒՐ, ած. Թանձր տականք ունեցող:

<p>ԹԱՆՁՐԱՍՕՐՈՒԿ } ան. Թանձր՝ խիտ ԹԱՆՁՐԱՍՕՐՈՒՔ } մտնող մտնող: ԹԱՆՁՐԱՅՕՆ, ան. Թանձր՝ խիտ յօնքեր ունեցող: ԹԱՆՁՐԱՆԱԼ, չբ. 1. Կազմիչ մասնիկ- ները խիտառիտ դասաւորուել: 2. Հկո. Նրբանայ: 3. Խստանայ, ուժեղանայ: ԹԱՆՁՐԱՆԻՍՏ, ան. Թանձր շերտով նստած: ԹԱՆՁՐԱՆԻԹ, ան. Թանձր նիւթից բաղկացած: ԹԱՆՁՐԱՇՈՒԹ(Ն), ան. Թանձր՝ հաստ շրթունքներ ունեցող: ԹԱՆՁՐԱՊՏՈՐ, ան. Թանձր եւ պրդ- տոր: ԹԱՆՁՐԱՍՍՂԱՐԹ, ան. Խիտ առ խիտ սաղարթով: ԹԱՆՁՐԱՍՓԻՒՆ, ան. Թանձրութեամբ սփռուած: ԹԱՆՁՐԱՏԱՐԱՓ, ան. Տարափի թանձ- րութեամբ: ԹԱՆՁՐԱՏԵՐԵԻ, ան. Թանձր՝ հաստ տերեւ ունեցող: ԹԱՆՁՐԱՏԵՐԵՒՈՒՎՆԵՐ, գ. (Բու.) Բոյսերի կարգ: ԹԱՆՁՐԱՑԵԱԼ, ան. անց. դերբ. Թանձ- րանայի: ԹԱՆՁՐԱՑՆԵԼ, անց. ձեւ Թանձրանայի: ԹԱՆՁՐԱՑՈՒՄ, գ. Թանձրանայը: ԹԱՆՁՐԱՓՈՒՇ, ան. Թանձր՝ խիտ փշերով, փշոտ: ԹԱՆՁՐԵԼ, նբ. Տ. Թանձրացնել: ԹԱՆՁՐՈՒԹԻՒՆ, գ. Թանձր լինելը: ԹԱՆՏ, ան. Թան կպած: ԹԱՆՁ, գ. (Ախտաբ.) Հաստ աղիքների ծանր վարակիչ հիւանդութիւն: + ԹԱՆՂՈՑ, գ. Հեւայը: ԹԱՇԿԻՆԱՎ, գ. Փոքրիկ նուրբ կտոր քթի, քրտինքի մաքրութեան համար: 1. ԹԱՆ, գ. Փայտի բարակ ձող, որի</p>	<p>վրայ հաւերը թառում են: 2. ԹԱՆ, գ. Արեւելեան երաժշտական լարաւոր գործիք: + ԹԱՌԱԿԵԼ, չբ. Մէկի օձիքից կպչել, աներեսութիւն անել: ԹԱՌԱՀԱՆ, ան. Թառից հանած՝ իջած: ԹԱՌԱՄ, ան. Թառամած: ԹԱՌԱՄԵԼ, նբ. Տ. Թառամեցնել: Թօշ- նիլ: ԹԱՌԱՄՈՒԹԻՒՆ, գ. Թառամած՝ խամ- րած լինելը: ԹԱՌԱՄՈՒՄ, գ. Թառամելը՝ թօշնիլը: ԹԱՌԱՆՁ, գ. Խոր՝ ուժգին հառաչանք: ԹԱՌԱՆՉԱՆՔ, գ. Թառանչելը, թառան- չելու՝ շառաչելու ձայնը: ԹԱՌԱՆՉԵԼ, չբ. Խոր հառաչանք ար- ձակել: ԹԱՌԱՓ, գ. (Կենդ.) Ճարպաթեփ ձկնե- րի կարգին պատկանող ձուկ: ԹԱՌԵԼ, չբ. (Թռչունների մասին) Թառի վրայ տեղաւորուել: ԹԱՌԼԱՆ, ան. Չքնաղ, գեղեցիկ: ԹԱՍ, Լայնաբերան ու տափակ աման: Բաժակ: ԹԱՍԱՁԵԻ, ան. Թասի՝ բաժակի ձեւ ու- նեցող: ԹԱՍԵԼ, չբ. Հոգալ, տիրել, նեղուել: Դժուար շնչել, հեւայ: ԹԱՍԻՎ, գ. Փոքր թաս: ԹԱՏԵՐԱԲԵՍ, գ. 1. Թատրոնի բեմ: 2. Նման. Տեղ՝ ասպարէզ: ԹԱՏԵՐԱԳԷՏ, գ. Թատերական արուես- տի մասնագէտ: ԹԱՏԵՐԱԳԻՏԱԿԱՆ, ան. Թատերար- ուեստին վերաբերող: ԹԱՏԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. Գիտութիւն թատրոնի եւ թատերական արուեստի մասին: ԹԱՏԵՐԱԳԻՐ, ան. գ. Թատրոնական շարադրութիւն գրող: ԹԱՏԵՐԱԳՐԵԼ, չբ. Թատերական գործ գրել:</p>
--	---

<p>ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Թատերագիր լինելը:</p> <p>ԹԱՏԵՐԱԴԵՐՁԱԿ, գ. Թատրոնական հազուստներ կարող դերձակ:</p> <p>ԹԱՏԵՐԱԴԻՏԱԿ, գ. Թատրոնի փոքրիկ հեռադիտակ:</p> <p>ԹԱՏԵՐԱԶԳԵՍՏ, գ. Թատերական զգեստ:</p> <p>ԹԱՏԵՐԱԶՈՒՐԿ, ան. Թատրոն չունեցող:</p> <p>ԹԱՏԵՐԱԺՈՂՈՎ, գ. Թատերական գործիչների հաւաք:</p> <p>ԹԱՏԵՐԱՍԱՂ, գ. Թատրոնական ներկայացում:</p> <p>ԹԱՏԵՐԱՍԱՂԱՈՃ, ան. Թատերախաղի ոճ ունեցող:</p> <p>ԹԱՏԵՐԱՍՈՒՄԲ, S. Թատրոնական խումբ:</p> <p>ԹԱՏԵՐԱՍՕՍ, գ. Թատերական երկի քննադատ:</p> <p>ԹԱՏԵՐԱՍՕՍԵԼ, Բ. Թատերախաղ գրախօսել:</p> <p>ԹԱՏԵՐԱԿԱՆ, S. Թատրոնական:</p> <p>ԹԱՏԵՐԱՀԱՍՏԵՐԳԱՅԻՆ, ան. Թատերական եւ համերգային:</p> <p>ԹԱՏԵՐԱՍԵՐ, S. Թատրոնասեր:</p> <p>ԹԱՏԵՐԱՍՐԱՀ, գ. Թատրոնի սրահ:</p> <p>ԹԱՏԵՐԱՏՕՆ, գ. Թատերական տուն:</p> <p>ԹԱՏԻ, S. Թատրոն:</p> <p>ԹԱՏԵՐԳԱԿ, S. Թատերագիր:</p> <p>ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ, S. Թատերագրություն:</p> <p>ԹԱՏՐՈՆ, գ. Շինություն, որտեղ խաղում են թատերական ներկայացումներ:</p> <p>ԹԱՏՐՈՆԱԿԱՆ, ան. Թատրոնին յատուկ:</p> <p>ԹԱՏՐՈՆԱՊԱՇՏ, ան. Թատրոնը պաշտոնող:</p> <p>ԹԱՏՐՈՆԱՍԵՐ, ան. գ. Թատրոն թատրոնական ներկայացումներ սիրող:</p> <p>ԹԱՏՐՈՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Թատրոնասեր լինելը:</p>	<p>ԹԱՐԱՆ, գ. Վերքի վրայ առաջացող թանձր հեղուկ:</p> <p>ԹԱՐԱՆԱԲՇՏԻԿ, գ. Փոքրիկ թարախուռուցք:</p> <p>ԹԱՐԱՆԱԲՈՐԲ, գ. Թարախային բորբոքում:</p> <p>ԹԱՐԱՆԱԲՈՒՄ, ան. Թարախածոր:</p> <p>ԹԱՐԱՆԱԼԻՑ, ան. Թարախով լցուած, շատ թարախոտ:</p> <p>ԹԱՐԱՆԱՇԻՆ, ան. Թարախ ծնող:</p> <p>ԹԱՐԱՆԱՇՈՐ, ան. Որտեղից թարախ է ծորում:</p> <p>ԹԱՐԱՆԱԿԱՆ, ան. Թարախով պատուած:</p> <p>ԹԱՐԱՆԱԿԱՆԵԼ, չբ. Թարախ բռնել կապել:</p> <p>ԹԱՐԱՆԱԿԱՆՈՒՄ, գ. Թարախակալելը:</p> <p>ԹԱՐԱՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ, գ. Թարախ ծորելը:</p> <p>ԹԱՐԱՆԱՅԻՆ, ան. Թարախի վերաբերեալ:</p> <p>ԹԱՐԱՆԱՇՍՏ, ան. Շատ թարախ պարունակող:</p> <p>ԹԱՐԱՆՈՏ, ան. Թարախ պարունակող:</p> <p>ԹԱՐԱՆՈՏԵԼ, նբ. Թարախով կեղտոտել:</p> <p>ԹԱՐԱՔ(Ե)ԱՄԱՑ, գ. Թարախական մի թափառական ցեղ:</p> <p>ԹԱՐԳ, գ. Թողնելը:</p> <p>ԹԱՐԳՄԱՆ, գ. 1. Թարգմանող անձը: 2. Փոխ. Արտայայտող:</p> <p>ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ, մկ. Բացատրելով, մեկնելով հանդերձ:</p> <p>ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ, ան. Թարգմանություն եղած:</p> <p>ԹԱՐԳՄԱՆԵԼ, նբ. Մի լեզուով ասուածը կմ գրուածը ուրիշ լեզուով ասել, կմ գրել:</p> <p>ԹԱՐԳՄԱՆԵԼԻ, ան. Ինչ որ պետք է թարգմանուի:</p> <p>ԹԱՐԳՄԱՆԻՉ, գ. Նա որ մի գրուածք</p>
---	---

թարգմանում է կմ թարգմանել է մի լեզ-
ւից ուրիշ լեզուի:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Թարգմանե-
լը: 2. Մեկնություն:

ԹԱՐԳՄԱՆՉԱԳԻՐ, ան. Թարգմանիչ-
ների ձեռքով գրուած:

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ, ան. Թարգմանչին
յատուկ:

ԹԱՐԳՄԱՆՉՈՒՇԻ, գ. Թարգմանիչ իգա-
կան սեռի:

1. ԹԱՐԹԱՓ, գ. Այքի կոպերի արագ
շարժումը:

+ **2. ԹԱՐԹԱՓ**, գ. Փորձանք, պատու-
հաս:

1. ԹԱՐԹԱՓԱՆՔ, գ. Թարթափելը:

+ **2. ԹԱՐԹԱՓԱՆՔ**, գ. Պաշարի կմ գոյքի
վերջին մնացորդը:

ԹԱՐԹԱՓԵԼ, նբ. Ս. Այքերը թարթել:

ԹԱՐԹԱՓՈՒՆ, ան. Թարթափող:

ԹԱՐԹԻՉ, Ս. Թերթերունք: Կոպերու
շուրթերուն բուսած մազեր:

ԹԱՐԹՈՒՄ, գ. Թարթելը:

* **ԹԱՐԽ**, գ. Գծագիր, ուրուագիծ:

ԹԱՐԽԱՆ, գ. Ազնուականութեան տիտ-
ղոս հոնների մէջ:

+ **ԹԱՐԽԱՆԱԿԱՆ**, ան. Թարխանին
յատուկ:

ԹԱՐԽԱՆՈՒԹԻՒՆ, գ. Թարխանի կո-
չումը:

ԹԱՐԽՈՒՆ, գ. (Բուս.) Բարձմենեակ-
ների ցեղին պատկանող բազմամեայ
բոյս:

ԹԱՐԿ, գ. Աղամանդի ամէն մի տաշ-
ուած երեսը:

ԹԱՐՄ, ան. Դեռահաս, առոյգ: Նոր: Հկր.
Քարթու:

ԹԱՐՄԱԲԵՐ, ան. Թարմութիւն բերող:

ԹԱՐՄԱԳԵՂ, ան. Թարմ եւ գեղեցիկ:

ԹԱՐՄԱԳԵՂՈՒԹԻՒՆ, գ. Թարմ եւ գե-
ղեցիկ լինելը:

ԹԱՐՄԱՆԱԼ, չբ. Թարմ դառնալ:

ԹԱՐՄԱՍԱՐ, ան. 1. Յետին, անպիտան,
փուչ: 2. (Քրկն.) Համարում էին «խմն»,
«ինչ», «ապաքէն», կմ «թէ», «եթէ», «իբր»,
«զի», «որ» եւն բառերը:

ԹԱՐՄԱՏԻ, ան. Դեռահաս: Երիտա-
սարդ:

ԹԱՐՄԱՑՆԵԼ, անց. ձեւ Թարմանալ ի:

ԹԱՐՄԵՐԱՄ, ան. Նոր երամ կազմած:

ԹԱՐՄՈՒԹԻՒՆ, գ. Թարմ լինելը:

ԹԱՐՄՕՐԵՆ, մկ. Թարմ կերպով:

ԹԱՐՓ, գ. Լայն բերանով ու նեղ տակը
ծակ կողով:

ԹԱՐՔ, գ. Չիու գաւակ:

ԹԱՑ, ան. Որի վրայ ջուր կմ այլ հեղուկ
է ածած:

+ **ԹԱՑԱՆ**, գ. Կաթնեղէն:

ԹԱՑԱՆԵԼ, չբ. Թաց լինել:

ԹԱՑԵԼ, չբ. Ջրով թրջել:

+ **ԹԱՑԻԿ**, ան. Թեթեւալիկ:

+ **ԹԱՑ-ԽՆՈՒՄ**, ան. մ. Թաց եղած:

ԹԱՑԿԵԿ } ան. մկ. Փոքր ինչ թաց, խո-
ԹԱՑՈՏ } նաւ:

ԹԱՑՈՏԵԼ, նբ. Քիչ թաց անել:

ԹԱՑՈՒԹԻՒՆ, գ. Թաց լինելը:

+ **ԹԱՑ ՈՒ ԹՕՆ**, գ. Խոնաւ անձրեւային
եղանակ:

1. ԹԱԻ, ան. 1. Խիտ առ խիտ բուսած:
Հկր. Լերկ: 2. (Քրկն.) Խիստ արտա-սան-
ուող: Հկր. Նուրբ: 3. (Երած.) Հայկական
երաժշտութեան մէջ տեւողութեան
նշան: Հաստ ձայն:

2. ԹԱԻ, գ. Երբայական այբուբենի վեր-
ջին տառի անունը:

3. ԹԱԻ, գ. Բուն յարմար ժամանակը՝ մի
բան անելու:

ԹԱԻԱԼ, գ. Թաւալելը:

ԹԱԻԱԼԱԳԼՈՐ, ան. մկ. Թաւալուելով-
գլտորուելով:

ԹԱԻԱԼԳԼՈՐ, Ս. Թաւալագլոր: Գլխի-
վար:

ԹԱԻԱԼԵԼ, նբ. Մի բան ինքն իր վրայ պտոյտ տալով գլորել ներքեւ:
ԹԱԻԱԼՈՒԿ, գ. Մետաղեայ փոքր անիւ:
ԹԱԻԱԼՈՒՄՆ, գ. Թաւալելը, թաւալ-
 ուելը: Գլորում:
ԹԱԻԱԼՈՒՆ, ած. Թաւալումը:
ԹԱԻԱԼՈՒԵԼ, կր. չբ. Ինքն իւր շուրջը՝
 իր առանցքի շուրջը պտոյտ գործել:
ԹԱԻԱՆԻՏ, ած. Թաւ եւ խիտ:
ԹԱԻԱՍԱԶ, ած. Թաւ՝ խիտ մազերով,
 բրդոտ:
ԹԱԻԱՍԱԶՈՒԹԻՒՆ, գ. Թաւամազ լի-
 նելը:
ԹԱԻԱՅՕՆ, ած. Թաւ՝ խիտ յօնքեր ունե-
 ցող:
ԹԱԻԱՆԱԼ, չբ. Խտանալ, թանձրանալ:
ԹԱԻԱՆՇԱՆ, գ. Թաւ արտասանու-
 թեան նշան:
ԹԱԻԱՐՄԻ, ած. Թաւ մազերով ծած-
 կուած, բրդոտ:
ԹԱԻԱՓԵՏՈՒՐ, ած. Խիտ փետուրներ
 ունեցող:
+ԹԱԻԻԼ-ԹԱԻԻԼ ԳԱԼ, Տ. Թաւալ (տալ):
ԹԱԻԻՇ, գ. Մետաքսէ կմ բամբակէ փա-
 փուկ գործուածք:
ԹԱԻՇԱԿԵՐՊ, ած. Թաւիշի նման:
ԹԱԻՇԱՊԱՏ, ած. Թաւիշով պատած:
ԹԱԻՇԵԱՅ, ած. Թաւիշից պատրաս-
 տած:
ԹԱԻՇԵՂԷՆ, ած. գ. Թաւիշից պատրաս-
 տուած իրեր:
ԹԱԻՈՒԹԻՒՆ, գ. Թաւ լինելը:
ԹԱԻՈՒՏ, ած. Խիտ առ խիտ բուսած:
ԹԱԻՐԶՆԱԿ } գ. (Բուս.) Գարնանա-
ԹԱԻՐԸՆՁՈՒԿ }
 ծաղիկների կարգին պատկանող բոյս:
+ ԹԱԻՐԻԶԵԼԻ, ած. գ. Խաղողի մի տե-
 սակ:
1. ԹԱՓ, գ. 1. Ներսի դին, մէջը: 2. Բայերի
 հետ իբրեւ մկ. Միջով, ներսը, խորը:
2. ԹԱՓ, գ. 1. Մի բան անելու կարողու-
 թիւն: 2. Զարկերակ: 3. + Թափ-թափ, ա-

րագ-արագ, շուտ-շուտ: Եռանդ, սլացք:
+ ԹԱՓԱՑ, Տ. Ձուլածոյ:
ԹԱՓԱՀԱՐԵԼ, նբ. Թափ տալով շարժել:
ԹԱՓԱՀԱՐՈՒԹԻՒՆ } գ. Թափահարելը:
ԹԱՓԱՀԱՐՈՒՄ }
ԹԱՓԱՄԵՂՍՈՒՄ, Հարուածի, ցնցում-
 ների ուժի նուազեցում:
ԹԱՓԱՆ, գ. Ուղիղ աղիք, որտեղ կղկը-
 դանքը հաւաքուում է:
ԹԱՓԱՆԻԻ, գ. (Մեքեւ.) Մեծ ու ծանր
 անիւ:
ԹԱՓԱՆՑ, ած. Թափ անցնող:
ԹԱՓԱՆՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Թափան-
 ցական լինելը:
ԹԱՓԱՆՑԵԱԼ, ած. Միջով անցած:
ԹԱՓԱՆՑԵԼ, չբ. 1. Թափ անցնել, միջով
 անցնել: 2. Նման. Խորամուխ լինել:
ԹԱՓԱՆՑԵԼԻ, ած. Որի մէջ կմ միջով
 կարելի է թափանցել:
ԹԱՓԱՆՑԻԿ, ած. 1. Տ. Թափանցանց: 2.
 (Ֆիզ.) Որի միջով լոյսը անցնում է:
ԹԱՓԱՆՑԻՉ } ած. Թափանցող:
ԹԱՓԱՆՑԿՈՏ }
ԹԱՓԱՆՑԿՈՒԹԻՒՆ, գ. Թափանցիկ լի-
 նելը:
ԹԱՓԱՆՑՈՂՈՒԹԻՒՆ, գ. Թափանցող՝
 թափանցիչ լինելը:
ԹԱՓԱՆՑՈՒՄ, գ. Թափ անցնելը, միջով
 անցնելը: Ներագրում:
+ ԹԱՓԱՆ-ՓՍՈՐ, Տ. Թափան-թրիք:
*** ԹԱՓԱՌ**, մկ. Թափառումով:
ԹԱՓԱՌԱԿԱՆ, ած. 1. Թափառող. այս-
 այն կողմը շրջող: 2. գ. Աստանդական
 կեանք վարող ժողովուրդ: 3. մկ. Թա-
 փառելով: Դեզերող:
ԹԱՓԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Թափառա-
 կան լինելը: Դեզերում:
ԹԱՓԱՌԱՍՈՒԿ, Տ. Շիկամուկ:
ԹԱՓԱՌԱՅԱՑ, ած. մկ. Աննպատակ՝
 աստանդական թափառող:
ԹԱՓԱՌԱՇԶԻԿ, ած. Անգործ եւ ան-
 նպատակ թափառող:

ԹԱՓԱՌԱՇՐՉՈՒԹԻՒՆ, գ. Թափառաշրջիկ լինելը:
ԹԱՓԱՌԵԼ, չք. Այս ու այն կողմը շրջել աննպատակ: Դեզերիլ:
ԹԱՓԱՌԻՎ, Տ. Թափառական:
ԹԱՓԱՌՈՒՄ, գ. Թափառելը:
ԹԱՓԵԼ, նբ. 1. Թափով՝ ուժով խլել: 2. Թափով՝ ուժով շարժել: 3. Մի բան դատարկել: 4. Հեղուկը ամանից դուրս ածել:
 + **ԹԱՓԷԹԱՓ**, մկ. Մեծ թափով, շտապով:
 + **ԹԱՓԷՍՍՓ ՏԱԼ**, Թափահարել, ցնցել, շարժել:
 * **ԹԱՓԸԼԹԱՑ**, ած. Թափով ընթացող՝ վազող, սրընթաց:
 + **ԹԱՓ-ԹԱՑ**, ած. Բոլորովին թաց:
 + **ԹԱՓԹԱՓԱՆՔ**, Տ. Թափթփուք:
 * **ԹԱՓԹԱՓԵԼ**, չք. Բարխսել:
 + **ԹԱՓԹՓԱՍ**, ած. Այստեղ եւ այնտեղ թափած: Անխնամ:
ԹԱՓԹՓԵԼ, նբ. Այստեղ եւ այնտեղ թափել:
 + **ԹԱՓԹՓՈՒՎ**, ած. մկ. Այստեղ-այնտեղ թափած, հատ-հատ: Աւելցուկ:
ԹԱՓԹՓՈՒՎ, Արտադրութեան ժամանակ նիւթի մանրուքը:
 + **ԹԱՓԻՎ**, գ. Չեռքի կէս թաթ:
ԹԱՓԻՉ, գ. Գործուածքը թակելով՝ տոփելով լուացող:
ԹԱՓՕՈՒ, ած. Թափած, ձուլածոյ:
 * **ԹԱՓՈՑ**, ած. մկ. Արագ, արագաբար:
ԹԱՓՈՒՄ, գ. Դուրս թափելը:
 1. **ԹԱՓՈՒՐ**, գ. Փայտէ տափակ սկուտեղ:
 2. **ԹԱՓՈՒՐ**, ած. 1. Դատարկ, ամայի:
 2. Չբռնուած, ազատ:
 * **ԹԱՓՈՒՐԵԼ**,
ԹԱՓՈՒՐԱՆԱԼ, չք. Թափուր մնալ, դատարկուել:
ԹԱՓՈՒՐՈՒԹԻՒՆ, գ. Թափուր՝ դատարկուած՝ ամայի լինելը:

+ **ԹԱՓՉԱԿ**, գ. Բահի կոթի վրայ հազցըրած փայտէ փոքրիկ թել:
 * **ԹԱՓՉՈՒԹԻՒՆ**, գ. Թափիչի արհեստը:
ԹԱՓՕՆ(Ք), գ. Թափթփուած մասեր:
ԹԱՓՕՆԱԿՈՅՏ, գ. Թափօնների կոյտ: Հանքի աւելցուք:
ԹԱՓՕՐ, գ. 1. Եկեղեցական հանդէս: 2. Ընդհանրապէս հանդիսատր երթ:
ԹԱՓՔ, գ. Սայլի երեսի կազմածը՝ ցցերով, առանց լիսեռի եւ անիւների. Թամբ:
ԹԱՓՔԱԳՈՐՄ, ած. գ. Թափք պատրաստող մասնագէտ:
ԹԱՓՔԱԳՈՐՄԱԿԱՆ, ած. Թափքագործին վերաբերող:
ԹԱՓՔԱՅԻՆ, ած. Թափքին վերաբերող:
ԹԱՔ, գ. Թաքնուել, Թաքցնել:
ԹԱՔԹԱՔՈՒՐ } ած. մկ. Թաքնուելով,
ԹԱՔԹԱՔՈՒՐ } պահուրտելով:
ԹԱՔՆԱԲԱՐ, մկ. Թաքուն կերպով:
 Գաղտնի:
ԹԱՔՆԱԳՐՈՒԹԵԱՆ, գ. Թաքուն գրուած:
ԹԱՔՆԱՆՈՐՀՈՒՐ, ած. Թաքուն խորհուրդներ ունեցող:
ԹԱՔՆԱՄԻՏ, ած. Ծածկամիտ:
ԹԱՔՆՈՒԹԻՒՆ, գ. Թաքուն՝ ծածուկ լինելը:
ԹԱՔՆՈՒԵԼ, չք. Ծածկուել ուրիշի տեսողութիւնից: Պահուրտիլ:
 + **ԹԱՔՆԻՎ**, ած. Թաքնուած:
ԹԱՔՆԻՆ, ած. մկ. 1. Թաքնուած, թաքցրած: 2. Մութ, անյայտ:
ԹԱՔՆԻՍ, գ. Թաքնուելը, թաք կենալը:
ԹԱՔՉԵԼ, Տ. Թաքնուել: Պահել:
 * **ԹԱՔՍՈՅ**, ած. Թաքնուած, թաք կացած:
ԹԱՔՍՈՅ, գ. Թաք կենալու՝ պահուրտելու տեղ:
ԹԱՔՏԵԼ, անց. ձեւ. Թաքնուելի:
ԹԵԶԱՆ, գ. Գործուածքի լայնքսի թելը:

* **ԹԵԶԱՆԱՏ**, ան. Թեզանիք չունեցող:
ԹԵԶԱՆԻՔ, գ. Հագուստի երկայն թել:
 Հագուստի բազուկը ծածկող մաս:
 * **ԹԵԶՆԵԲԵՐԱՆ**, գ. Թեզանիքի բերանը:
ԹԵԹԵԻ, ան. 1. Փոքր քաշ ունեցող:
 2. Թոյլ կերպով արտայայտուող, մեղմ:
 3. Արագաշարժ, արագ: 4. Աննշան, փոքր:
 5. մկ. Թեթել կերպով:
ԹԵԹԵԻԱԲԱՐ, մկ. Թեթել կերպով:
ԹԵԹԵԻԱԲԱՐՈՅ, ան. Թեթել վարք ու բարքի տեր:
ԹԵԹԵԻԱԲԱՐՈՅՈՒԹԻՒՆ, գ. Թեթելաբարոյ լինելը:
ԹԵԹԵԻԱԲԵՆՈՆ, ան. Թեթել բեռնած:
ԹԵԹԵԻԱԳԻՆ, ան. Շատ թեթել:
ԹԵԹԵԻԱԳՆԱՅ, ան. Թեթել՝ արագ գրնացք ունեցող:
ԹԵԹԵԻԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ, գ. Թեթելագրնաց լինելը:
ԹԵԹԵԻԱԳՆԻ, ան. մկ. Թեթել՝ էժան գնով, էժանագին:
ԹԵԹԵԻԱԳՈՅՆ, բաղդ. աստ. Թեթել՝ի, Աւելի թեթել:
ԹԵԹԵԻԱԶԳԵՍ, ան. մկ. Թեթել հագնուած:
ԹԵԹԵԻԱԶԷՆ, ան. Թեթել կերպով զինւած:
ԹԵԹԵԻԱԹՈՒՉ, ան. Թեթել թոխք ունեցող:
ԹԵԹԵԻԱՎԻ, Տ. Թեթելաբար:
ԹԵԹԵԻԱՀԱՆԴԵՐՉ, Տ. Թեթելազգեստ:
ԹԵԹԵԻԱՉԵՆՆ, ան. (դրձվ.): Թեթել ձեռքով:
ԹԵԹԵԻԱՄԻՏ, ան. Նա որ շտապով մի բան անում է՝ առանց կարգին մտածելու: Թեթելատլիկ, շփացած:
ԹԵԹԵԻԱՍՏՈՒԹԻՒՆ, գ. Թեթելամիտ լինելը:
ԹԵԹԵԻԱՆԱԼ, չբ. 1. Քաշը պակասել:
 2. Լրջութիւնը կորցնել:
ԹԵԹԵԻԱՆՂԱՍ, ան. Թեթել անղամներ

ունեցող:
ԹԵԹԵԻԱՇԱՐՇ, ան. Դիւրաշարժ:
ԹԵԹԵԻԱՇԱՐՇՈՒԹԻՒՆ, գ. Թեթելաշարժ լինելը:
ԹԵԹԵԻԱՍԱՀ, ան. Արագ սահող:
 * **ԹԵԹԵԻԱՍԻՐՏ**, ան. Թեթելամիտ, թոխվոյ:
ԹԵԹԵԻԱՎԱՐՔ, ան. Թեթել վարքի տեր, թեթելաբարո:
ԹԵԹԵԻԱՔԱՅՆ, ան. Թեթել քայլեր ունեցող: Արագաքայլ:
ԹԵԹԵԻՆԸԹԱՅ, ան. մկ. Թեթել ընթացք՝ քայլուածք ունեցող:
ԹԵԹԵԻՆԸԹԱՅՈՒԹԻՒՆ, գ. Թեթելընթաց լինելը:
ԹԵԹԵԻՆԱԼ, Տ. Թեթելանալ:
ԹԵԹԵԻՈՒԹԻՒՆ, գ. Թեթել լինելը: 1. Մեղմութիւն: 2. Արագաշարժ լինելը: 3. Աննշան լինելը: 4. Անպարկեշտութիւն:
 + **ԹԵԹԵԻՈՒՎ**, ան. Թեթել, թեթելիկ:
 + **ԹԵԹԵԻՍՈՒՎ**, ան. Թեթելամիտ:
ԹԵԹԵԻՍՈՒՎՈՒԹԻՒՆ, գ. Թեթելատլիկ՝ անամօթ լինելը:
ԹԵԹԵԻՕՐԷՆ, մկ. Թեթելաբար:
ԹԵԹԻՅԵՆ, նբ. (Աքաղաղի) զուգաւորուել (հաւի հետ):
ԹԵՆ, գ. 1. Երկայն՝ բարակ՝ կակուղ՝ մազանման նիւթ: 2. Հեռագրական թել:
 3. Տեւողութիւն, ընթացք: Կեանքի թելը խզուեց:
ԹԵՆԱԴԻՐ, Տ. Թելադրող:
ԹԵՆԱԴՐԱՆՔ, Տ. Թելադրութիւն:
ԹԵՆԱԴՐԵՆ, նբ. 1. Յիշեցնել, խրատել:
 2. Բերանացի ասել:
ԹԵՆԱԴՐՈՉ, գ. Խորհուրդ տուող, դըրդող:
ԹԵՆԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Յուշարարութիւն, յիշեցնելը: 2. Բերանացի մի բան ասելը, որպէսզի ուրիշը գրի առնի:
ԹԵՆԱՏՈՅՐ, գ. Թելի ծայրը:
ԹԵՆԱԿԱՐ, գ. Կարի նախափորձ:

ԹԵԼԱՀԱՅՍ, գ. Թելի նման կտրտած ու բոհրած խմոր:

ԹԵԼԱՆՍԱՆ, ած. Թելի նման:

ԹԵԼԱԻՈՐ, ած. Թել ունեցող:

ԹԵԼԵԼ, նբ. Թելը ասեղի ծակն անցկացնել:

ԹԵԼ-ԹԵԼ, ած. մկ. 1. Թելերի բաժանում: 2. Նման. Քրքրում:

ԹԵԼԹԵԼԵԼ, չբ. Բարակ թելերի բաժանում:

+ **ԹԵԼԻԿ**, գ. Բարակ թել:

+ **ԹԵԼԻԿ-ՄԵԼԻԿ**, ած. Փոքր, տկարակազմ:

+ **ԹԵԼԽՍՈՐ**, գ. Խմորեղեն կերակուրի մի տեսակ:

ԹԵԼՈՐՈՒԿ, գ. (Կենդ.) Բարակ կլոր երկայնաձև թելանման որդերի ցեղ:

ԹԵԼՈՒՄ, գ. Թելելը, թելը ասեղի ծակով անցկացնելը:

ԹԵԼ-ՊԱՆԻՐ, գ. Քաշած կաթից պատրաստած պանիր:

ԹԵԼՓԻՆ, Տ. Դլփին:

ԹԵԿՆ, գ. Ուսազրուխ, կռնակ:

ԹԵԿՆԱՍՈՒ, գ. Այն անձը, որ նկատի է առնում ընտրություն:

2. Գիտութիւնների թեկնածու:

ԹԵԿՆԱՍՈՒԹԻՆ, գ. Թեկնածու լինելը:

ԹԵԿՆԱԿԻՑ, ած. գ. Թիկունք եղող:

ԹԵԿՆԱՄԻՄ, գ. Թիկունքի մսի շերտ:

+ **ԹԵՂ**, գ. Յարդախատն ցորեն կմ գարի:

+ **ԹԵՂԵԼ**, նբ. Յարդախատն հացահատիկի երկայնաձև ղեգ:

ԹԵՂԻ, գ. (Բուս.) Կնձնիների կարգին պատկանող ծառ:

+ **ԹԵՂՈՒՑ**, գ. Թեղիներ տնկում կմ բուսած տեղ:

ԹԵՂՕՇ, գ. (Բուս.) Կաղնիի ցեղին պատկանող գեղեցիկ ծառ:

ԹԵՄ, գ. Գալատ կմ շրջան, որ յանձնըւում է մի եպիսկոպոսի կառավարութեան:

ԹԵՄԱԿԱԼ, ած. Թեմ ունեցող, թեմի կառավարիչ:

ԹԵՄԱԿԱՆ, ած. Թեմին յատուկ:

ԹԵՄԱԿԱՆԱԻԱՐՏ, ած. Թեմական հոգևոր դպրոցն աւարտած:

ԹԵՅԱԴԵՂԱՏ, գ. Թելի խտից պատրաստած դեղատ:

ԹԵՅԱՓՈՇԻ, գ. Թեյախտի փոշի:

* **ԹԵՊԵԿ**, գ. Կապկի մի տեսակ:

+ **ԹԵՊՈՒՐ**, Տ. Փետուր:

+ **ԹԵՊՈՒՐՓՈՒՆ**, գ. Թռչունների փետուր փոխելը:

ԹԵՊՈՒՍՕ, **ԹԵՊՈՒԵԼ**, Տ. Թեպրած: Փիտրած:

ԹԵՊՐԱՍՕ ՀԱԻ, գ. Թեպրահան արած, փետուրները քաշած հաւ:

ԹԵՊՐԱՀԱՆ, ած. Թեպրած: Փետրահան:

1. **ԹԵՐ**, գ. Կողմ, կոյս:

+ 2. **ԹԵՐ**, գ. Օաղկի թերթ:

3. **ԹԵՐ**, Թերի՛ի արմատ:

* **ԹԵՐԱԲԱՆ**, ած. Խօսքը կիսատ՝ անկատար:

ԹԵՐԱԲԱՆԵԼ, ն. եւ չբ. Կիսատ-պռատ խօսել:

ԹԵՐԱԲԱՑ, ած. Թերի՛ կիսատ բացում:

ԹԵՐԱԳԼՈՒԽ, ած. Թերի՛ անկատար գլուխ ունեցող:

ԹԵՐԱԳՆԱՀԱՏԵԼ, նբ. Թերի՛ գնահատել, իրական արժեքից պակաս գնահատել:

ԹԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ, գ. Թերագնահատելը:

* **ԹԵՐԱԳՐԵԼ**, նբ. Թերի՛ եւ թիր գրել, աղաւաղել խօսքը:

ԹԵՐԱԹԱՓ, ած. Կիսով չափ թափում:

ԹԵՐԱԹԱՓԵԼ, չբ. Հարբեցութիւնից կիսով չափ սթափուել:

ԹԵՐԱԹԻՈՒ, Իրադրութիւն, երբ թռչող մարմինը, շարժուելով դէպի թիրախ, դրան չի հասնում՝ շուտ է վայր ընկնում

<p>կամ պայթում:</p> <p>* ԹԵՐԱԼՈՒՐ, ան. Կիսատ-պռատ լսող, անուշադիր:</p> <p>* ԹԵՐԱԼՍԵԼ, նբ. Կիսատ-պռատ լսել, անուշադիր լինել:</p> <p>ԹԵՐԱՆՈՒՄ, ան. Կիսատ խմած:</p> <p>ԹԵՐԱԽՕՍ, ան. Խօսուածքը թերի՝ կակազ:</p> <p>ԹԵՐԱԾԱՆՕԹ, ան. Ոչ լիովին ծանօթ:</p> <p>* ԹԵՐԱՄԻՆ, ան. Օրպակաս ծնուած:</p> <p>ԹԵՐԱԿԱԶՍ, ան. Թերի կազմուած:</p> <p>ԹԵՐԱԿԱՏԱՐ, ան. Աւբողջապէս չկատարուած:</p> <p>ԹԵՐԱԿԱՏԱՐԵԼ, նբ. Թերի կատարել:</p> <p>ԹԵՐԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ, գ. Թերակատար լինելը:</p> <p>ԹԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ, գ. Թերակատարելը:</p> <p>* ԹԵՐԱԿԵՐՈՒԹԻՒՆ, գ. Պակաս ուտելը:</p> <p>ԹԵՐԱԿԴԶԱՅԻՆ, ան. Թերակդուն յատուկ:</p> <p>ԹԵՐԱԿԴՁԻ, գ. Հողամաս, որ շրջապատուած է ծովով, բացի մի կողմից:</p> <p>* ԹԵՐԱԿԹՈՒԹԻՒՆ, Տ. Կիսակրթութիւն:</p> <p>ԹԵՐԱՀԱԼ, ան. Թերի՝ կիսատ հալուած:</p> <p>ԹԵՐԱՀԱՇՈՒԱՐԿ, գ. Թերի հաշուարկ:</p> <p>ԹԵՐԱՀԱՍ, ան. Տիաս, անփորձ, կէս հասուն:</p> <p>ԹԵՐԱՀԱԻԱՏ, ան. 1. Որի հաւատը թերի է: 2. Անվստահ:</p> <p>ԹԵՐԱՀԱԻԱՏԵԼ, չբ. Թերի հաւատալ:</p> <p>ԹԵՐԱՀԱԻԱՏՈՒԹԻՒՆ, գ. Թերի հաւատ ունենալը:</p> <p>ԹԵՐԱՀՄՈՒՏ, ան. Նա որ թերի հմտութիւն ունի:</p> <p>ԹԵՐԱՃ, ան. Քիչ զարգացած, յետամընաց:</p> <p>* ԹԵՐԱՄԻՏ, ան. Պակասամիտ:</p> <p>* ԹԵՐԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. Թերամիտ լինելը, պակասամտութիւն:</p> <p>ԹԵՐԱՅԱՆԳ, ան. գ. Յանգ, որի նմանա-</p>	<p>ձայնութիւնը թերի է:</p> <p>ԹԵՐԱՅԱՆԳՈՒԹԻՒՆ, գ. Թերայանգ լինելը:</p> <p>ԹԵՐԱՅՈՅՍ, ան. Կատարելապէս չուսացող: Նուազ յոյսով:</p> <p>ԹԵՐԱՆԱԼ, չբ. 1. Թերի կմ անկատար գտնուել:</p> <p>* ԹԵՐԱՆԴԱՍ, ան. Որեւէ անդամը պակաս:</p> <p>* ԹԵՐԱՆՈՒՆ, գ. Թերի անուն:</p> <p>* ԹԵՐԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. Թերի անուանադրութիւն:</p> <p>ԹԵՐԱՍԱՌՈՅՅ, ան. Կիսատ սառած:</p> <p>ԹԵՐԱՍՏՈՒԵՐ, ան. (Ֆիզ.) Որտեղ աղօտ լոյս է ընկնում: 2. գ. (Աստղաբ.) Աղօտ լոյս: Կիսաստուեր:</p> <p>ԹԵՐԱՎԱՐԺ, ան. Որի վարժութիւնը դեռ թերի է: Կիսավարժ:</p> <p>ԹԵՐԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ, գ. Թերավարժ լինելը:</p> <p>ԹԵՐԱՍ, ան. Թերի, անկատար, պակասաւոր:</p> <p>ԹԵՐԱՍԵԼ, նբ. Թերատ դարձնել:</p> <p>ԹԵՐԱՍԵՍ, ան. Թերի տեսնող:</p> <p>ԹԵՐԱՍԵՍՈՒԹԻՒՆ, գ. Թերատես լինելը:</p> <p>ԹԵՐԱՐԺԵՒՈՐՈՒՄ, գ. Թերարժեւորելը, ըստ արժանուոյն չգնահատելը, թերարժէքաւորում:</p> <p>ԹԵՐԱՅՈՒՄ, գ. Պարտականութեան անտեսում, զանցառութիւն:</p> <p>ԹԵՐԱԻԱՐՏԻԱԾ, ան. Կիսաւարտ:</p> <p>ԹԵՐԱՓ, Եբբ. trafim, Մարդակերպ տընային կուռք:</p> <p>ԹԵՐԱՔԱՍ, ան. Կիսով չափ, անկատար: Լաւ չքանում:</p> <p>ԹԵՐԱՔԱՍԵԼ, նբ. Կիսով չափ կոխել պատեանի մէջ: Խաղողը կիսով չափ քամել:</p> <p>* ԹԵՐԱՔԱՍՈՒԹԻՒՆ, գ. Թերաքամ լինելը, անկատարութիւն:</p> <p>ԹԵՐԲԵՆՆՈՒԱԾՔ, գ. Նուազ բեռնուած:</p>
---	---

ԹԵՐԵՒՄ, մկ. Որ արտայայտում է կարելիություն, յոյս, ենթադրություն: Գուցէ:
 + **ԹԵՐԵՓ**, ած. Թերի եփած: Կիսաեփ:
 + **ԹԵՐԵՓՈՆ(Շ)ՓՈՇ**, ած. Անփութություն էր կիսատ-պռատ կատարում:
ԹԵՐԶՒՆՈՒՄ, գ. Բաւարար չափով զինուած չլինելը:
ԹԵՐԶՒՆՈՒՅԵԼ, բ. Բաւարար չափով զինուած չլինել:
ԹԵՐԹ, գ. 1. Որեւէ լայն, տափակ ու բարակ իր: 2. Միածալ թուղթ: 3. Գրքի մէջ ամէն մի թուղթ: 4. Լրագիր:
ԹԵՐԹԱՆՈՒԿՆԵՐ, գ. (Կենդ.) Փափկամորթների ստորին դասը:
ԹԵՐԹԱԿԵՐՊ, ած. (Օաղկի) թերթի նման:
ԹԵՐԹԱՍԵՐ, գ. Թերթ սիրող:
ԹԵՐԹԵՒՈՐ, ած. Թերթեր ունեցող:
ԹԵՐԹԱՔԱՐ, գ. (Հանք.) Մրաքարերի կարգին պատկանող ապառաժային քարեր:
ԹԵՐԹԵԼ, նբ. Գրքի թերթերը այս եւ այն կողմը դարձնել:
ԹԵՐԹԵՐՈՒՆՔ, գ. Աչքի արտեւանունքի (կոպերի) ծայրերին բուսած կարճ ու կարծր մազերի շարքը:
 + **ԹԵՐԹԵՐՈՒԿ**,
 + **ԹԵՐԹԵՐՈՒՏ**, գ. Խմորեղէն թխուածքի մի տեսակ:
ԹԵՐԹԻԿ, գ. Փոքր չափով կտրած թերթ:
ԹԵՐԹՈՒԿ, գ. Լրագիր:
ԹԵՐԹՕԼ, գ. Գրական կմ գիտական բովանդակութեամբ երկ: Թերթի մէջ մաս-մաս հրատարակուած վէպ:
 1. **ԹԵՐԻ**, ած. 1. Կիսատ, չամբողջացած:
 2. Պակասատը: 3. Անկատար:
 + 2. **ԹԵՐԻ**, գ. 1. Սայլի երկու կողքի չորս գերաններից վերելի ամէն մէկը, թառ:
 + **ԹԵՐԻՄԱՇ**, ած. Կիսատ խաշած:
 + **ԹԵՐԻՇՈՒԿ**, ած. Գողտրիկ, քաղցրահոս:
ԹԵՐԻՄՈՐՈՎ, ած. Թերխաշ:

* **ԹԵՐԻՍՕՍ**, Տ. Կակագ:
ԹԵՐԶԱԻԱՔԱԳՐՈՒՄ, գ. Թերի հաւաքագրելը:
 + **ԹԵՐՄԱՇ**, ած. Կիսամաշ:
ԹԵՐՄԱՅՔ, ած. Մէկի կերածի կմ խմածի մնացորդը:
ԹԵՐՈՐՈՇ, ած. Լրիւ չորոշում:
ԹԵՐՈՒԴԵՍ, Տ. Թերուղէմ վիճաբանություններ:
ԹԵՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Թերի կիսատ լինելը: 2. Պակասություն:
ԹԵՐՈՒՂԻՂ, ած. Ոչ ամբողջապէս ուղիղ շիտակ:
ԹԵՐՈՒՄ, ած. Որի ուսումը թերի է, թերի ուսած:
ԹԵՐՈՒՍՈՒԹԻՒՆ, գ. Թերուս լինելը:
ԹԵՐՍԼՈՒԱՄՈՒԹԻՒՆ, գ. Թերսնուած լինելը՝ թերասնում՝ թերասնութիւն:
ԹԵՐՔԱՍ, ած. Թերաքամ, կիսաքամ:
ԹԵՒ, գ. 1. Թռչունների մարմնի փետրաւոր թռչելու անդամը: 2. Մարդու բազուկ, ձեռք: 3. Մակոյկի երկու կողմերի ամբողջը գցուած զոյգ փայտիկները: 4. Զգեստի մասը: 5. Ընտանի թռչուն: 6. Շինութեան մասեր: 7. Փոխ. Հովանաւորություն, պաշտպանություն:
ԹԵՒԱԶՈՒՐԿ, ած. Թեւ(եր)ից զրկուած:
ԹԵՒԱԹԱՓ, ած. Թեւերը թափած՝ պոկած՝ կախած, յոգնած:
ԹԵՒԱԹԱՓԵԼ, չբ. Թեւերը թափել, թեւերը կորցնել:
ԺԱՆԳԱՁԱՅՆ, ան. *Ժանգոտ իրի ձայն ունեցող:*

*** ԺԱՆԳԱՆԱԼ**, չբ. *Ժանգոտել, ժանգակալել:*
ԺԱՆԳԱՋՈՒՐ, գ. *Ժանգախառն ջուր:*
ԺԱՆԳԱՌ, ԺԱՆԳԵԱՌ, Ս. *Ժանգառած, ժանգակեր:*
ԺԱՆԳԱՌԱԳՈՅՆ, ան. *Ժանգառի գոյնով:*
+ ԺԱՆԳԱՌԻ, ան. գ. *Ժանգառի գոյն, բաց կանաչ գոյն:*
ԺԱՆԳԱՌՈՑԱՄ, ան. *Ժանգառի գոյն ստացած:*
ԺԱՆԳԱՌՈՒ, ան. *Ժանգ վերցնող:*
+ ԺԱՆԳԱՌՔ, գ. *Երեկոյեան մութն ընկած ժամանակը, մութն ընկնելը:*
*** ԺԱՆԳԱՏԵՄԻԼ**, ան. *Ապականուած վնասակար:*
ԺԱՆԳՈՑ, ան. *Վրան ժանգ ունեցող:*
ԺԱՆԳՈՑԵԼ, նբ. *Ժանգոտ դարձնել:*
ԺԱՆԳՈՑՈՒԹԻՒՆ, գ. *Ժանգոտ լինելը:*
ԺԱՆԵԱԿ, գ. *Թեթեւ ծակոտկէն ցանցատեսակ ասեղնագործութիւն:*
ԺԱՆԵ(Ա)ԿԱԳՈՐՇ, ան. գ. *Ժանեակ գործող:*
ԺԱՆԵԿԱՋԱՐԴ, ան. *Ժանեակով զարդարուած:*
ԺԱՆԵԿԱՋԵԻ, ան. *Ժանեակի նման:*
ԺԱՆԵ(Ա)ԿԱՎԱՃԱՌ, ան. *Ժանեակի առետրական, ժանեակ վաճառող:*
ԺԱՆԵԿԱՇԱՐ, գ. *Ժանեակների շար:*
ԺԱՆԻՔ, գ. (Կազմ.) *Սրածայր ատամ:*
+ 2. ԺԱՆԻՔ, գ. *Դառնացած բարկացած դէմք:*
ԺԱՆԻՔԱԻՈՐ, ան. *Ժանիքներ ունեցող:*
ԺԱՆԻՔԵԼ, բ. *Ժանիքով հարուածել:*
+ ԺԱՆԻՔՈՑ, ան. *Ժանիք ունեցող, խոժոռ:*
*** ԺԱՆՈՒԱՐ**, գ. *Բազմոց կմ գահաւորակ:*
ԺԱՆՍ, ան. 1. *Չար, չարաբարոյ: 2. Զագրելի: 3. Գարշելի: 4. Վատ տեսակի:*
*** ԺԱՆՍԱԲԱՐ**, մկ. *Գարշելի կերպով:*
ԺԱՆՍԱԳՈՐՇ, ան. *Չարագործ:*

ԺԱՆՏԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Չարագործ-
 ութին:
ԺԱՆՏԱԴԷՄ, ան. Խոժոռ, դաժան դեմ-
 քով:
ԺԱՆՏԱԹՁԵՆԻ, գ. Վայրի թռչուն:
ԺԱՆՏԱԹՁԵՆԻ, S. Մոլաթզենի:
ԺԱՆՏԱԹՈՒԶ, գ. Ժանտաթզենու պը-
 տուղը:
ԺԱՆՏԱԺԱՆՏ, ան. Չափազանց ծանր:
 ԺԱՆՏԱԼԻՑ } ան. Ապականիչ:
 ԺԱՆՏԱԽԱՌՆ }
ԺԱՆՏԱԽՈՂՈՐԻ, գ. (Բուս.) Կաղանջա-
 նազգիների կարգին պատկանող ծառ:
ԺԱՆՏԱԽՈՂՆՈՒՐԻ, ան. Չարամիտ:
ԺԱՆՏԱԽՏ, գ. Համաճարակ հիւանդու-
 թիւն (քոլերա):
ԺԱՆՏԱԽՏԱԻՈՐ, ան. Ժանտախտ
 ունեցող:
*** ԺԱՆՏԱԽՕՍ**, ան. Յիմարական:
ԺԱՆՏԱԿԵՐՊ, ան. Վատ կերպարանք
 ունեցող:
ԺԱՆՏԱԿՈՒԶ, գ. (Կենդ.) Կուզի մի տե-
 սակը:
ԺԱՆՏԱՀԱԼԱՍՏ, S. Ախտահանական,
 Ախտահանիչ:
*** ԺԱՆՏԱՀԱՍ**, ան. Ժանտ՝ վատ համ
 ունեցող:
ԺԱՆՏԱՀԱՅԵԱՑ, ան. Չար հայեացքով:
*** ԺԱՆՏԱՀԱՐ**, ան. Ժանտից զարկուած:
ԺԱՆՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ, գ. Ժանտահար
 լինելը:
ԺԱՆՏԱՀՈՏ, ան. Գարշելի հոտ ունեցող:
ԺԱՆՏԱՀՈՏՈՒԹԻՒՆ, գ. Ժանտահոտ
 լինելը:
ԺԱՆՏԱՄԱՀ, գ. Ժանտ մահ:
*** ԺԱՆՏԱՄԻՏ**, ան. Դաժան՝ չար մտքով,
 չարամիտ:
ԺԱՆՏԱՆԱԼ, չբ. Վատանալ, փչանալ:
ԺԱՆՏԱՆԻԹ, գ. Քիմիական նիւթ:
*** ԺԱՆՏԱՊԱՇՏՈՆ**, ան. Ժանտ՝ չար
 պաշտամունք ունեցող:
ԺԱՆՏԱԶՈՒՐ, S. Արքայաջուր:

ԺԱՆՏԱՍԱԼՈՐԻ, գ. (Բուս.) Մալորենու
 մի վայրենի տեսակ:
ԺԱՆՏԱՏԵՄԻԼ, ան. Ժանտ՝ վատ՝ զար-
 շելի՝ զգուելի տեսք կմ կերպարանք
 ունեցող:
ԺԱՆՏԱՓՈՒՇ, գ. 1. Մի տեսակ խայթող
 փուշ: 2. (Բուս.) Դժնիկների կարգին
 պատկանող փշոտ ծառ:
ԺԱՆՏԱՔԻՍ, գ. (Կենդ.) Կուզի եւ ժան-
 տակուզի նման գիշակեր կաթնասուն:
ԺԱՆՏԲԵՐԱՆ, ան. Զազրախօս:
ԺԱՆՏԵՐԵՍ, ան. Նոյնն է Ժանտաղէմ:
ԺԱՆՏԸՆԿՈՅԶ, S. Արջընկոյգ:
*** ԺԱՆՏԻՄԱՑ**, S. Ժանտամիտ:
ԺԱՆՏՈՒԹԻՒՆ, գ. Ժանտ՝ չար լինելը:
ԺԱՊԱԻԷՆ, գ. Տափակ՝ նեղ՝ նուրբ գործ-
 ուածք:
ԺԱՊԱԻԷՆԱՀԻՍ, ան. Ժապաւէններով
 հիւսուած:
ԺԱՊԱԻԻՆԱԳՈՐԾ, ան. գ. Ժապաւէն
 գործող:
ԺԱՊԱԻԻՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Ժապա-
 ւէն գործելը:
ԺԱՊԱԻԻՆԱԶԵԻ, ան. Ժապաւէնի ձե-
 տով՝ նման:
ԺԱՊԱԻԻՆԵԼ, նբ. Ժապաւէն կարել
 (զգեստի շուրջը):
ԺԱՌԱԳ, գ. 1. Նա որ մէկի մահից
 յետոյ նրա ստացուածքին տէր է դառ-
 նում: 2. Յաջորդ սերունդ:
ԺԱՌԱԳԱԲԱՐ, մկ. Ժառանգութեան
 կարգով:
ԺԱՌԱԳԱԳԵՏ, գ. Ժառանգիտութեան
 մասնագէտ:
ԺԱՌԱԳԱԶՈՒՐԿ, ան. Ժառանգու-
 թիւնից զրկուած:
*** ԺԱՌԱԳԱԶՐԿԵԼ**, նբ. Ժառանգու-
 թիւնից զրկել:
*** ԺԱՌԱԳԱԶՐԿՈՒԹԻՒՆ**, գ. Ժառան-
 գութիւնից զրկելը:
ԺԱՌԱԳԱԿԱՆ, ան. Ժառանգութեան
 վերաբերեալ:

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ժառանգական լինելը:

ԺԱՌԱՆԳԱԿԻՑ, ած. Նա որ ուրիշի հետ միասին ժառանգում է մի ժառանգություն. ժառանգության ընկեր:

ԺԱՌԱՆԳԱԿՑԵԼ, նբ. Ժառանգակից դարձնել:

ԺԱՌԱՆԳԱՀԱՐԿ, գ. Ժառանգության վրայ դրուող հարկ:

***ԺԱՌԱՆԳԱՊԱՀ**, ած. Ժառանգությունը պահող:

***ԺԱՌԱՆԳԱՌՈՒ**, ած. գ. (Իրար.) Նա որ կտակով մի ժառանգություն է առնում:

ԺԱՌԱՆԳԱՏՈՒ, ած. 1. Ժառանգություն տուող:

ԺԱՌԱՆԳԱԻՈՐ, գ. Ժառանգության իրատունքի տեր: Հոգևոր վարժարանի սան:

***ԺԱՌԱՆԳԱԻՈՐԱՊԷՍ**, մկ. Իբրև ժառանգալոր:

ԺԱՌԱՆԳԵԼ, նբ. Մէկի ժառանգը լինել:

ԺԱՌԱՆԳՈՐ, գ. Ժառանգող, ժառանգ:

ԺԱՌԱՆԳՈՐԱՅԻՆ, ած. Ժառանգորդական:

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ, գ. 1. Ժառանգ լինելը: 2. (Եկեղ.) Եկեղեցական աստիճան, կղերականություն:

ԺԱՌԱՆԳՕՐԷՆ, մկ. Իբրև ժառանգ, ժառանգի իրատունքով:

ԺԵՆ, Տ. Ժախ: Տան աղբ:

ԺԵՆՈՑ, Տ. Աղբահար:

ԺԵՍ, Տ. Ժում:

1. **ԺԵՆ**, **ԺԷՆ**, **ԺԻՆ**, Տ. Ժայռ:

2. **ԺԵՆ**, գ. Թթի թռչուն:

+ 3. **ԺԵՆ**, ած. Մուրթ, խոր մուրթ:

+ 4. **ԺԵՆ**, Գոյն ցոյց տուող բառերի բարդությունների վերջում՝ նշանակում է բաց գոյնի:

ԺԵՆՈՒՏ, ած. Ժայռոտ:

ԺԷ, գ. Հայերեն այբուբենի տասներորդ տառի անունը:

+ **ԺԷԺ**, ած. 1. Թարմ: 2. Նորածին:

+ **ԺԷՆ**, գ. Ատամ:

* **ԺԷՏ**, Ջարկուած: (Նշանակում է այստահար):

ԺԺԱՆ, գ. Թափթփում՝ ցիրուցան ընկած այրելի նիւթեր:

ԺԺՄՈՒՆՔ, գ. Ամէն տեսակ ճճի, միջատ:

+ **ԺԺՆԵԼ**, նբ. Խառնել:

+ **ԺԺՆՈՒԿ**, ած. Խառնում:

ԺԻԺ, գ. (Բուս.) Անձանօթ մի բոյս. մկնստիս:

ԺԻԼԱԻՊ, գ. (Բուս.) Անորոշ մի բոյս:

ԺԻՇՏ, ած. 1. Դժուարաշարժ: 2. Հակառակող:

ԺԻՊԱԿ, Տ. Մնդիկ: + 2. ած. Դժգոյն:

ԺԻՏ, ած. 1. Հետաքրքիր, հետաւում: 2. Յանդուգն, լիրբ:

ԺԻՐ, 1. Աշխոյժ: 2. Աջքաբաց, եռանդուն:

ԺԻՐԱԺԻՐ, ած. Շատ ժիր. ժիրժիր:

ԺԻՐԱԿ, գ. Չամանի նման մի բոյս:

ԺԼԱՏ, ած. Ագահ, զօշաբաղ:

ԺԼԱՏԱԲԱՐ, մկ. Ժլատի՝ ագահի նման:

ԺԼԱՏԱՆԱԼ, չբ. Ժլատ դառնալ, ագահել:

ԺԼԱՏՈՒԹԻՒՆ, գ. Ժլատ լինելը, ժլատի յատկությունը:

ԺԽՈՐ, գ. Մաստիկ՝ խառնաշփոթ աղմուկ:

ԺԽՈՐԱՅԻՆ, ած. Ժխորի յատկություն ունեցող:

ԺԽՈՐԵԼ, նբ. Աղմկել:

ԺԽՏԵԼ, նբ. Ուրանալ, յանձն չառնել:

ԺԽՏՈՂԱԲԱՐ, մկ. Ժխտելով, բացասելով: Մերժողաբար:

ԺԽՏՈՂԱԿԱՆ, ած. Ժխտող:

ԺԽՏՈՂՈՒԹԻՒՆ } գ. Ապերախտություն. անզգամություն: Մերժելը:

ԺԽՏՈՒՄ, գ. Ժխտելը: Մերժում:

* **ԺՂԱՆՔ**, գ. Մանր-մունր գիտելիք:

2. Ջրասնք:

+ **ԺՂԼԵԼ**, չբ. *Ջրոյց անելով ժամանակ անցկացնել:*
ԺՂՈՒԼ, գ. *Ջբուսանք, զբաղմունք:*
 + **ԺՄԱԺԱՆՔ**, գ. *Երեկոյեան ժամի ժամանակ:*
 * **ԺՄԵՐՏ**, ած. *Լիրք, յանդուզն:*
 * **ԺՄԵՐՏԵԼ**, չբ. *Յանդգնել, ժպրհել:*
 + **ԺՇԽԵԼ**, նբ. *Տանել-բերել:*
ԺՈՒՅ, գ. *Մորենու պտուղը:*
ԺՈՒՅԵՆԻ, Տ. *Մորենի ազնիւ, Արքայամորենի:*
ԺՈՒՆՈՒՐ, գ. *Խաղողի մի տեսակ:*
 * **ԺՈՂԻՅ**, ած. *Ապականուած, նեխած:*
ԺՈՂԻՅԵԼ, չբ. *Քայքայուել, լիկել:*
ԺՈՂՈՎ, գ. 1. *Մարդկանց գումարուելը մի տեղում որեւէ նպատակով:* 2. *Հաւաքուած բազմութեան նիստը:* 3. *(Եկեղ.) Կրօնակիցների միաբանութիւն, եղբայրութիւն:*
ԺՈՂՈՎԱԾՈՅ } ած. 1. *Այստեղից-այնտեղից ժողովուած, հաւաքածոյ:* 2. գ. *Գիրք, որի մէջ ընտրութեամբ զետեղուած են զանազան հեղինակներից քաղուածքներ:*
ԺՈՂՈՎԱԿԱՆ, ած. 1. *Ժողովով կատարուած:* 2. *Ժողովի մասնակից:*
ԺՈՂՈՎԱԿԻՑ, ած. գ. *Ուրիշի հետ միասին մի ժողովի մասնակցող:*
 * **ԺՈՂՈՎԱԿՅՈՒԹԻՒՆ**, գ. *Ժողովակից լինելը:*
ԺՈՂՈՎԱՊԵՏ, գ. *Գլխատր ժողովող:*
 * **ԺՈՂՈՎԱՍԷՐ**, ած. *Ժողովներ սիրող:*
ԺՈՂՈՎԱՍԻՐԱՆ, գ. *Սրահ, դահլիճ, որտեղ գումարուում է ժողովը:*
ԺՈՂՈՎԱՏԵՂԻ, գ. *Ժողովի տեղը, ժողովը գումարուելու տեղը:*
ԺՈՂՈՎԱՐԱՆ, գ. *Այն տեղը, ուր ժողովուում են:*
ԺՈՂՈՎԱՐԱՐ, ած. գ. *Ժողով անող՝ գումարող:*
ԺՈՂՈՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. *Ժողովա-*

րար լինելը:
ԺՈՂՈՎԱՑԱԻ, գ. *Ժողովներ գումարելու՝ ժողովներին մասնակցելու չափազանց սեր մոլութիւն:*
ԺՈՂՈՎԵԼ, նբ. 1. *Հաւաքել՝ մի տեղ բերել ցրուած միատեսակ բաները:* 2. *Գանձել:* 3. *Հանգանակել:* 4. *Հաւաքել:*
ԺՈՂՈՎՈՂ, ներկ. դերբ. *Ժողովելի բոլոր նշ.:*
ԺՈՂՈՎՈՒՄ, գ. *Ժողովելը:*
ԺՈՂՈՎՈՒՐ, գ. 1. *Մի տեղ ժողովուած մարդկանց բազմութիւն:* 2. *Մի ազգութեան պատկանող անհատների ամբողջութիւնը:* 3. *Մի տեղում ապրող ազգաբնակչութիւնը:*
 * **ԺՈՂՈՎՐԱԲՆԱԿ**, ած. *Որտեղ ժողովուող է բնակուում:*
ԺՈՂՈՎՐԱԿԵՏ, ած. *Ժողովուողը գիտցող ճանաչող:*
ԺՈՂՈՎՐԱԿԵՏՈՒԹԻՒՆ, գ. *Ժողովըրդագետ լինելը, ժողովրդի կեանքին ու հոգեբանութեանը լաւ ծանօթ լինելը:*
ԺՈՂՈՎՐԱԳՐԱԿԱՆ, ած. *Ժողովըրդագրութեան վերաբերեալ:*
ԺՈՂՈՎՐԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. *Վիճակագրութիւն տուեալ երկրի կմ տեղի ժողովրդի մասին:*
ԺՈՂՈՎՐԱԽՆԱՄ, ած. *Ժողովրդին խնամող:*
ԺՈՂՈՎՐԱԿԱՆ, ած. 1. *Ժողովրդի վերաբերեալ:* 2. *Ժողովրդի կողմից գնահատուած:* 3. *Ժողովուողի իրատունք պաշտպանող:*
ԺՈՂՈՎՐԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. *Ժողովըրդական դատնալը:*
ԺՈՂՈՎՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. *Ժողովըրդական լինելը:*
ԺՈՂՈՎՐԱԿԵՐ, ած. *Ժողովրդին ուստող:*
ԺՈՂՈՎՐԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. *Ժողովըրդային լինելը:*
ԺՈՂՈՎՐԱՊԵՏ, գ. *Ժողովրդի պետ:*

2. (Կրօն.) Հրեաների ժողովրդանոցի սինագոգայի պետը:
ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ, S. Ծուխ (ծխական համայնք):
ԺՈՂՈՎՐԴԱՍԷՐ, ած. Ժողովրդին սիրող:
ԺՈՂՈՎՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Ժողովրդը դասեր լինելը:
ԺՈՂՈՎՐԴԱՍՊԱՆ, ած. Ժողովրդին սպանող:
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ, ած. Կատավարության ձև ուր ժողովուրդը կը կատավարէ:
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՎԱՆ, S. Ժողովրդավար կատավարութիւն:
ԺՈՂՈՍՏԳԱՍՍԱՒՈՐ, գ. Ժողովրդական պատգամատր:
ԺՈՅԺ, գ. Համբերելու՝ դիմանալու՝ տոկալու ոյժ:
ԺՈՐԻ, գ. Ծիրանագոյն նարինջի տեսքով քաղցր պտուղ (կակի):
ԺՈՒԺԱԼ,
ԺՈՒԺԵԼ, չբ. Ոյժ ունենալ: Դիմանալու, տոկալ:
*** ԺՈՒԺԱԼԻ**, ած. Ինչ բանի կարելի է դիմանալ:
ԺՈՒԺԿԱԼ, ած. Նա որ ոյժ ունի դիմադրելու մի բանի: Ինքնագապում:
ԺՈՒԺԿԱԼԱՔԱՐ, մկ. Ժուժկալութեամբ:
*** ԺՈՒԺԿԱԼԱԿԻՑ**, ած. Ժուժկալութեան ընկեր:
ԺՈՒԺԿԱԼԵԼ, չբ. 1. Համբերել: 2. Ինքն իրեն զսպել:
*** ԺՈՒԺԿԱԼՈՑ**, ած. Ժուժկալող:
ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. Ոյժ ունենալը՝ մի բանի համբերելու:
ԺՈՒԺԿԱԼՈՒՄ, գ. Ժուժկալելը. ժուժկալութիւն:
+ ԺՈՒԿ, գ. Կարճ ժամանակ:
ԺՈՒՄ, գ. Անգամ:
+ 1. ԺՈՒՌ, ած. Կարգին չհասած, դեռ խակ: մկ. Դեռ չհասած:

+ 2. ԺՈՒՌ, մկ. Շուրջ, այս եւ այն կողմը:
+ 3. ԺՈՒՌ, ած. Շփոթուած, շուարած, շշկլուած: Ինձի ժուր արաւ: Խելքը ժուր է գալիս:
ԺՈՒՌԵԿԱՆ, ած. գ. Ժուր եկող:
+ ԺՈՒՌՈՒՄՈՒՆ, ած. Տակնուկայ:
+ ԺՈՒՐ, գ. Մենդարար հիւթ կերակրի մէջ:
ԺՊԻՏ, գ. Անձայն ծիծաղ:
ԺՊԻՐՀ, ած. Լիրք, անամօթ:
ԺՊՏԱԳԻՆ, ած. մկ. Ժպիտով, ժպտալով:
ԺՊՏԱԼ, չբ. 1. Անձայն ծիծաղել: 2. Նըման. Ախորժելի՝ դուրեկան երեսալ:
ԺՊՏԱԼԻՑ, ած. Ժպիտով լի: Ժպտուներես:
*** ԺՊՏԱՆՈՅՇ**, ած. մկ. Անոյժ՝ քաղցր ժպիտով:
ԺՊՏԱՇՈՒՐԹՆ, ած. Ժպտացող շքր-թունքներով:
ԺՊՏՈՒՆ, ած. Ժպտացող, զուարթերես:
ԺՊՐՀԱՔԱՐ, մկ. Լրբարբար:
ԺՊՐՀԵԼ, չբ. Յանդգնել, համարձակել:
*** ԺՊՐՀԵՐԵՍ**, ած. Լիրք երեսով:
ԺՊՐՀՈՒԹԻՒՆ, գ. Լրբութիւն, անզգամութիւն:
+ 1. ԺՌԱԼ, չբ. Սարեակի եւ նրա ձագերի ձայն հանելը:
+ ԺՌԱԶՈՒՐ, գ. Ժուռի՝ ազոխի ջուր:
+ ԺՌԻԿ, գ. Թելի կրճ:
+ ԺՌԻՆՔ, գ. Քթից կախուած խլիւք:
ԺՌՈՒԹԻՒՆ, գ. Ժուռ խակ լինելը:
+ ԺՎԸՈ-ԺՎԸՈ, մկ. Արագ-արագ:
ԺՏԱՆՔ, գ. Թախանձանք, աղաչանք-պաղատանք:
ԺՐԱԳԼՈՒԻՆ, ած. Ժիր, աշխատասէր, գործունէայ:
ԺՐԱԳՈՅՆ, բաղդ. աստ. Աւելի ժիր:
*** ԺՐԱՀԱՐ**, գ. Մի անձանօթ առասպելական ջրային թռչուն:
ԺՐԱՋԱՅՆ, մկ. Ժիր ձայնով:
ԺՐԱՆԱԼ, չբ. Ժիր՝ աշխոյժ՝ արի լինել:
ԺՐԱՊԷՍ, մկ. Ժիր կերպով:

ԺՐԱԶԱՆ, ան. Ժիր:
ԺՐԱԶԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ժրաջան լինելը,
 ջանասիրություն:
 + **1. ԺՐԵԼ**, չբ. Ուժի զայլ:

+ **2. ԺՐԵԼ**, նբ. Պինդ փաթաթել, կապել:
 * **ԺՐՄԱԿ**, ան. Ճահճային, խոնավ:
ԺՐՈՒԹԻՒՆ, գ. Ժիր լինելը:
ԺՕՈՒՍ, ան. Ատամները թափած:

Ի, ի

Ի, ի, Ինի, գ. Հայերեն այբուբենի տասներեմեկերորդ տառը եւ հինգերորդ ձայնատրր: Քսան, քսաներորդ: Թուարկություն 20-ի համապատասխան:
Ի ԲԱՑ, մկ. Բաց դրությունը:
ԻԲԸ, Նախդր. Ինչպէս, որպէս, նման:
ԻԲՐԵԻ, Նախդր. Տ. Իբր:
ԻԳԱԲԱՐ, մկ. Էզի նման. Կանանցաբար:
ԻԳԱԲԱՐՈՑ, ան. Էզի բարք ու վարք՝ զարմանք ունեցող:
ԻԳԱԲՈՅԸ, ան. (դիպվ.): Բզականություն բուրդը:
ԻԳԱԿԱՆ, ան. Էզին յատուկ: 2.(Քրկն.) Բառ, որ նշանակում է իզական սեռին պատկանող անհատ:
ԻԳԱԿԱՆԱՅՈՒՑԻՉ, ան. (Քրկն.) Տառ կմ վերջաւորություն, որ բառի վերջից դրուելով նրան դարձնում է իզական սեռի: Հայերենի մէջ՝ ուիի:
ԻԳԱԿԵՐՊ, ան. Էզի՝ կանացի կերպարանքով:
ԻԳԱՀԱՃՈՑ, Տ. Կնահաճոյ:
ԻԳԱՍՈՒԻ, ան. Կնամոլ:
ԻԳԱՍՈՒԹԻՒՆ, գ. Բզամոլ լինելը:
 * **ԻԳԱՅԻՆ**, ան. Էզին յատուկ:
ԻԳԱՆԱԼ, չբ. Էզ դառնալ, մեղկանալ:
ԻԳԱՉԱՐՉԱՐ, ան. Կիներու չարչարող:
 * **ԻԳԱՊԷՍ**, մկ. Էզի պէս:
ԻԳԱՍԷՐ, ան. Կին սիրող, ցանկասէր:
ԻԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Բզասէր լինելը:

ԻԳԱՏԵԼՉ, Տ. Բզամոլ:
ԻԳԱՅՈՒԹԻՒՆ } գ. Բզանալը:
ԻԳԱՅՈՒՄՆ }
ԻԳՈՒԹԻՒՆ, գ. Էզի յատկություն, կանացիություն:
ԻԳՎԱՆ, գ. (Կենդ.) Երկակենցաղ:
Ի ԴԵՐԵԻ, Ի ԴԷՊ, Ի ԴԷՊՍ, Ի ԴՈՒՐՍ, Տ. Դերեւ, Դէպ, Դուրս:
ԻԶ(Ա)ԿՈՐՈՒՍՏ, ան. Հետքը կորած կմ կորցնող:
ԻԺ, գ. (Կենդ.) 1. Թունատր օձի մի տեսակ: 2. Փոխ. ան. Չարասիրտ:
ԻԺԱԲԱՐ, մկ. Իժի նման, չարութեամբ:
ԻԺԱԲԱՐՈՑ, ան. Չարաբարոյ:
ԻԺԱԹՈՅՆ, ան. Իժի նման թոյն ունեցող:
ԻԺԱԽՈՑ, գ. (Բուս.) Խոտատերեւների կարգին պատկանող բոյս:
ԻԺԱԿԱՆ, ան. Իժին յատուկ:
ԻԺԱԿՈՐԻՒՆ, գ. Իժի ձագ:
ԻԺԱՀԱՐ, ան. Իժից զարնուած:
 * **ԻԺԱՆԱԼ**, չբ. Իժ դառնալ:
ԻԼԱՉԵԻ } ան. Իլիկի ձեւ ունեցող:
ԻԼԱՆՄԱՆ }
ԻԼԵՆԻ, գ. (Բուս.) Իլենիների կարգին պատկանող թուփ:
ԻԼԻԿ, գ. Թել մանելու ձեռքի գործիք:
 + **ԻՇԱՊՏՈՒԿ**, գ. Խաղողի մի տեսակ:
ԻՊՉ, գ. Մրտի փափագ, բաղձանք:
ԻՄԱՍ, գ. (Արաբ.) Մահմետական կրօնի հոգեւորական:
ԻՄԱՆԱԼ, նբ. 1. Մտքով ըմբռնել: 2. Գըլ-

խի ընկնել: 3. Կարծել: 8. Գիտենալ, տեղեակ լինել:
ԻՄԱՆԱԼԱՊԷՍ, մկ. Իմանալի կերպով:
ԻՄԱՆԱԼԻ, ած. Ինչ որ մտքով կարելի է իմանալ:
ԻՄԱՆԱԼԻՈՒԹԻՒՆ, գ. Իմանալի հասկանալի լինելը:
ԻՄԱՍՏ, գ. 1. Միտք, բովանդակություն: 2. Նշանակություն:
ԻՄԱՍՏԱԲԱՆ, ած. Իմաստությամբ կմ իմաստություն խօսող:
 * **ԻՄԱՍՏԱԲԱՇԽ**, ած. Իմաստություն բաշխող:
 * **ԻՄԱՍՏԱԲԵՐ**, ած. Իմաստություն բերող:
ԻՄԱՍՏԱԼԻ, ած. Իմաստությամբ լի:
ԻՄԱՍՏԱԽՆԴԻՐ, ած. Իմաստություն փնտռող:
ԻՄԱՍՏԱԽՈՂ, S. Իմաստախորհ:
ԻՄԱՍՏԱԽՈՂՈՒԹԻՒՆ, գ. Իմաստախոհ լինելը:
 ԻՄԱՍՏԱԽՈՐՀ } ած. Իմաստուն
 ԻՄԱՍՏԱԽՈՐՀՈՒՐԴ }
 մտածողությամբ:
ԻՄԱՍՏԱԿ, գ. Կեղծ իմաստուն՝ սովիեստոս: Փիլիսոփայ-հոետոր:
 * **ԻՄԱՍՏԱԿԱԲԱՆԵԼ**, S. Իմաստակել:
ԻՄԱՍՏԱԿԱՆ, ած. Իմաստ պարունակող:
ԻՄԱՍՏԱԿԻՐ, ած. Իմաստություն պարունակող:
ԻՄԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ, գ. Իմաստակ լինելը:
ԻՄԱՍՏԱԿՕՐԷՆ, մկ. Իմաստակի պէս:
 * **ԻՄԱՍՏԱՀԱՆՃԱՐ**, ած. Իմաստուն եւ հանճարեղ, իմաստությամբ լի:
 * **ԻՄԱՍՏԱՊԱՏՈՒՄ**, ած. Իմաստությամբ պատմուած:
 * **ԻՄԱՍՏԱՊԱՐԳԵՒ**, ած. Իմաստություն պարզեւող:
ԻՄԱՍՏԱՊԷՍ, մկ. Իմաստուն կերպով:

ԻՄԱՍՏԱՍԷՐ, ած. գ. Իմաստություն սիրող:
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԲԱՐ, մկ. Իմաստասերի պէս:
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ, ած. Իմաստասիրութեան վերաբերեալ:
ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆՕՐԷՆ, ած. Իմաստասիրականապէս:
 * **ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԻՑ**, ած. Իմաստասիրութեան մասնակից:
ԻՄԱՍՏԱՍԻՐԵԼ, նբ. Իբրեւ իմաստասեր քննել:
ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Իմաստասեր լինելը: 2. Գիտություններին ուսումնասիրություն:
 * **ԻՄԱՍՏԱՍԻՐՕՐԷՆ**, S. Իմաստասիրաբար:
 * **ԻՄԱՍՏԱՏԵԱՑ**, ած. Իմաստությունը ստող:
 ԻՄԱՍՏԱՏՈՒՐ } ած. Իմաստություն
 ԻՄԱՍՏԱՐԱՐ }
 ստող:
ԻՄԱՍՏԱԲԱՐ, մկ. Իմաստունի պէս:
ԻՄԱՍՏԱԳԻՑ, ած. Հնարագէտ:
 * **ԻՄԱՍՏԱԳՈՐԾ**, ած. Իմաստնացնող:
 * **ԻՄԱՍՏԱԶՕՐ**, ած. Իմաստությամբ զօրացած:
ԻՄԱՍՏԱՆԱԼ, չբ. Իմաստուն դառնալ:
ԻՄԱՍՏԱՑՈՒՑԻՉ, ած. Իմաստնացնող:
ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ, գ. Իմաստուն լինելը:
ԻՄԱՍՏՈՒՆ, ած. Ողջամիտ, զիտուն, մտաւոր, դաստղ, հասկացող:
ԻՄԱՑ, գ. 1. Իմաստ, խորհուրդ: 2. Գործ է ածուում բաղադրեալ բայերի մէջ:
 * **ԻՄԱՑԱԳՈՅՆ**, ած. Մտքով իմանալի:
ԻՄԱՑԱԿԱՆ, ած. Մտքով իմանալի:
ԻՄԱՑԱԿԱՆԱՊԷՍ, մկ. Իմացական իմանալի կերպով:
ԻՄԱՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Իմացական՝

իմանալի լինելը:
ԻՄԱՑԱՊԱՇՏ, ած. Իմացութիւնը պաշտոնը:
ԻՄԱՑԱՊԷՍ, ած. Իմաստի վերաբերուող:
ԻՄԱՑՈՂ, ներկ. դերբ. Իմանալի, Նա որ իմանում է:
ԻՄԱՑՈՂԱԲԱՐ, մկ. Իմանալի կերպով:
ԻՄԱՑՈՒԹԻՒՆ, գ. Իմացում: Ըմբռնում:
ԻՍՈՎՍԱՆՆ, մկ. Իմ կողմից, իմ կարողացածի չափ:
+ ԻՍՓՐԱՅ, գ. Անորոշ տեսակի վայրի խոտ:
ԻՆԳՈՒՇՆԵՐ, յոգն. գ. Կովկասեան ժողովուրդներից մէկը:
ԻՆԸ, S. Ինն:
ԻՆՁ, գ. (Կենդ.) Կատուների ցեղին պատկանող գիշատիչ կենդանի:
ԻՆՆ, թւ. ած. Անգոյգ թիւ մէկով ութից աւելի կմ մէկով տասից պակաս:
ԻՆՆԱԳՆՈՒԽ, ած. Ինը զլուխ ունեցող:
ԻՆՆԱՄԵԱԿ, գ. Ինը տարին վերցրած իբրեւ մի միութիւն:
ԻՆՆԱՄԵԱՅ,
ԻՆՆԱՄԵԱՆ, ած. մկ. Ինը տարի տեւող:
ԻՆՆԱՄԵԱԿ, գ. Ինը ամիսը վերցրած իբրեւ մի միութիւն:
ԻՆՆԱՄԵԱՆ, ած. մկ. Ինը ամիս տեւող:
ԻՆՆԱԿԻՒՆ, գ. (Երկրաչ.) Երկրաչափական ձեւ:
ԻՆՆԱԿԻՒՆԻ, ած. Ինը անկիւն ունեցող:
ԻՆՆԳՕՏԵԱՆ, ած. Ինը զօտի ունեցող:
ԻՆՆԵՐՈՂ, ած. 1. Ութերորդին անմիջապէս յաջորդող: 2. (Թուաբ.) Ինը հաւասար մասից մի մասը:
ԻՆՆԵՐՈՂԵՑԻ, ած. գ. Իններորդում եղող. իններորդ դասարանի աշակերտ:
ԻՆՆԱՐԻՒՄԵԱԿ, գ. Ինն հարիւր տարուայ շրջան:

ԻՆՆՊԱՏԿԵԼ, նբ. Ինն անգամ աւելացնել:
ԻՆՆՍՈՒՆ, թւ. ած. Ինը տասնեակ պարունակող:
ԻՆՆՍՈՒՆԱՄԵԱԿ, գ. Իննսուն տարուայ ժամանակաշրջան:
ԻՆՆՍՈՒՆԱՄԵԱՅ, ած. մկ. Իննսուն տարեկան:
ԻՆՆՍՈՒՆԵՐՈՂ, դաս. թւ.:
ԻՆՆՕՐԵԱՅ, ած. մկ. Ինը օր տեւող:
1. ԻՆՉ, 1. Գոյականաբար. Որ բանը:
 2. միջ. որով արտայայտուում է զարմանք, հիացմունք: Ի նչ. մի շաբաթում այնքան ալիւրը վերջացրիք:
2. ԻՆՉ, գ. Մի բան, մի եղած բան:
ԻՆՉՉԱՓ, S. Որչափ:
ԻՆՉՊԷՍ, նախդր. Նման:
ԻՆՉՊԻՄԻ, ած. Ինչ տեսակ: միջ. Չարմանքի բացազանչութիւն:
ԻՆՉՊԻՍՈՒԹԻՒՆ, S. Որպիսութիւն:
ԻՆՉՔ, գ. Գոյք, ստացուածք:
ԻՆՔԸ } Անձն. դեր. երրորդ դեմքի:
ԻՆՔՆ }
ԻՆՔՆԱՆԴՐԱՂԱՐՉ, գ. Ինքն իրեն անդրադառնալը:
*** ԻՆՔՆԱԲԱՆԱԿԱՆ**, ած. Սեփական խօսքերով:
ԻՆՔՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ, S. Ինքնախօսութիւն:
ԻՆՔՆԱԲԱՆՏԵԼ, նբ. Ինքն իրեն բանտային վիճակի մէջ դնել, արգելափակել, կաշկանդել:
*** ԻՆՔՆԱԲԱՐՁՈՂ**, ած. Ինքն իրեն բարձող վերցնող, բեռցնող:
ԻՆՔՆԱԲԱԻ, ած. Ինքն իրեն բաւականացնող:
ԻՆՔՆԱԲԱԻԱԿԱՆ, ած. Ինքնաբաւ:
ԻՆՔՆԱԲԱԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքնաբաւական լինելը:
ԻՆՔՆԱԲԵՐ, ած. Ինքն իրեն առաջ եկող:
ԻՆՔՆԱԲԵՐԱԲԱՐ, մկ. Ինքն իրենից:

ԻՆՔՆԱԲԵՐԱԿԱՆ, ան. Ինչ որ լինում է ինքնաբերաբար:
ԻՆՔՆԱԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքնաբերաբար լինելը:
ԻՆՔՆԱԲՈՑՍ, ան. Ինքն իրենից բուսած:
ԻՆՔՆԱԲՈՐԲՈՔ, ան. Ինքն իրենից բորբոքող:
ԻՆՔՆԱԲՈՒ(Ղ)Խ, ան. Ինքն իրենից բխող:
*** ԻՆՔՆԱԳԷՏ**, ան. մկ. Ինքն իր կողմից գիտնալով, ինքն իր կողմից գիտցող:
ԻՆՔՆԱԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ, գ. Ինքն իրեն գերազանցելը:
*** ԻՆՔՆԱԳԻՏԱԿԻՑ**, ան. Գիտակից:
ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն գիտակցելը:
ԻՆՔՆԱԳԻՐ, ան. Իր գրած, իր ձեռքով գրած: Ինքնաձեռագիր՝ ստորագրություն:
ԻՆՔՆԱԳԻՏ, ան. Իր գտած, իր հնարած:
ԻՆՔՆԱԳԼՈՒՄ, ան. Ինքն իր գլխի տեր:
ԻՆՔՆԱԳՆԱՀՍԱԿԱՆ, գ. Մարդու կողմից սեփական անձին տրուող գնահատական:
ԻՆՔՆԱԳՆԱՑ, ան. Ինքն իրեն՝ առանց դրսի ոյժի գնացող, ինքնաշարժ:
*** ԻՆՔՆԱԳՈՒ**, չբ. Ինքն իրեն գոյություն ունենալ:
ԻՆՔՆԱԳՈՂ, ան. Ինքն իրենից գոհ:
ԻՆՔՆԱԳՈՂՈՒԹԻՒՆ, գ. Ինքնագոհ լինելը:
ԻՆՔՆԱԳՈՑ, ան. Ինքն իրենից գոյություն ունեցող:
ԻՆՔՆԱԳՈՑԱԿ, ան. Ինքնագոյ:
ԻՆՔՆԱԳՈՑՈՒԹԻՒՆ, գ. Ինքնագոյ լինելը:
ԻՆՔՆԱԳՈՎ, ան. Ինքն իրեն գովող:
ԻՆՔՆԱԳՈՎԱԿԱՆ, ան. Ինքնագովություն պարունակող:
ԻՆՔՆԱԳՈՎԵՍ, գ. Ինքն իրեն գովելը:
ԻՆՔՆԱԳՈՎՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն

գովելը:
ԻՆՔՆԱԳՈՐԾ, ան. Ինքնին գործող, ինքնիշխան:
ԻՆՔՆԱԳՈՐԾԵԼ, նբ. Ինքնին գործել:
ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Ինքնագործելը:
ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ, գ. Մեփական կմ անձնական գործունեություն, անձնական ջանք:
ԻՆՔՆԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իր ձեռքով գրելը:
ԻՆՔՆԱԴԱՍ, ան. Ինքն իրեն դատող:
*** ԻՆՔՆԱԴԱՍԱՊԱՐՏԵԱԼ**, ան. Ինքն իրենից դատուած ու դատապարտուած:
ԻՆՔՆԱԴԱՍՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն դատել-քննադատելը:
ԻՆՔՆԱԴԷՏ, ան. Ինքնին՝ անձամբ դիտող:
ԻՆՔՆԱԴԻՐ, ան. Իր դրած:
ԻՆՔՆԱԴՐՄԵՒՈՐԵԼ, բ. Ինքն իրեն դրսեւորել:
ԻՆՔՆԵՆ, գ. Մետաղէ՝ մեծ մասամբ պղնձէ անօթ ջուր եռացնելու:
ԻՆՔՆԱԶԱՍԱԳՐՈՒԵԼ, գ. Ինքն իրեն ազատագրել:
ԻՆՔՆԱԶԱՐԳԱՑՈՒՄ, գ. Ինքն իր աշխատանքով (առանց դպրոց գնալու) զարգանալը:
*** ԻՆՔՆԱԶԱՐԴ**, ան. Ի բնէ զարդարուն:
ԻՆՔՆԱԶԷՆ, ան. Ի բնէ զինուած:
ԻՆՔՆԱԶՂՁՈՒՄ, գ. Ինքնազղջալը:
ԻՆՔՆԱԶՆԱԿԱՆ, ան. Ինքնազննություն վերաբերեալ:
ԻՆՔՆԱԶՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն զննելը:
ԻՆՔՆԱԶՈՒՄ, ան. Ինքզինք զսպող:
ԻՆՔՆԱԶՐԿՈՒՄ, գ. Ինքն իրեն զրկելը:
ԻՆՔՆԱԶՐՊԱՐՏՈՒՄ, գ. Ինքն իրեն զրպարտելը:
ԻՆՔՆԱԶՕՐ, ան. Ինքն իր մէջ զօրություն կրող:
ԻՆՔՆԱԶՕՐՈՒԹԻՒՆ, գ. Ինքնագօր

<p>լինելը: ԻՆՔՆԱԹԻՈՍԱՐԱՆ, գ. Ինքնաթիռի սրահ: * ԻՆՔՆԱԹՈՅՆ, ած. Իր մեջ թոյն կրող, ի բնէ թունաւոր: ԻՆՔՆԱԹՈՒՂԹ, գ. Անձնաթուղթ: ԻՆՔՆԱԼՈՅՍ, ած. Ինքն իրեն լուսաւորող: ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՈՒԵԼ, բ. Ինքնուրոյն, առանց արտաքին միջամտութեան լուծարուել: ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՈՒՄ, գ. Ինքն իրեն լուծարուելը: ԻՆՔՆԱՆԱԲ, ած. Ինքն իրեն խաբող: ԻՆՔՆԱՆԱԲԵԼ, բ. Ինքն իրեն խաբել: ԻՆՔՆԱՆԱԲԷԱԿԱՆ, ած. Ինքնախարեւոթիւն պարունակող: ԻՆՔՆԱՆԱԲԷՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն խաբելը: ԻՆՔՆԱՆՁՈՒՄ, գ. Ինքն իրեն խզող: ԻՆՔՆԱՆՈՂ, ած. Իր մտածած, մտքի հնարած: ԻՆՔՆԱՆՈՅՁ, ած. Ինքնապրպտում: ԻՆՔՆԱՆՈՍՏՈՎԱՆԱՆՔԱՅԻՆ, ած. Ինքնախոստովանութեան, ինքնախոստովանքի բնոյթ ունեցող: ԻՆՔՆԱՆՈՍՏՈՒՄ, Ինքն իրեն տրուած խոստում: * ԻՆՔՆԱՆՈՐԺ, ած. Իր ախորժելով, իր կամքով: ԻՆՔՆԱՆՈՐՀՈՒՐՊ, ած. Ինքն իր խորհրդով՝ իր խելքով: ԻՆՔՆԱՆՈՒՓ, ած. Ինքն իրեն խփուող: ԻՆՔՆԱՆՍՕՍ, ած. Իր խօսած, ինչ որ ինքն է խօսել: ԻՆՔՆԱՍՏԱՆՕԹՈՒԹԻՒՆ, գ. Ինքնաճանաչութիւն: ԻՆՔՆԱԿԱԶՍԱԿԵՐՊՈՒՄՈՒԹԻՒՆ, գ. Ինքնուրոյն կազմակերպուելը: * ԻՆՔՆԱԿԱԶՍՈՒԹԻՒՆ, գ. (Բուժ.) Վիրարուժական մի գործողութիւն: ԻՆՔՆԱԿԱՆ, ած. Ինքն իր տէր, ինքնիշ-</p>	<p>խան, միահեծան թագաւոր: ԻՆՔՆԱԿԱԼԱԿԱՆ, ած. Ինքնակալին յատուկ: ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. Ինքնակալ լինելը: ԻՆՔՆԱԿԱՍ, ած. մկ. Իր կամքով, իր յօժարութեամբ: ԻՆՔՆԱԿԱՍՈՒԹԻՒՆ, գ. Ինքնակամ՝ յօժարակամ լինելը: ԻՆՔՆԱԿԱՍՕՐԷՆ, մկ. Ինքնակամ կերպով: ԻՆՔՆԱԿԱՅ, ած. Ինքն իրենից եղող՝ գոյութիւն ունեցող: ԻՆՔՆԱԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. Ինքնակայ լինելը: ԻՆՔՆԱԿԱՆՈՆ, ած. Ինքն իր կանոնն ունեցող: * ԻՆՔՆԱԿԱՆՈՅՑ, ած. Իր կառուցած, իր շինած: ԻՆՔՆԱԿԱՍԱՐ, ած. Ինքն իր մեջ կատարելայ: ԻՆՔՆԱԿԱՍԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԵԼ, բ. Ինքն իրեն կատարելագործուել: * ԻՆՔՆԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆ, գ. Ինքնակատար լինելը: ԻՆՔՆԱԿԵԼՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Որեւէ անձի կենսագրութիւն՝ նոյն այդ անձից գրուած: ԻՆՔՆԱԿԵՐՊ, ած. Իր բուն կերպարանքով: ԻՆՔՆԱԿԷՁ, ած. Ինքն իրեն այրող: ԻՆՔՆԱԿԻՐԹ, ած. Ինքն իրեն կրթութիւն ստացած: * ԻՆՔՆԱԿՇԱՍԲԵԼԻ, ած. Ինքն իրեն կշտամբող: ԻՆՔՆԱԿՈՉ, ած. Ինքն իրեն կանչող՝ հրաւիրող: ԻՆՔՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ, գ. Ինքնակոչ լինելը: ԻՆՔՆԱԿՈՐԾԱՆ, ած. Ինքն իրեն կործանող: ԻՆՔՆԱԿՊՉՈՒՆ, ած. Ինքն իրեն ամրա-</p>
---	---

ցող, կպչող:
ԻՆՔՆԱԿՏՏԱՆՔ, գ. Ինքնախոշտանգում, ինքնատանջանք, ինքը իրեն տանջելը՝ սաստիկ ցաւ պատճառելը:
*** ԻՆՔՆԱԿՐՈՒԹԻՒՆ**, գ. Մի բան իր վրայ յօժարութեամբ կրելը:
ԻՆՔՆԱԿՐԹԱԿԱՆ, ած. Ինքնակրթութեան յատուկ:
ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԻՒՆ, գ. Կրթութիւն, որ մարդ ձեռք է բերում իր անձնական աշխատանքով:
*** ԻՆՔՆԱԿՐԹՈՒԵԼ**, չբ. Ինքն իրեն կրթել:
ԻՆՔՆԱՀԱԼԱՍԾ, ած. Ինքն իրեն հալածող:
ԻՆՔՆԱՀԱԼԱՍԾԱՆՍ, գ. Ինքզինք հալածելու հիւանդութիւն:
*** ԻՆՔՆԱՀԱԿԱՌԱԿ**, ած. Ինքն իրեն հակառակող:
ԻՆՔՆԱՀԱՃ, ած. Ինքն իրեն հաճած՝ հաւանած:
ԻՆՔՆԱՀԱԿԱՍՈՒԹԻՒՆ, գ. Ինքզինք հակառող:
ԻՆՔՆԱՀԱՃՈՅ, ած. Ինքնահաճ, ինքնահաւան:
ԻՆՔՆԱՀԱՃՈՒԹԻՒՆ, գ. Ինքնահաճ՝ ինքնահաւան լինելը:
ԻՆՔՆԱՀԱՄԱԽՄԲՈՒՄ, գ. Ինքնահամարմբուելը:
ԻՆՔՆԱՀԱՅԵԱՑ, ած. Ինքն իրեն դիտող:
ԻՆՔՆԱՀԱՍ, ած. Ինքն իրեն՝ բնական կերպով հասած:
ԻՆՔՆԱՀԱՏՈՒՄ, գ. Ինքն իր մարմնի մի մասի կտրելը:
ԻՆՔՆԱՀԱՐՈՒՄԾ, ած. Ինքն իրեն հարուածող՝ ծեծող:
ԻՆՔՆԱՀԱԻԱՆ, ած. Ինքն իրեն հաւանող:
ԻՆՔՆԱՀԱԻԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքնահաւան՝ ինքնահաճ լինելը:
ԻՆՔՆԱՀԱԻԱՆՈՐԵՆ, մկ. Ինքնահաւան կերպով:

ԻՆՔՆԱՀԵԳՆԱՆՔ, գ. Ինքն իրեն հեգնելը:
ԻՆՔՆԱՀԻՄՆ, ած. Հէնց իրենից հիմնը ուսած:
ԻՆՔՆԱՀԻՄ, ած. Իր ձեռքով հիւսած:
*** ԻՆՔՆԱՀԻՄԵԼ**, նբ. Ինքնին՝ անձամբ հիւսել:
ԻՆՔՆԱՀՆԱՐ, ած. Իր հնարած:
ԻՆՔՆԱՀՈԳԵԲՈՒԺՈՒԹԻՒՆ, գ. Ինքզինք բուժող:
ԻՆՔՆԱՀՈՍ, ած. մկ. Ինքն իրեն՝ արանց կողմնակի ոյժի հոսող:
ԻՆՔՆԱՅԱՏԱԿ, ած. Ինքնատիպ:
ԻՆՔՆԱՅՕՇՈՏՈՒՄ, գ. Ինքզինք յօշոտումը:
ԻՆՔՆԱՀՐԱԺԱՐՈՒՄ, Ինքն իրեն հրածարիլը:
ԻՆՔՆԱՀՐԱՄԱՆ, ած. Ուրիշից կախում չունեցող:
ԻՆՔՆԱՀՐԿԻԶՈՒԵԼ, բ. Ինքն իրեն հըրկիզել:
ԻՆՔՆԱԶԵՌԱԳԻՐ, գ. ած. Իր սեփական ձեռքով գրուած:
ԻՆՔՆԱԶԵՌՆ, ած. մկ. Իր սեփական ձեռքով:
ԻՆՔՆԱՃԱՆԱԶ, ած. Ինքն իրեն ճանաչող:
ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՂՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն ճանաչելը՝ ինքնաճանաչութիւն՝ ինքնաճանաչում:
ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն ճանաչելը:
ԻՆՔՆԱՄԱՏՈՅՑ, ած. Ինքն իրեն մատուցանող:
*** ԻՆՔՆԱՄԱՐՏ**, ած. Ինքն իր հետ մարտնչող:
*** ԻՆՔՆԱՄԵՌ**, ած. Ինքն իրեն՝ բնական մահով մեռնող:
ԻՆՔՆԱՄԵՐՁ, ած. (բնատ., դիպվ.): Ինքն իրեն մերձեցնող:
*** ԻՆՔՆԱՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ**, գ. Ինքն իրեն մոլորեցնելը:

ԻՆՔՆԱՍՈՈՒՑ, ած. Ինքն իրեն մոռացած:
ԻՆՔՆԱՍՈՈՒՑՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն մոռանալը:
 * **ԻՆՔՆԱՍՈՒՒՄ**, ած. Ինքն իրեն ներս մխող:
ԻՆՔՆԱՍՓՈՓ, ած. Ինքն իր մէջ ամփոփուած:
ԻՆՔՆԱՍՓՈՓՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն ամփոփելը:
 * **ԻՆՔՆԱՅԱՅՏՆԵԱԼ**, ած. Ինքն իր կողմից անմիջապէս յայտնուած:
ԻՆՔՆԱՅԱՆՉՆԱՐԱՐԱԿԱՆ, գ. Յանձնարարական ինքն իրեն:
ԻՆՔՆԱՅԱՐԳԱՆՔ, գ. Յարգանք ինքն իր նկատմամբ:
ԻՆՔՆԱՅՈՐՊՈՐ, ած. մկ. Ինքն իրենից յորդորուած:
ԻՆՔՆԱՅՕԺԱՐ, ած. մկ. Իր յօժարութեամբ եղած:
ԻՆՔՆԱՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ, գ. Ինքնայօժար լինելը:
ԻՆՔՆԱՄԱՏՈՒՑՈՒԹԻՒՆ, բ. Ինքն իրեն մատուցել:
ԻՆՔՆԱՆԱՄԱՍ, ած. Ինքն իրեն նախատող:
ԻՆՔՆԱՆԵՏԻՉ, Նստատեղ ինքնաթիռի մէջ, որը հնարատրութիւն է տալիս օդաչուին լքելու վնասուած ինքնաթիռը:
 * **ԻՆՔՆԱՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ**, գ. Ինքնաներգործ լինելը:
ԻՆՔՆԱՆՄԱՆԱԿ, գ. Իր կրկնակը, ինքնակրկնակը: Ինքնօրինակը:
 * **ԻՆՔՆԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Ինքնանման լինելը:
ԻՆՔՆԱՆՑՆԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. Սեփական ինքնութեան նոյնականացում:
ԻՆՔՆԱՈՉՆՉԱՑՆԵԼ, բ. Ինքն իրեն ոչնչացնելը:
ԻՆՔՆԱՈՒԷՐ, ած. Ինքն իրեն նուիրող:
ԻՆՔՆԱՇԱՐԺ, ած. Ինքն իրեն շարժող, փոխադրամիջոց:

ԻՆՔՆԱՇԱՐԺԱԲԱՐ, մկ. Ինքնաշարժ կերպով:
ԻՆՔՆԱՇԱՐԺԱԿԱՆ, ած. Ինքնաշարժին յատուկ:
ԻՆՔՆԱՇԱՐԺՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն շարժելը:
ԻՆՔՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, գ. Անձնական աշխատանք:
ԻՆՔՆԱՈՉՆՉԱՑՆԵԼ, բ. Ինքն իրեն ոչնչացնելը:
ԻՆՔՆԱՉԱՐ, ած. Ինքնին ի բնէ չար. բնութեամբ չար:
ԻՆՔՆԱՉԱՐՉԱՐԱՆՔ, գ. Ինքն իրեն չարչարելը:
 * **ԻՆՔՆԱՊԱՀԱՆՁ**, ած. Ինքն իր գլխի պահանջող:
 ԻՆՔՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ } գ. Ինքն
 ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ } իրեն պահպանելը:
ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒՄ, գ. Ինքն իրեն պահպանելը:
ԻՆՔՆԱՊԱՅԹՈՒՑԻԿ, ած. Ինքն իրենից պայթող:
ԻՆՔՆԱՊԱՆՍ, S. Ինքնապարծ:
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ, ած. Ինքնապաշտպանութեան յատուկ:
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն պաշտպանելը:
ԻՆՔՆԱՊԱՏԱՄԻՄԱՆԻՉ, գ. Պատասխանը վերարտադրող սարք:
ԻՆՔՆԱՊԱՏԻՐ, S. Ինքնախաբ:
ԻՆՔՆԱՊԱՏՐԱՍՏ, ած. Ինքն իրենից պատրաստող:
ԻՆՔՆԱՊԱՐԾ, ած. Ինքն իրենով պարծեցող:
ԻՆՔՆԱՊԱՐԾՈՒԹԻՒՆ, գ. Ինքնապարծ լինելը:
ԻՆՔՆԱՍԱՆՁ, ած. Ինքն իրեն սանձող:
ԻՆՔՆԱՍԱՑ, ած. Իր ասած, իր բերանով ասած:
ԻՆՔՆԱՍԷՐ, ած. Ինքն իրեն սիրող:
ԻՆՔՆԱՍԻՐԱԿԱՆ, ած. Ինքնասէրին յատուկ:

<p>ԻՆՔՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Ինքնասեր լինելը:</p> <p>ԻՆՔՆԱՍՈՍՆՁՈՒՈՂ, ած. Ինքն իրեն սոսնձուող:</p> <p>ԻՆՔՆԱՍՈՒՆ, ած. (Կենդ.) Նա որ մօր արզանդից դուրս գալուց յետոյ առժամանակ սնուում է իր մարմնից ելած հիւթերով:</p> <p>ԻՆՔՆԱՍՊԱՆ, S. Անձնասպան:</p> <p>ԻՆՔՆԱՍՏԵՂԾ, ած. Իրենից ստեղծած:</p> <p>ԻՆՔՆԱՍՏԵՂԾՈՒՄ, ած. Ինքզինքը ստեղծող:</p> <p>* ԻՆՔՆԱՍՏՈՐԱԿԱՅ, ած. Հստ ինքեան գոյութիւն ունեցող:</p> <p>ԻՆՔՆԱՍՏՈՒՄԾՈՒԹԻՒՆ, գ. (Կրօն.) Ինքնաստուածանայլը:</p> <p>ԻՆՔՆԱՎԱՅԵԼՈՒՉ, ած. Ինչ որ վայելուչ է իրեն:</p> <p>ԻՆՔՆԱՎԱՌ, ած. Ինքն իրենից վառուող:</p> <p>ԻՆՔՆԱՎԱՐ, ած. Ինքնավարութիւն ունեցող:</p> <p>ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ, ած. Ինքնավարի յատուկ:</p> <p>ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ, գ. (Իրաւբ.) Իրաւունք, որ տրուում է մի շրջանի հիմնարկի:</p> <p>ԻՆՔՆԱՎԱՐԺ, ած. Ինքն իրենից վարժուած:</p> <p>ԻՆՔՆԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ, գ. Ինքնավարժ լինելը:</p> <p>ԻՆՔՆԱՎԵՐԱՓՈԽՈՒՄ, բ. Ինքն իրեն վերափոխուել:</p> <p>ԻՆՔՆԱՎԿԱՅ, ած. Ինքն իր համար վկայ եղած:</p> <p>ԻՆՔՆԱՎՆԱՍՈՒՄ, գ. Ինքն իրեն վնասելը:</p> <p>ԻՆՔՆԱՎՍՍԱՀ, S. Անձնավստահ:</p> <p>ԻՆՔՆԱՎՍՍԱՀԱԲԱՐ, մկ. Ինքնավրստահ կերպով:</p> <p>ԻՆՔՆԱՏԵՍ, ած. Ինքը՝ անձամբ տեսնող:</p>	<p>* ԻՆՔՆԱՏԵՐՈՒԹԻՒՆ, գ. Ինքնատեր լինելը:</p> <p>ԻՆՔՆԱՏԻՊ, ած. Իր յատուկ տիպն ունեցող:</p> <p>ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹԻՒՆ, գ. Ինքնատիպ լինելը:</p> <p>ԻՆՔՆԱՏԻՊՈՐԷՆ, մկ. Ինքնատիպ՝ առանձնայատուկ կերպով:</p> <p>* ԻՆՔՆԱՏՈՒ, S. Անձատու:</p> <p>ԻՆՔՆԱՐԱՐ, ած. Իր ձեռքով շինած՝ արածը:</p> <p>ԻՆՔՆԱՐԺԷՔ, գ. Ինչ որ արժեցել է մի իր:</p> <p>ԻՆՔՆԱՐՁԱԿ, ած. Ինքն իրեն արձակած:</p> <p>* ԻՆՔՆԱՐՄԱՏ, գ. Բուն արմատ, սկիզբ:</p> <p>ԻՆՔՆԱՐՏԱՅԱՅՏՈՒՄ, բ. Ինքն իրեն արտայայտել:</p> <p>ԻՆՔՆԱՅՈՒՑԱՐԱՔ, գ. Ինքն իրեն ցուցադրելը:</p> <p>ԻՆՔՆԱԻԱՐՏ, ած. Ինչ որ մարդ ինքն է աւարտում:</p> <p>ԻՆՔՆԱՓԱՅԼ, ած. Ինքն իրենից փայլող:</p> <p>ԻՆՔՆԱՔԱՐԾ, ած. մկ. Ինքն իրեն քարշոռ:</p> <p>ԻՆՔՆԱՔՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն քննադատելը:</p> <p>ԻՆՔՆԱՔՆՈՒՄ, գ. Ինքն իրեն քննելը:</p> <p>ԻՆՔՆԵԿ, ած. Ինքն իր գլխի՝ իր կամքով եկած:</p> <p>ԻՆՔՆԵՂՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն, բնական գոյացած:</p> <p>ԻՆՔՆԵՓ, ած. Ինքնին եփուող, ինքն իրենից եփուող:</p> <p>* ԻՆՔՆԻՄԱՅ, ած. Ինքն իրենից իմացուող՝ հասկանալի:</p> <p>ԻՆՔՆԻՆ, անձն. դեր. Անձամբ: 2. մկ. Ինքն իրեն:</p> <p>ԻՆՔՆԻՇՄԱՆ, ած. Անձնիշխան: Ուրիշից անկախ:</p> <p>ԻՆՔՆԻՇՄԱՆԱԲԱՐ, մկ. Ինքնիշխան կերպով:</p>
--	--

ԻՆՔՆԻՇԽԱՆԱԿԱՆ, ան. Անձնիշխանական:

ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքնիշխան լինելը:

ԻՆՔՆԻՐԱՑՈՒՄ, գ. Ինքն իրեն իրացնելը:

ԻՆՔՆՅՕԺԱՐ, S. Ինքնայօժար:

ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄ, գ. Ինքն իրեն որոշելը, իր ազատ կամքով որոշելը:

ԻՆՔՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքնագոյություն:

ԻՆՔՆՈՒՂՈՐՈՒՈՒՂ, գ. Ինքն իրեն ուղղորդող:

ԻՆՔՆՈՒՄ, ան. գ. Ինքն իրեն՝ առանց դայրոցի եւ ուսուցչի սովորած:

ԻՆՔՆՈՒՍՈՅՑ, S. Ինքնուս:

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ, ան. Ինքն իր համար առանձին:

ԻՆՔՆՈՒՐՈՅՆԱԲԱՐ, մկ. Ինքնուրոյն կերպով:

ԻՆՔՆՈՒՐՈՅՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքնուրոյն լինելը:

ԻՆՔՍՕԳՆՈՒԹԻՒՆ, գ. Ինքն իրեն օգնել:

ԻՆՔՍՕՐԻՆԱԿ, ան. Իր տեսակի, առանձին տեսակի, ինքնատիպ:

ԻՇ, միջ. Վշտի ավստասանքի բացազանչություն:

ԻՇ, միջ. Բացազանչություն, որով կանգնեցնում են եզները:

ԻՇԱԲԵՈ, գ. Իշու վրայ բարձած բեռ:

ԻՇԱԳԻՆ, գ. Իշու գին:

+ **ԻՇԱԳԼՈՒԽ**, ան. գ. Իշի գլուխ:

+ **ԻՇԱԹՈԿ**, գ. Թոկ, որով էշը վզից կապում են:

+ **ԻՇԱԽԱՂՈՂ**, գ. Մի անորոշ բոյս:

+ **ԻՇԱԽԱՌԱՆՉ**, գ. (Կենդ.) Մի տեսակ թունատր սեւ բզեզ:

ԻՇԱԽՈՌՆ, գ. (Բուս.) Թիթեռնածաղիկների կարգին պատկանող բոյս:

ԻՇԱԿԱՆԿԱՌ, գ. (Բուս.) Խոշոր փուչ:

ԻՇԱԿԱՆՁ, գ. Ակքանագրիների ընտանիքին պատկանող բոյս:

ԻՇԱՀԱՍ, գ. (Կենդ.) Մի տեսակ թռչուն:

ԻՇԱՄԵՂՈՒ, գ. Վայրի մեղուի մի տեսակ:

ԻՇԱՅՐ, գ. Արու էշ:

ԻՇԱՆ, գ. Էշեր, էշերի խումբ:

ԻՇԱՆԱԼ, չբ. էշ կտրել:

ԻՇԱՆԴԱՍ, ան. Իշու նման անդամ ունեցող:

ԻՇԱՊԱՆ, ան. գ. էշը պահող, էշը քշող:

ԻՇԱՌՈՒՅՑ, գ. (Բուս.) Թիթեռնածաղիկների կարգին պատկանող բոյս:

ԻՇԱՎԱՅՐԻ, գ. Վայրի էշ:

ԻՇԱՎԱՐ, ան. էշ վարող, էշ քշող:

ԻՇԱՎԱՐԵԼ, չբ. էշը վարել, էշը քշել:

+ **ԻՇԱՎԱՐԻ**, ան. մկ. Իշու նման յիմար:

ԻՇԱՎԱՐՈՒՆԳ, գ. (Բուս.) Վայրի վարունգ:

ԻՇԱՏԷՐ, գ. Իշու տեր:

ԻՇԱՐԱՍ, ան. գ. էշեր արածեցնող:

ԻՇԱՑՈՒԼ, գ. Երեւակայական հրէշ:

ԻՇԱՒՈՐ, ան. գ. էշ ունեցող:

ԻՇԱՔԵՂ, գ. (Բուս.) Լիբանանում եւ Ասորիքում աճող բոյս:

ԻՇԱՔՈՒՆԱԿ, գ. Իշու քուռակ:

ԻՇԵԱՆ, յոզն. գ. Իշան, էշեր:

ԻՇԻԱՍ, գ. (Յոն.) (Ախտար.) Մէջքէն ցաւ, սուր ջղացաւություն:

ԻՇԽԱՆ, գ. Իշխող, տիրող, կառավարիչ:

ԻՇԽԱՆԱԲԱՐ, մկ. Իրրեւ իշխան:

* **ԻՇԽԱՆԱԳՈՅՆ**, բաղդ. ան. Աւելի մեծ իշխող:

ԻՇԽԱՆԱՂՈՒՍՏՐ, գ. Իշխանի դուստր՝ աղջիկ:

ԻՇԽԱՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ, գ. Իշխանութեան սահմանից դուրս գալը:

ԻՇԽԱՆԱԶՈՒՆ, ան. Իշխանական ծագում ունեցող, իշխանի որդի:

* **ԻՇԽԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, գ. Իշխանութիւն ունենալը:

ԻՇԽԱՆԱԿԱՆ, ան. Իշխանին յատուկ:

ԻՇԽԱՆԱԿԵՆՏՐՈՆ, ան. Իշխանութեան շահերի առաջնայնությունը ար-

<p>տայայտող:</p> <p>*ԻՇԽԱՆԱԿԻՐ, ած. Բշխանության ձրգտող, կրող:</p> <p>ԻՇԽԱՆԱԿԻՑ, ած. գ. Բշխանի ընկեր:</p> <p>ԻՇԽԱՆԱԿՑԵԼ, չբ. Բշխանակից լինել:</p> <p>ԻՇԽԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Բշխանակից լինելը:</p> <p>ԻՇԽԱՆԱՁՈՒԿ, գ. Բշխան ձուկը:</p> <p>ԻՇԽԱՆԱՆԱԼ, չբ. Բշխան դառնալ:</p> <p>ԻՇԽԱՆԱՆԻՍ, ած. Որտեղ նստում է իշխանը:</p> <p>* ԻՇԽԱՆԱՇՈՒՔ, ած. Բշխանական շուք պատիւ ունեցող:</p> <p>* ԻՇԽԱՆԱՊԱՆՍ, ած. Բշխանութեամբ պանծացող:</p> <p>ԻՇԽԱՆԱՊԵՏ, գ. Բշխանների պետ:</p> <p>* ԻՇԽԱՆԱՊԵՏԱԿԱՆ, ած. Բշխանապետին յատուկ:</p> <p>* ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ, գ. Բշխանապետի աստիճանը:</p> <p>* ԻՇԽԱՆԱՊԵՏՔ, ած. Բշխանական շուքով:</p> <p>ԻՇԽԱՆԱՍԱՍ, ած. Բշխանական սաստ պարունակող:</p> <p>ԻՇԽԱՆԱՍԷՐ, ած. Բշխանութիւն սիրող:</p> <p>ԻՇԽԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ած. Բշխանասերին յատուկ:</p> <p>ԻՇԽԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Բշխանասեր լինելը:</p> <p>ԻՇԽԱՆԱՎԱՅԵԼ, ած. Բշխանին վայելուչ:</p> <p>ԻՇԽԱՆԱՎԱՐՈՒՄ, գ. Բշխանութիւնը վարելը:</p> <p>ԻՇԽԱՆԱՏԵՆՉՈՒԹԻՒՆ, գ. Բշխանութեան ձգտելը:</p> <p>ԻՇԽԱՆԱՐԱՐ, ած. Բշխանացող:</p> <p>ԻՇԽԱՆԱԻՈՐ, ած. Իր վրայ իշխանութիւն ունեցող: Առհասարակ իշխանութեամբ օժտուած:</p> <p>* ԻՇԽԱՆԱՓՈՒՍ, ած. Բշխաններին թազատրներին պետերին փոփոխող:</p>	<p>ԻՇԽԱՆԻԿ, գ. Փոքրիկ իշխան:</p> <p>ԻՇԽԱՆՈՐԴԻ, գ. Բշխանի որդի:</p> <p>ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բշխան լինելը, իշխանի աստիճանը: 2. Տէրութիւն, տիրապետութիւն: 3. (Կրօն.) Հրեշտակների դասերից մէկը:</p> <p>ԻՇԽԱՆՈՒՅԻ, գ. Բշխանի կին:</p> <p>ԻՇԽԱՆՕՐԷՆ, Տ. Բշխանաբար:</p> <p>ԻՇԽԵԼ, չբ. Իբրեւ իշխան կառավարել:</p> <p>ԻՇԽՈՂ, ած. գ. Նա որ իշխում է:</p> <p>ԻՇԽՈՒՆ, գ. (Բուս.) Խաւարծիլ:</p> <p>ԻՇԿԱԹՆՈՒԿ, գ. (Բուս.) Անորոշ տեսակի խոտ:</p> <p>ԻՇԿՈՑ ՎԱՐՈՒՆԳ, գ. (Բուս.) Վարունգի մի տեսակ:</p> <p>ԻՇՈՏՆՈՒԿ, գ. Առանց թիկնակի նստարան:</p> <p>ԻՇՈՐԴԻ, գ. 1. Բշու քուռակ: 2. Բշուց սերուած:</p> <p>ԻՇՈՒԹԻՒՆ, գ. Բշու յատկութիւն, անհասկացողութիւն:</p> <p>ԻՇՈՒԿ, գ. Փոքր էջ:</p> <p>ԻՇՏ, միջ. Խրոխտական բացազանչութիւն:</p> <p>ԻՇՈՒ ՏՏՈՒԿ, գ. (Բուս.) Շուշանբանջարի (մանդակի) շատ նման բոյս:</p> <p>ԻՊԻՆԵՆ, գ. (Բուս.) Ուտենիների կարգին պատկանող գեղեցիկ բարձր ծառ:</p> <p>ԻՋԱԳՐԵԼ, նբ. Գրքի կմ տետրակի երեսների վրայ յաջորդական թուանշաններ դնել:</p> <p>ԻՋԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Իջագրելը:</p> <p>ԻՋԱՁՕՐ, Հակառակորդի տարածք իջեցուած նախանշանակուած գորք:</p> <p>ԻՋԵՅՈՒՄ, գ. Իջեցնելը:</p> <p>ԻՋԵԻԱՆ, գ. 1. Իջնելու կայարան: 2. Հանգստանալու զիջերելու տեղ:</p> <p>ԻՋԵԻԱՆԱՏԵՂ } գ. Իջեանելու տեղ ԻՋԵԻԱՆԱՏՈՒՆ }</p> <p>տուն, իջեան:</p> <p>ԻՋԵԻԱՆԵԼ, չբ. Մի տեղ իջնել հանգրտանալու:</p>
--	---

ԻՋՆԵԼ, չբ. Բարձր տեղից գալ ցած տեղ:
 2. Հեծած տեղից վեր գալ: 3. Ցածանալ, նստել: 4. Տաքութիւնը պակասել: 5. Արժեքը պակասել: 6. Գնից զեղչել:
ԻՋՈՒԱՄՔ, գ. (Ախտաբ.) 1. Տ. Կաթուած: 2. Հիւանդութիւն:
ԻՌԼԱՆԴԱԿԱՆ, ած. Իռլանդիային եւ իռլանդացիներու վերաբերեալ:
ԻՌԼԱՆԴԱՅԻ, ած. գ. Իռլանդիայի բնակիչ:
ԻՌԼԱՆԴԵՐԷՆ, ած. գ. մկ. Իռլանդացիների լեզուն:
ԻՍԼԱՄԱԴԱԻԱՆ, ած. Իսլամ դաւանող:
ԻՍԼԱՄԱԿԱՆ, ած. Իսլամին յատուկ:
ԻՍԼԱՄԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. (Կրօն.) Իսլամ կրօնի յատկութիւնը:
ԻՍԼԱՄԱՆԱԼ, չբ. Իսլամ դառնալ:
ԻՍԼԱՄԱՑՆԵԼ, անց. ձեւ. Իսլամանալի:
ԻՍԼԱՄԱՑՈՒՄ, գ. Իսլամանալը:
ԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ, գ. Իսլամ դաւանութիւն, մահմետական կրօն:
 1. **ԻՄԿ**, ած. Ճշմարիտ, իրական, բուն:
 2. **ԻՄԿ**, շղկ. Կապում է երկու նախադասութիւն կմ նախադասութեան անդամներ:
ԻՄԿԱԲԱՆԵԼ, նբ. Ճշտաբանել:
ԻՄԿԱԿԱՆ, ած. 1. Էական, բուն: 2. Բուն, ուղիղ, շիտակ: Հկր. Արուեստական:
ԻՄԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Իսկական լինելը:
 * **ԻՄԿԱՃԵՄ**, ած. (Կրօն.) Դէպի իսկը ձեւնող:
ԻՄԿԱՊԷՄ, մկ. Ստուգապէս, իրօք:
 * **ԻՄԿԱՔԱՆՉ**, Աղաւաղութիւնից առաջացած աննշանակ հնչիւն:
ԻՄԿՈԹ, գ. (Բուս.) Բանջար, որ գործ են ածում կերակրի մէջ:
ԻՄԿՈՅՆ, մկ. Անմիջապէս:
ԻՄԿՈՒԹԻՒՆ, գ. Բուն էութիւն, եղելութիւն:

ԻՄԿՈՒՇԻ, ած. Տիրուհի, թագուհի:
ԻՄԿՕՐԷՆ, մկ. Իսկապէս:
ԻՄՊԱՌ, մկ. 1. Մինչեւ սպառուելը, մինչեւ վերջանալը՝ վերջը: 2. Բոլորովին:
ԻՍՏԱԿ, ած. մկ. Յստակ:
ԻՍՏԱԿԵԼ, նբ. Մաքրել:
ԻՍՐԱՅԷԼ, գ. Հրէական ժողովուրդի երկիր:
ԻՍՐԱՅԷԼԱԲՆԱԿ, ած. Իսրայէլում բնակուող:
 * **ԻՍՐԱՅԷԼԱՆԱԼ**, չբ. Իսրայէլ դառնալ:
ԻՍՐԱՅԷԼԱՅԻ, ած. գ. Հրէական ցեղին պատկանող:
ԻՍՐԱՅԷԼԵԱՆ, Տ. Իսրայէլական:
ԻՏԱԼԱԿԱՆ, ած. Իտալիային յատուկ:
ԻՏԱԼԱՀՊԱՏԱԿ, ած. Իտալիայի հպատակ:
ԻՏԱԼԱՅԻ, գ. Իտալիայի բնակիչ:
ԻՏԱԼԵՐԷՆ, ած. գ. մկ. Իտալացիների լեզու, իտալացիների լեզունով:
ԻՏԱԼՈՒՇԻ, գ. Իտալացի՝ իգական սեռի:
ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ, Տ. Իրագննութիւն:
ԻՐԱԳՈՐԾԵԼ, նբ. 1. Գործել մի բան: 2. Իրականացնել:
ԻՐԱԳՈՐԾԵԼԻ, ած. Ինչ որ կարելի է իրագործել:
ԻՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Մի բան գործելը:
ԻՐԱԳՈՐԾՈՒՄ, գ. Իրականացնելը:
ԻՐԱԴԱՐՉԱՅԻՆ, ած. Եշանակալի՝ կարեւորութիւն ներկայացնող:
ԻՐԱԴԱՐՉՈՒԹԻՒՆ, գ. Իրերի ընթացք:
ԻՐԱԴՈՒԹԻՒՆ, գ. Համախմբում մի շարք պայմանների:
ԻՐԱԶԳԱԾ } ած. Իրերին՝ հանգամանք-
ԻՐԱԶԳԱՅ } ներին ծանօթ:
ԻՐԱԶԵԿ, ած. Որին զեկուցուած են իրերը:
ԻՐԱԶԵԿԻՉ, Լրտես:
ԻՐԱԶԵԿՈՒՄՈՒԹԻՒՆ, գ. Տեղեկա-

<p><i>ցուածութիւն:</i> ԻՐԱԶԵԿՈՒԹԻՒՆ, գ. Բրազէկ լինելը: ԻՐԱԶՆԱԿԱՆ, ած. Բրազնութեան երաբերեալ: ԻՐԱԶՆՈՒԹԻՒՆ, գ. Բրէրը՝ առարկաները զննելը: ԻՐԱԽՆԴԻՐ, ած. Բրականութիւնը որոնող: * ԻՐԱԽՈՅՁ, ած. Բրեր խուզարկող: ԻՐԱԿԱՆ, ած. 1. Ինչ որ իրօք կայ: 2. Հաւաստի: ԻՐԱԿԱՆԱՆԱԼ, չբ. Բրական դատնալ: ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, գ. Բրականանալը: ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բսկական եղելութիւն: ԻՐԱԿԱՆՕՐԷՆ, մկ. Բսկապէս: * ԻՐԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. Բրերի կարգաւորում: * ԻՐԱԿՈՒԹԻՒՆ, գ. Գործողութիւն, գործ: ԻՐԱՅԻՆ, ած. Բրով՝ նիւթով արտայայտուող: 1. ԻՐԱՆ, գ. Մարդու ամբողջ մարմինը, գլխից մինչեւ ոտները: 2. ԻՐԱՆ, անձն. դեր.: * ԻՐԱՆԱԼ, չբ. Բր դատնալ. Բրականանալ: * ԻՐԱՊԱՇՏ, ած. Արուեստի մէջ՝ հետեւող իրապաշտութեան: * ԻՐԱՊԱՇՏԱԿԱՆ, ած. Բրապաշտին եւ իրապաշտութեան յատուկ: ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ. Բրականութիւնը մտքի կընկալի արուեստի մէջ՝ որպէս սահմանում գործելակերպի, առանց գաղափարականի: ԻՐԱՊԷՍ, մկ. Բրական կերպով: + ԻՐԱՍԱԾԻ, ած. Բր ասածի վրայ պընդող: + ԻՐԱՍԱԾՈՒԹԻՒՆ, գ. Բրասածի լինելը: ԻՐԱՐ, անձն. դեր. սեռ. եւ հայց. հոլ.:</p>	<p><i>Մէկգմէկ:</i> ԻՐԱՐԱՆՑՈՎ ԼԻՆԵԼ, Տ. Բրար անցնել: ԻՐԱՐԱՆՑՈՒՄ, գ. Բրար անցնելը: ԻՐԱՅՆԵԼ, չբ. Բրականացնել: ԻՐԱՅՈՒՄ, Տ. Բրականացում: ԻՐԱԻ, մկ. Բրօք, իրապէս: ԻՐԱԻԱԲԱՆ, ած. Բրաւացի խօսող, արդարախօս: Բրաւագէտ: ԻՐԱԻԱԲԱՆԱԿԱՆ, ած. Բրաւաբանութեան յատուկ: ԻՐԱԻԱԲԱՆԵԼ, ն. չբ. Բրաւունքը եւ իրաւացին ասել: ԻՐԱԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բրաւաբան լինելը: ԻՐԱԻԱԲԱՆՕՐԷՆ, մկ. Ըստ իրաւաբանութեան: ԻՐԱԻԱԲԱՐ, մկ. Բրաւացի կերպով: ԻՐԱԻԱԳԷՏ, Տ. Բրաւաբան: ԻՐԱԻԱԴԱՏ, ած. Բրաւացի դատող: ԻՐԱԻԱԶԱՆՑ, ած. Բրաւունքը զանց անող խախտող: ԻՐԱԻԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ, գ. Բրաւագանց լինելը: ԻՐԱԻԱԶԻՐԿ } ած. Բրաւունքներից ԻՐԱԻԱԶՈՒՐԿ } գրկուած: ԻՐԱԻԱԶԿՈՒԹԻՒՆ, գ. Բրաւագուրկ լինելը: ԻՐԱԻԱԶՕՐ, ած. Լիակատար իրաւունք ունեցող: ԻՐԱԻԱԶՕՐՈՒԹԻՒՆ, գ. Բրաւագօր լինելը: ԻՐԱԻԱԽԱՆՏՈՒՄ, գ. Այնպիսի արարք, որ օրէնքով արգելուած է: ԻՐԱԻԱԽՆԴԻՐ, ած. Բրաւունք եւ արդարութիւն խնդրող: ԻՐԱԻԱԽՈՂ, ած. Նա որ մտածում է արդարի եւ իրաւի մասին: ԻՐԱԻԱԽՈՂՈՒԹԻՒՆ, գ. Բրաւախոտ լինելը: ԻՐԱԻԱԽՈՂՆՈՒՐ, Տ. Բրաւախոտ: ԻՐԱԻԱԽՈՂՆԱՏՈՒ, գ. Բրաւաբա-</p>
--	---

նական խորհուրդներ տուող անձ:
ԻՐԱԻԱԿԱՆ, ան. Արդար, իրաւացի:
ԻՐԱԻԱԿԱՐԳ, գ. Մի երկրում գոյութիւն ունեցող կարգ:
ԻՐԱԻԱԿԱՐԳԱԻՈՐՈՒՄ, գ. (իրավ.)
 Իրաւական կարգավորում:
ԻՐԱԻԱԿԻՐԱՌՈՒՄ, Կազմակերպա- իրաւական ձեւի պետական գործու- նեութիւն՝ նպատակաւորուած իրա- ւական յանձնարարականների կենսա- գործմանը:
ԻՐԱԻԱԿՇԻՌ, ան. Արդարակշիռ:
ԻՐԱԻԱՀԱԻԱՍԱՐ, ան. Ուրիշին հա- ւասար իրաւունքներ վայելող:
ԻՐԱԻԱՀԱԻԱՍԱՐՈՒԹԻՒՆ, գ. Իրա- ւահաւասար լինելը:
ԻՐԱԻԱՍԲ, մկ. Իրաւունքով ճշտօրէն:
 * **ԻՐԱԻԱՍԵՐԺ**, ան. Իրաւացի կերպով մերժում:
ԻՐԱԻԱՆԱ, չբ. Արդար դուրս գալ:
ԻՐԱԻԱՊԷՍ, մկ. Իրաւաբար:
 * **ԻՐԱԻԱՌՈՒ**, ան. գ. Նա որ առնում՝ ստանում է ուրիշի իրաւունքը:
ԻՐԱԻԱՍԱԿԱՆ, ան. Իրաւասութեան վերաբերեալ:
ԻՐԱԻԱՍԷՐ, ան. Իրաւը՝ իրաւունքը սիրող:
ԻՐԱԻԱՍՈՒ, ան. գ. Նա՝ որին իրաւունք է տրուած որոշ գործեր քննելու եւ վճռե- լու:
ԻՐԱԻԱՍՈՒԹԻՒՆ, գ. Որոշ իրաւունք- ներ՝ տուեալ գործերը քննելու:
ԻՐԱԻԱՍԷՐ, գ. Իրաւունքի տէրը:
ԻՐԱԻԱՏԻՐՈՒԹԻՒՆ, գ. Իրաւունք- ներին տէր կանգնելը:
ԻՐԱԻԱՏՈՒ, ան. գ. Նա որ իր իրա- ւունքը տալիս է ուրիշին:
ԻՐԱԻԱՏՐԻ ՈՅԺ, գ. Ուրիշին տրուած իրաւունքի ոյժը:
ԻՐԱԻԱՐԱՐ, ան. գ. Իրաւունք եւ արդա- րութիւն անող: Խաղի դատաւոր:
ԻՐԱԻԱՐԱՐՈՒԹԻՒՆ, գ. Իրաւաբար

լինելը:
ԻՐԱԻԱՏԻ, ան. Իրաւունքով եւ արդա- րութեամբ եղած:
ԻՐԱԻԱՏԻՈՒԹԻՒՆ, գ. Իրաւացի՝ ար- դար լինելը:
 * **ԻՐԱԻԱՏԻՕՐԷՆ**, մկ. Իրաւացի կեր- պով:
ԻՐԱԻԱՕՐԵՆՍԴԻԱԿԱՆ, ան. (իրաւբ.) Իրաւական եւ օրէնսդրական:
 * **ԻՐԱԻՐՆԻՐ**, ան. Իրաւունքն ընտրող:
ԻՐԱԻՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. (Իրաւբ.) Ան- ձի իրաւունքը որոշ իրաւաբանական գործառնութիւնների, որոնք որոշուած են օրէնքով:
ԻՐԱԻՈՒՆՔ, գ. 1. Ինչ որ արդար եւ իրաւ է: (Իրաւբ.) Ամբողջութիւնը պետութիւ- նից սահմանուած կանոնների կամ պե- տութիւնից հաստատուած սովորոյթ- ների, որոնք վերաբերում են մարդկանց կենցաղավարութեան եւ հարկադրա- բար գործադրուում են պետութեան միջոցով:
 2. Իրաւացի գտնել, արդարացնել:
ԻՐԱԻՑՆԵԼ, նբ. Իրաւացի դուրս բերել:
ԻՐԱԻՑՆԵ, (արեւմտահայ լեզուով), մկ. Յիրաւի, արդարեւ:
 * **ԻՐԱՓԱՌ**, ան. Շատ փառաւորում:
ԻՐԱՔԱՀԱՅ, գ. Իրաքում ապրող հայ:
ԻՐԱՔԱՀԱՅՈՒԹԻՒՆ, գ. Իրաքում ապ- րող հայութիւն:
ԻՐԵՂԷՆ, գ. Ինչ իր որ կայ:
ԻՐԵՐԱԳՈՎ, ան. Իրար՝ մէկը միսին գովող:
ԻՐԵՐԱՀԱՂՈՐԴ, ան. Իրար հետ հա- դորդակցող:
ԻՐԵՐԱՀԱՇՏ, ան. Իրարու հետ հաշտ:
ԻՐԵՐԱՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ, գ. Իրար հասկանալը:
ԻՐԵՐԱՅԱԶՈՐԴ, ան. Իրար յարջորդող:
ԻՐԵՐԱՎԱՐԺ, ան. Ընտելացած:
ԻՐԻԿՆԱԴԷՍ, գ. մկ. Այն ժամանակը,

երբ օրը դէպի երեկոյ է դառնում:
ԻՐԻՎԱՏԱՄԱՍ, գ. Երեկոյեան ժամեր-
 գութինն:
ԻՐԻՎԱՍԼՈՅՍ, գ. Երեկոյեան լոյս:
ԻՐԻՎԱՍՀԱՅ, գ. Երեկոյեան հաց, ընթ-
 րիք:
ԻՐԻՎԱՍԼՈՅՍ, գ. Երեկոյեան լոյս:
ԻՐԻՎԱՍՀԱՅ, գ. Երեկոյեան հաց, ընթ-
 րիք:
ԻՐԻՎԱՍՀՈՎ, գ. Երեկոյեան հով:
 + **ԻՐԻՎԱՍՆԱՍ**, չք. Երեկոյեանալ:
ԻՐԻՎԱՍՊԱՀ, գ. Երեկոյեան պահ:
 + **ԻՐԻՎՈՒՆ**, գ. Երեկոյ:
ԻՐՈՂԱՔԱՐ, մկ. Իրապէս, իրօք:
 * **ԻՐՈՂԱԿԱՆ**, ած. Իրական, արդիւնա-
 կան:
ԻՐՈՂԱՊԷՍ, մկ. Իրապէս:
ԻՐՈՂՈՒԹԻՒՆ, գ. Իրական դէպք:
 * **ԻՐՕՐԷՆ**, մկ. Իրապէս, իրօք:
ԻՐՕՔ, մկ. Իրապէս, ստուգիւ:
ԻԻՂ, գ. Ճարպային կակուղ նիւթ:
ԻԻՂԱԳՈՐԾԱԿԱՆ, ած. Բւղազործու-
 թեան վերաբերեալ:
ԻԻՂԱԳՈՐԾԱՐԱՆ, գ. Կաթից իւղ պատ-
 րաստելու գործարան:
ԻԻՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Բւղազործի
 արհեստը:
ԻԻՂԱԴԵՂ, գ. Դեղ, որի մէջ մտնում է
 որեւէ իւղ:
ԻԻՂԱԹԱԹԱՆ, ած. Բւղի մէջ թաթախ-
 ւած:
 ԻԻՂԱԹՈՐՄ } ած. Բւղի մէջ թաթախը-
 ԻԻՂԱԹՈՒՐՄ }
 նւած:
ԻԻՂԱԼԻ, ած. Բւղը շատ՝ աստատ:
 ԻԻՂԱԼԻՐ } Տ. Բւղալի:
 ԻԻՂԱԼԻՅ }
 + **ԻԻՂԱՍԱՂԻԿ**, գ. Անորոշ տեսակի
 ծաղիկ:
ԻԻՂԱՄԻՆ, ած. Բւղ ծնող:
ԻԻՂԱՎԱԼԵՆ, չք. Բւղ կապել, իւղ բռնել:
ԻԻՂԱԿԵՂ, ած. Բւղի նման:

ԻԻՂԱՃՃԻ, գ. (Կենդ.) Բզէզի տեսակ:
ԻԻՂԱՃՐԱԳ, գ. Բւղով՝ իւղ վառելով
 աշխատող ճրագ:
ԻԻՂԱՍԱՆ, գ. Աման, որի մէջ իւղ են
 դնում:
ԻԻՂԱՅԻՆ, ած. Բւղին յատուկ, վերա-
 բերեալ:
ԻԻՂԱՆԵՐԿ, գ. Ներկ որ կազմուած է
 բուսական իւղով:
ԻԻՂԱՆԿԱՐ, գ. Բւղաներկով նկարուած
 պատկեր:
ԻԻՂԱՇԵՐՏ, գ. Բւղի շերտ:
 + **ԻԻՂԱՇՈՈ**, գ. Կաթնեղէն մթերք:
ԻԻՂԱՉԱՓ, գ. Սարած:
ԻԻՂԱՎԱՃԱՆ, գ. Բւղի առետուր անող:
ԻԻՂԱՐԱՐ, Տ. Բւղագործ:
 * **ԻԻՂԱՐԿԵԼ**, նբ. Բւղ ածել մի բանի
 վրայ:
 * **ԻԻՂԱՐԿՈՒԹԻՒՆ**, գ. Բւղ ածելը մի
 բանի վրայ:
ԻԻՂԵԼ, նբ. Բւղով օծել, իւղ քսել:
ԻԻՂԵՂԵՆ, ած. գ. Բւղով պատրաստ-
 ւած եւ իւղային կերակուրներ:
ԻԻՂԻԶ, գ. Արհեստաւոր կմ բանուոր,
 որոնք իւղում են վագոնների եւ այլ մե-
 քենաների լիսեռները:
ԻԻՂՈՏԵԼ, նբ. Բւղ քսել, իւղով կեղտո-
 տել:
ԻԻՂՈՏՈՒԹԻՒՆ, գ. Բւղոտ լինելը:
 1. **ԻԻՐ**, անձն. դեր. 3-րդ դէմքի, սեռ.
 հոլով.:
 2. **ԻԻՐ**, ստաց. ած. դեր. 3-րդ դէմքի,
 յոգն. իրենց:
ԻԻՐԱՔԱՐՈՅ, ած. Իր յատուկ բնա-
 տրութեան:
ԻԻՐԱՔՆԱԿ, ած. Իր բնակութեան հա-
 մար սահմանուած:
 + **ԻԻՐԱԳՈՐԾ**, ած. Իր գործած:
ԻԻՐԱՄԻՆ, ած. Իր ծնած, հէնց իրանից
 ծնուած:
ԻԻՐԱԿԵՐՏ, ած. Իր կերտած, ինքնա-
 կերտ:

<p>ԻՐԱՆԱՐ, ան. <i>Իր հնարած:</i> ԻԻՐԱՅԻՆ, ան. <i>Իրեն յատուկ, իր սեփական:</i> ԻԻՐԱՆԱԼ, չբ. <i>Իրենը դառնալ, սեփական դառնալ:</i> ԻԻՐԱՆՄԱՆ, ան. <i>Իրեն նման:</i> ԻԻՐԱՇԷՆ, ան. <i>Իր շինած:</i> ԻԻՐԱՍԵՂԾ, ան. <i>Իր ստեղծած:</i> ԻԻՐԱՏԵՍԱԿ, ան. <i>Իր տեսակի, մի առանձին տեսակի:</i> * ԻԻՐԱՏՈՒՐ, ան. <i>Իր տուած:</i></p>	<p>ԻԻՐԱՑՈՒՄ, գ. <i>Իւրացնելը եւ իւրացունելը:</i> ԻԻՐԱՔԱՆՉԻՒՐ, ան. <i>Ամէն ոք:</i> ԻԻՐՈՎԻ } մկ. <i>Ինքն անձամբ:</i> ԻԻՐՈՎԻՆ } ԻԻՐՈՎՄԱՆՆ, մկ. <i>Իր կողմից:</i> ԻԻՐՈՒԹԻՒՆ, գ. <i>Իրենը լինելը:</i> ԻՔ, <i>Բբբեւ բայ. Կայ, գոյութիւն ունի:</i> ԻՔԵՆՔ, գ. <i>Փոխարինում է մի ընտանիքի անուն:</i> ԻՔՄԻՆ, ան. գ. <i>Մի բան, մի զատ, որեւէ բան:</i></p>
--	---

Լ, Լ

Լ, Լ, լին, + լիվոն, գ. *Հայերէն այբուբենի տասներկուերորդ տառը եւ եօթներորդ բաղաձայնը: Երեսուն, երեսուներորդ: Թուարկութեան 30-ի համապատասխան:*
ԼԱԲԻՐԻՆԹՈՍ, ԼԱԲԻՐԻՆԹ(ՈՍ), գ. *Շինութիւն՝ բազմաթիւ սենեակներով, որոնք էապէս մանուածապատ էին դասաւորուած:*
ԼԱԲՐԱԿ, գ. (Կենդ.) *Չողածկան նման ձուկ:*
ԼԱՐ, գ. (Երաժշտ.) *Երաժշտութեան մէջ հնչիւնաշարքի կառուցման եղանակը:*
ԼԱՐԱՅԻՆ, ան. *Լաղին վերաբերող:*
1. ԼԱՁ, գ. *Կովկասեան ցեղերին պատկանող մի ժողովուրդ:*
+ 2. ԼԱՁ, ան. *Համր, թլուատ:*
ԼԱՁՈՒՐ, գ. *Բաց կապոյտ գոյն:*
ԼԱՁՈՒՐԱԳՈՅՆ, ան. *Լազուրի գոյն ունեցող:*
ԼԱՁՈՒՐԱՆԱԼ, բ. *Լազուր դառնալ:*
ԼԱԹ, արեւմտահայ, գ. **1.** *Գործուած կտոր, կտաւեղէն:* **2.** *Ձգեստ, հագուստ:*

ԼԱԹԱԳՕՏԻ, գ. *Գործուած կտորից պատրաստուած գօտի:*
ԼԱԹԱԿԱԶՍ, ան. *Լաթով՝ շորով՝ կտորով կազմած (գիրք):*
ԼԱԹԱԿՏՈՐ, գ. *Լաթի կտոր:*
ԼԱԹԵՂԷՆ, ան. գ. *Որքան որ լաթ կայ:*
+ ԼԱԹՕՐԶՆԷՔ, *S. Հալաւօրհնէք:*
1. ԼԱԼ, գ. *Թանկագին քար:*
2. ԼԱԼ, չբ. *Արտասուք թափել:*
+ 3. ԼԱԼ, *S. Համր:*
ԼԱԼԱԳԻՆ, ան. *Արտասուալից:*
+ ԼԱԼԱԶԱՐ, գ. *Խիստ կարմիր եւ գեղեցիկ ծաղիկ:*
ԼԱԼԱՆԱՌՆ, ան. *Լացի հետ խառն:*
ԼԱԼԱԿԱՆ, ան. *Լացի՝ ողբի վերաբերեալ:*
ԼԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ, *S. Լալկանութիւն:*
ԼԱԼԱԿԻՑ, ան. գ. *Միասին լացող:*
+ ԼԱԼԱԶԱՅՆ, գ. *Լացի ձայն:*
*** ԼԱԼԻ**, ան. *Լացող կմ լալու, լալու արժանի:*
ԼԱԼԻՔ, գ. *Աւագ ուրբաթ գիշերուայ սուգը:*

ԼԱԼԿԱՆ, ան. Շարունակ լացող:

ԼԱԼԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Լալկան լինելը:

+ **ԼԱԼՈՇ**, ան. Հակառակություն անելով պատուէրը չկատարող:

+ **ԼԱԼՈՒՇ**, գ. Շների եւ գայլերի խմբով ռոնալը, ռոնոց:

ԼԱԽ, գ. Ծառի ճիւղ, ոստ:

+ **ԼԱԽԼԱԽ**, ան. Լիլիացող, թոյլ:

ԼԱԽՏ, գ. Կոպալ, մահակ՝ ծայրը գնդաձեւ:

ԼԱԽՏԱՆԱՂԱՑ, գ. Լախտ խաղացող:

ԼԱԽՏԱԿԵՐՊ, ան. Լախտի ձեւ ունեցող:

ԼԱԽՏԱԿԻՐ, ան. Լախտ կրող: գ. (Բուս.)

Սէգերի կարգին պատկանող բոյս:

ԼԱԽՏԱՀԱՐ, ան. Լախտով խփող կմ խփուող:

* **ԼԱԽՏԱՀԱՐՈՒԹԻՒՆ**, գ. Լախտահար լինելը:

+ **ԼԱԽՏԻ**, գ. Խաղ, որի ժամանակ լախտիով իրար ծեծում են:

ԼԱԿ, գ. Ջրալի կերակուր, որ շունը, կատուն լակում են:

+ **ԼԱԿԱՄԱՆ**, գ. Աման, որի մէջ լակ են ածում շների համար:

+ **ԼԱԿԱՆԱԼ**, չբ. Լակ դառնալ:

ԼԱԿԵԼ, նբ. 1. Հեղուկ կերակուրը լեզուով բերանն ածել: 2. Ոգելից խմիչք խմել:

ԼԱԿԵՑ, գ. Տերերի-պարոնների տնային ծառայ, սպասատր:

ԼԱԿՄՈՒՍ, գ. (Քիմ.) Բաց-մանուշակագոյն ներկ:

ԼԱԿՈՆԱԲԱՆ, ան. Լակոնական ոճով խօսող: Սեղմարան:

ԼԱԿՈՆԱԲԱՐ, մկ. Լակոնական՝ կարճ-ու կտրուկ խօսելով կերպով:

ԼԱԿՈՆԱԿԱՆ, ան. Լակոնացուն յատուկ:

ԼԱԿՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Լակոնական լինելը:

ԼԱԿՈՆԱՑԻ, ան.գ. Լակոնիայի (Սպարտայի) բնակիչ:

ԼԱԿՈՑ, գ. Շան ձագ:

ԼԱԿՈՑ-ԼՈՒԿՈՒՑ, գ. Լակոտներ. փոքր երեխաներ:

ԼԱԿՈՑՈՒԹԻՒՆ, գ. *Shasu* վարմունք՝ արարք:

1. **ԼԱՃ**, Տ. Լակ:

+ 2. **ԼԱՃ**, գ. Մանչ տղայ:

+ **ԼԱՃԻԿ**, գ. Փոքր լաճ:

1. **ԼԱՄԱՅ**, գ. (Կենդ.) Որոճող չորքոտանի ուղտերի ընտանիքից:

2. **ԼԱՄԱՅ**, (թիբետերէն պետ, կմ երկնային մայր), գ. Հոգեւոր անձ, կրօնաւոր:

ԼԱՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բուդդայականութեան մի ճիւղ:

ԼԱՄԲԱԿ } գ. Քթոցի, կովկիթի եւն

ԼԱՄԲԱՅ } չուանը:

+ **ԼԱՄԲԻԿ**, գ. Բնչ-որ կենդանի:

+ **ԼԱՄՈՒԿ**, գ. Տղայ, որդի. յատկապէս՝ թուրքի կմ քրդի երեխայ:

ԼԱՄՊ, գ. Ջանազան ձեւի եւ յօրինուածքի անօթ՝ բնակարանները լուսաւորելու համար:

ԼԱՄՊԻԿ, գ. Փոքր լամպ:

+ **ԼԱՄՓՈՒՇ**, ան. Հաստ ու կոպիտ:

+ **ԼԱՅԼԱՅ**, Օրօր, օրօրոցի երգ:

ԼԱՅՆ, ան. Երկայնութեան հակառակ ուղղութեամբ տարածուած:

ԼԱՅՆԱԲԱՐ, մկ. Լայն կերպով:

ԼԱՅՆԱԲԱՅ, ան. Լայն բացուած:

ԼԱՅՆԱԲԵՐԱՆ, ան. Բերանը լայն:

ԼԱՅՆԱԳԼՈՒԽ, ան. Լայն գլխով:

ԼԱՅՆԱԴԵՄ, ան. Դէմքը լայն:

ԼԱՅՆԱԴԻՐ, ան. Լայն դիրքով:

ԼԱՅՆԱԹԱԹ, ան. Լայն թայթերով:

ԼԱՅՆԱԹԱՓ, ան. Մեծ թափ ունեցող:

ԼԱՅՆԹԵՒ, ան. Լայն թելերով:

ԼԱՅՆԱԹԻԿՈՒՆՔ, ան. Լայն թիկունքով, թիկնաւէտ:

ԼԱՅՆԱԼԱՆՁ, ան. Լանջը լայն:

ԼԱՅՆԱԼԻՃ, ան. Որի աղէղի երկու ծայրն իրարից շատ են հեռացած:

* **ԼԱՅՆԱԼԻՐ**, ան. Լայն տարածուած:

<p>* ԼԱՅՆԱՆՈՐՀՈՒՐԴ, ած. Երկայնա- միտ:</p> <p>ԼԱՅՆԱՍՏԻԱԼ, ած. Ընդարձակ:</p> <p>ԼԱՅՆԱՍՏԻՐ, ած. Լայն ծիր ունեցող:</p> <p>ԼԱՅՆԱԿԱԶՄ, ած. Լայն կազմուածքով՝ կազմուածք ունեցող:</p> <p>ԼԱՅՆԱԿԱՍԱՐ, ած. Լայն գօտի ունե- ցող:</p> <p>ԼԱՅՆԱԿԱՆ, S. Լայն:</p> <p>ԼԱՅՆԱԿԶԱԿ, ած. Կզակը լայն:</p> <p>ԼԱՅՆԱԿՈՎՈՐԴ, ած. Լայն կոկորդ ունեցող:</p> <p>ԼԱՅՆԱԿՈՂ, ած. Լայն՝ ուժեղ կողեր ունեցող:</p> <p>ԼԱՅՆԱԿՏԱԻ, ած. Մեծ կտաւի վրայ արուած (նկար):</p> <p>ԼԱՅՆԱԿՏՈՒՅ, ած. Լայն կտուց ունե- ցող:</p> <p>ԼԱՅՆԱԿՕՍ, ած. Որի ախօսը լայն է:</p> <p>ԼԱՅՆԱՀԱՆՃԱՐ, ած. Լայն հանճար ունեցող:</p> <p>* ԼԱՅՆԱՁԻԳ, ած. Լայն ձգուած, տա- րածուած:</p> <p>ԼԱՅՆԱՃԱԿԱՍ, ած. Լայն ճակատ ունե- ցող:</p> <p>ԼԱՅՆԱՄԱՐՄԻՆ, ած. Լայն մարմին ունեցող:</p> <p>ԼԱՅՆԱՆԱԼ, չբ. Լայն՝ ընդարձակ դառ- նայ:</p> <p>ԼԱՅՆԱՆԻՍ, ած. Լայն նստուածք ու- նեցող:</p> <p>* ԼԱՅՆԱՇՈՒՐԹ, ած. Շրթունքը լայն:</p> <p>* ԼԱՅՆԱՊԱՏԱՌ, ած. Լայն պատառ- ուածք ունեցող:</p> <p>ԼԱՅՆԱՊԱՐԱՆՈՑ, ած. Լայն պարանոց ունեցող:</p> <p>ԼԱՅՆԱՍԱՂԱՐԹ, ած. Լայն սաղարթ ունեցող, սաղարթախիտ:</p> <p>ԼԱՅՆԱՍԵՐՄԱՆԻ, ած. Լայն սերմ ու- նեցող:</p> <p>ԼԱՅՆԱՍՓԻՒՌ, ած. Լայն սփռուած:</p> <p>ԼԱՅՆԱՏԱՐԱՍ, ած. Լայն տարածուած՝</p>	<p>բացուած:</p> <p>ԼԱՅՆԱՏԱՐԱՍՈՒԹԻՒՆ, գ. Լայնատա- րած լինելը:</p> <p>ԼԱՅՆԱՏԱՐԸ, ած. Լայն տարրերով, լայն, ընդարձակ:</p> <p>ԼԱՅՆԱՏԵՂ, ած. Լայն նստելատեղ(եր) ունեցող:</p> <p>ԼԱՅՆԱՏԵՍՈՒԹԻՒՆ, գ. Շրջահայեա- ցութիւն:</p> <p>ԼԱՅՆԱՏԵՐԵԻՒ, գ. (Բուս.) Լայն տերեւ- ներ ունեցող, լայնասաղարթ ծառ:</p> <p>ԼԱՅՆԱՐՁԱԿ, ած. մկ. Լայն, ընդարձակ լայնատարած:</p> <p>ԼԱՅՆԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ, գ. Լայնարձակ լինելը:</p> <p>ԼԱՅՆԱՅՈՒՄ, գ. Լայնանայր, լայնաց- նելը:</p> <p>ԼԱՅՆԱՓՈՂՈՑ, ած. Լայն փողոցներ ունեցող:</p> <p>ԼԱՅՆԵԶՐ, ած. Լայն եզրեր ունեցող:</p> <p>ԼԱՅՆԵԼ, նբ. Լայնացնել:</p> <p>ԼԱՅՆԵՂՈՒՆԳ, ած. Լայն եղունգ ունե- ցող:</p> <p>ԼԱՅՆԵՐԵՍ, S. Լայնաղէմ:</p> <p>+ ԼԱՅՆԿԵԿ, ած. Աւելի լայն:</p> <p>* ԼԱՅՆՈՂՆ, ած. Լայն ողն կմ ողեր ունեցող:</p> <p>* ԼԱՅՆՈՏՆ, ած. Լայն ոտք ունեցող:</p> <p>* ԼԱՅՆՈՐՈՎԱՅՆ, ած. Լայն որովայն՝ փոք ունեցող:</p> <p>ԼԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Լայն լինելը:</p> <p>* ԼԱՅՆՈՒՄ, գ. Լայնելը:</p> <p>+ ԼԱՅՆՈՒԵՆ, ած. Լայն ռելս ունեցող, լայնաբերան:</p> <p>ԼԱՅՆՄԻՐՏ, ած. Միրտը լայն:</p> <p>+ ԼԱՅՆՈՒՍԾՔ, գ. Բաւականաչափ լայնութիւն: Հկր. Նեղուածք:</p> <p>ԼԱՅՆՕՐԷՆ, մկ. Լայն կերպով:</p> <p>ԼԱՆԹԱՆ, գ. (Քիմ.) Պարզ մետաղական հողային մարմին:</p> <p>+ ԼԱՆԿՈՒ-ԼԱՆԿՈՒ, մկ. Կաղիկաղ:</p> <p>ԼԱՆԶ, գ. Կուրծք:</p>
---	---

ԼԱՆՋԱԲԱՑ, ան. մկ. Կուրծքը բաց:
ԼԱՆՋԱԳԵՂ, ան. Կուրծքը գեղեցկացնող:
*** ԼԱՆՋԱԶԳԵՍՏ**, գ. Կանացի զգեստ, որ ծածկում է լանջը:
ԼԱՆՋԱԽԱՉ, գ. Ականակուռ խաչ՝ որը հոգեւորականները կրում են լանջի վրայ:
ԼԱՆՋԱԿԱՆ, ան. Լանջին յատուկ:
*** ԼԱՆՋԱԿԻՑ**, ան. Լանջ լանջի կցած, գրկախառնում:
ԼԱՆՋԱԿՈՂՄ, գ. Լերան լանջ՝ կուրծք:
ԼԱՆՋԱՉԻՒՆ, գ. Սարի լանջի ձինը:
ԼԱՆՋԱՄԱՇԿ } S. Լանջաթաղանթ:
ԼԱՆՋԱՄԻՉ }
ԼԱՆՋԱՆՇԱՆ, գ. Կուրծքի վրայ կրելու պատուանշան:
ԼԱՆՋԱՊԱՆԱԿ, գ. Լանջը պահպանելու գրահ, կուրծքի պահպանակ:
*** ԼԱՆՋԱՏԵՍԻՆ**, ան. Լանջի տեսք նմանութիւն ունեցող:
